

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՌՑԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄՇԱԿՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2020



**Երեխաների առցանց պաշտպանության
ուղեցույց՝ քաղաքականություն
մշակողների համար**

2020



ԳՄՍՀ (ISBN)

«Երեխաների առցանց պաշտպանության ուղեցույց՝ նախատեսված քաղաքականություն մշակողների համար» հրատարակության [անգլերեն տարբերակի համար:](#)

978-92-61-30121-7 (Թղթային տարբերակ)

978-92-61-30451-5 (Էլեկտրոնային տարբերակ)

978-92-61-30111-8 (EPUB տարբերակ)

978-92-61-30461-4 (Mobil տարբերակ)

Թարգմանությունը չի ստեղծվել Հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ) կողմից և չպետք է համարվի ՀՄՄ-ի պաշտոնական թարգմանություն: ՀՄՄ-ն պատասխանատվություն չի կրում թարգմանության բովանդակության կամ սխալի համար:

Այս թարգմանությունն իրականացվել է «Հայաստանի օպերատորների միություն» ՀԿ-ի կողմից՝ Հեռահաղորդակցության միջազգային միության «Երեխաների առցանց պաշտպանություն» համաշխարհային ծրագրի շրջանակներում: Սույն ուղեցույցում ներկայացված տեսակետների համար «Հայաստանի օպերատորների միություն» ՀԿ-ն պատասխանատվություն չի կրում:

Հեռահաղորդակցության միջազգային միության «Երեխաների առցանց պաշտպանություն» համաշխարհային ծրագրի մասին մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ հետևյալ [հղումով:](#)

ՀՄՄ-ի «Երեխաների առցանց պաշտպանության ուղեցույց՝ նախատեսված քաղաքականություն մշակողների համար» ուղեցույցի պաշտոնական տարբերակը ՄԱԿ-ի վեց պաշտոնական լեզուներով հասանելի է հետևյալ [հղումով:](#)



Բովանդակություն

Շնորհակալագրեր	4
Ուղերձ	6
Նախաբան	8
1. Փաստաթղթի ակնարկ	13
1.1 Նպատակը	13
1.2 Շրջանակը	14
1.3 Համընդհանուր սկզբունքներ	14
1.4 Այս ուղեցույցների կիրառումը	13
2. Ներածություն	17
2.1 Ինչ է երեխաների առցանց պաշտպանությունը	20
2.2 Երեխաները թվային աշխարհում	21
2.3 Տեխնոլոգիաների ազդեցությունը երեխաների թվային փորձի վրա	24
2.4 Հիմնական սպառնալիքներն առցանց տիրույթում գտնվող երեխաների համար ..	25
2.5 Հիմնական վնասները երեխաների համար առցանց	30
2.6 Խոցելի խնդիրներ ունեցող երեխաներ	39
2.7 Երեխաների ընկալումներն առցանց ռիսկերի մասին	43
3. Երեխաների առցանց պաշտպանության ազգային ռազմավարության նախապատրաստում	44
3.1 Դերակատարներ և շահագրգիռ կողմեր	44
3.2 Երեխաների առցանց պաշտպանության վերաբերյալ առկա պատասխանները ..	52
3.3 Առցանց վնասների պատասխանների օրինակներ	57
3.4 Երեխաների առցանց պաշտպանության ազգային ռազմավարության առավելությունները	57
4. Առաջարկություններ շրջանակների և իրականացման համար	58
4.1 Շրջանակային առաջարկություններ	58
4.2 Իրականացման վերաբերյալ առաջարկություններ	64
5. Երեխաների առցանց պաշտպանության ազգային ռազմավարության մշակում	68
5.1 Ազգային ստուգաթերթ	68
5.2 Հարցերի օրինակներ	78
6. Տեղեկատվական նյութ	79



Շնորհակալագրեր

Այս ուղեցույցները մշակվել են Հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ), տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ), ինչպես նաև երեխաների (առցանց) պաշտպանության ոլորտում գործող առաջատար հաստատությունների հեղինակներից կազմված աշխատանքային խմբի կողմից և ներառել են հետևյալ կազմակերպությունները.

ECPAT միջազգային, Գլոբալ մանկական առցանց ցանց (Global Kids Online network), «Վերջ երեխաների հանդեպ բռնությանը» գլոբալ գործընկերություն, HABLATAM նախագիծ, Ապահով համացանցի կենտրոններ Insafegանց (Insafe), ԻՆՏԵՐՊՈԼ, Անհայտկորած և շահագործման ենթարկված երեխաների որոնման միջազգային կենտրոն (ICMEC), Հաշմանդամների միջազգային դաշինք, Հեռահաղորդակցության միջազգային միություն (ՀՄՄ), «Ինտերնետի դիտման հիմնադրամ» (IWF), Լոնդոնի տնտեսագիտության դպրոց (the London School of Economics), Երեխաների նկատմամբ բռնության հարցերով գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի և երեխաների վաճառքի և սեռական շահագործման հարցերով հատուկ զեկուցողի գրասենյակ, PrivatelySA ընկերություն, RNW Մեդիա, Միացյալ Թագավորության Ապահով ինտերնետ կենտրոններ, WePROTECT գլոբալ դաշինք (WPGA) և Համաշխարհային մանկական փոխպատվաստման հիմնադրամն ԱՄՆ-ում:

Աշխատանքային խումբը ղեկավարում էր Դեյվիդ Ռայթը (Միացյալ Թագավորության անվտանգ ինտերնետ կենտրոններ/ SWGfL), համակարգում էր Ֆենի Ռոտինոն (ՀՄՄ): Այս ուղեցույցների իրականացումն անհնար կլիներ առանց հեղինակների շահագրգռվածության և մեծ նվիրումի: Անգնահատելի ներդրում են ունեցել նաև COFACE-Եվրոպայի ընտանիքներ-ի (COFACE-Families Europe), Եվրոպայի խորհրդի, Ավստրալիայի էլեկտրոնային անվտանգության հարցերով հանձնակատարի, Եվրոպական հանձնաժողովի, էլեկտրոնային համաշխարհային խմբի (e-WWG), ՏՀՁԿ-ի, Երիտասարդությունը և մեդիան Հարվարդի համալսարանի Բերքման Բլեյնի Ինտերնետի և հասարակության կենտրոնի, ինչպես նաև առանձին ազգային կառավարություններ և ոլորտի շահագրգիռ կողմեր, որոնք ունեն ընդհանուր նպատակ, այն է՝ համացանցը երեխաների և երիտասարդների համար ավելի լավ և ապահով վայր դարձնելը:

ՀՄՄ-ն երախտապարտ է հետևյալ գործընկերներին, ովքեր ներդրել են իրենց արժեքավոր ժամանակն ու պատկերացումները/մոտեցումները՝ (կազմակերպությունները նշված են ըստ այբբենական կարգի).

- Մարտին Շմալցրիդ (COFACE-Եվրոպայի ընտանիքներ)
- Լիվիա Ստոյկա (Եվրոպայի խորհուրդ)
- Ջոն Կար(ECPAT միջազգային)
- Ջուլիա Ֆոսսի և Էլլա Սերի (էլեկտրոնային անվտանգության հարցերով հանձնակատար)

- Մանուելա Մարտա (Եվրոպական Հանձնաժողով)
- Սալմա Աբասի (Էլեկտրոնային համաշխարհային խումբ)
- Էմի Կրոկեր և Սերենա Թոմագինո («Վերջ երեխաների հանդեպ բռնությանը» գլոբալ գործընկերություն)
- Լիոնել Բրոսի (HABLATAM)
- Սանդրա Մարչենկո (Անհայտ կորած և շահագործման ենթարկված երեխաների որոնման միջազգային կենտրոն (ICMEC))
- Կարլ Հոփվուդ (Ապահով ինտերնետ կենտրոններ (Insafe)¹)
- Լյուսի Ռիչարդսոն (Հաշմանդամների միջազգային դաշինք)
- Մեթյու Դոմպիեր (Ինտերպոլ)
- Ֆենի Ռոտինո (ՀՄՄ)
- Թես Լեյլանդ («Ինտերնետի դիտման հիմնադրամ» (IWF))
- Սոնյա Լիվինգսթոն (Լոնդոնի տնտեսագիտության դպրոց և համաշխարհային առցանց հարթակ երեխաների համար)
- Էլետրա Ռոնչի (ՏՀՁԿ)
- Մանուսդե Բարրա (Երեխաների նկատմամբ բռնության հարցերով հատուկ ներկայացուցչի Գլխավոր քարտուղարի գրասենյակ)
- Դիպակ Թեվարի (Privately SA)
- Պավիտրա Ռեմ (RNW Մեդիա)
- Մոուդ դե Բոեր Բուքուիչիո (Երեխաների վաճառքի և սեռական շահագործման հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող)
- Դեյվիդ Ռայթ (Միացյալ Թագավորության անվտանգ ինտերնետ կենտրոններ/SWGfL)
- Իեն Դրենան և Սյուզաննա Ռիչմոնդ (WePROTECT գլոբալ դաշինք)
- Լինա Ֆերնանդես և դոկտոր Ջոաննա Ռուբինշտեյն (Համաշխարհային մանկական փոխապատվաստման հիմնադրամը ԱՄՆ-ում)
- Սանդրա Կորտեսի (Երիտասարդություն և մեդիա)

¹ Միացնելով Եվրոպան (CEF), Եվրոպական դպրոցական ցանցը, Եվրոպական հանձնաժողովի անունից վարում է «Ավելի լավ ինտերնետ» երեխաների համար հարթակը, որը ներառում է Եվրոպական անվտանգ ինտերնետ կենտրոնների Insafe ցանցի համակարգումը: Լրացուցիչ տեղեկությունները հասանելի են հետևյալ հղմամբ՝ <https://www.betterinternetforkids.eu/>

Ուղերձ

Մի աշխարհում, որտեղ համացանցը ներթափանցում է ժամանակակից կյանքի գրեթե բոլոր ոլորտները, երիտասարդ օգտատերերին առցանց անվտանգ պահելը դարձել է ավելի ու ավելի հրատապ խնդիր յուրաքանչյուր երկրի համար: ՀՄՄ-ն մշակել է Երեխաների առցանց պաշտպանության ուղեցույցների իր առաջին փաթեթը դեռևս 2009 թվականին: Այդ օրերից ի վեր համացանցն անճանաչելիորեն զարգացել է: Թեև այն դարձել է երեխաների համար խաղալու և սովորելու անսահման հարուստ ռեսուրս, բայց նաև շատ ավելի վտանգավոր վայր է նրանց համար, եթե չկա հետևողականություն:

Այսօրվա երեխաները բախվում են բազմաթիվ ռիսկերի՝ գաղտնիության հարցերից մինչև բռնի և անպատշաճ բովանդակություն, համացանցային խաբեբաներ, առցանց սեռական բռնություն, շահագործում և հետապնդում:

Բացի այդ, ՔՈՎԻԴ-19 գլոբալ համաճարակը պատճառ հանդիսացավ, որ երեխաների թվի աճ գրանցվի և առաջին անգամ նրանք միանան առցանց աշխարհին՝ ուսումը շարունակելու և սոցիալական փոխգործակցությունը պահպանելու համար: Վիրուսի պատճառով շատ փոքր երեխաներ սկսեցին առցանց շփվել ավելի վաղ, քան պլանավորել էին ծնողները, իսկ աշխատանքային պարտավորություններին ձեռնամուխ լինելու անհրաժեշտության պատճառով էլ շատ ծնողներ չկարողացան վերահսկել իրենց երեխաներին՝ թողնելով նրանց անպատշաճ բովանդակության հասանելիության կամ երեխաների նկատմամբ սեռական ոտնձգության նյութերի, հանցագործների թիրախում լինելու վտանգի ներքո:

Ավելի քան երբևէ, երեխաներին առցանց անվտանգ պահելը պահանջում է համագործակցային և համակարգված միջազգային արձագանք՝ պահանջելով մեծ թվով շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավվածություն և աջակցություն, այդ թվում՝ մասնավոր հատվածի հարթակները, ծառայություններ մատուցողները, ցանցային օպերատորները, կառավարությունները, քաղաքացիական անձինք և հասարակությունը:

Սա գիտակցելով՝ 2018 թվականին ՀՄՄ անդամ երկրները պահանջեցին ավելին, քան նախկինում պարբերաբար ձեռնարկվող ԵԱՊ ուղեցույցների ժամանակին թարմացումները: Փոխարենը, այս նոր վերանայված ուղեցույցները վերաիմաստավորվել են, վերագրվել և վերափոխվել սկզբից մինչև վերջ՝ արտացոլելու թվային լանդշաֆտի շատ նշանակալի տեղաշարժերը, որոնցում հայտնվում են երեխաները:

Բացի թվային տեխնոլոգիաների և հարթակների նոր զարգացումներին արդյունավետ արձագանքելուն, այս նոր հրատարակությունն անդրադառնում է մի կարևոր բացթողման, իրավիճակի, որին բախվում են հաշմանդամություն ունեցող երեխաները, որոնց համար առցանց աշխարհն առաջարկում է սոցիալական լիարժեք և լիիրավ մասնակցություն:

Ընդգրկվել է նաև միգրանտ երեխաների և այլ խոցելի խմբերի հատուկ կարիքների վերաբերյալ տեղեկատվություն:

Մենք հուսով ենք, որ քաղաքականություն մշակողների համար այս ուղեցույցներն ամուր հիմք կլինեն և կմշակվեն ներառական, բազմա-շահառու ազգային ռազմավարություններ, այդ թվում՝ երեխաների հետ բաց խորհրդակցություններն ու երկխոսությունները, որոնք նպատակաուղղված կլինեն միջոցառումներ և ավելի արդյունավետ գործողություններ մշակելու համար:

Այս նոր ուղեցույցները մշակելիս ՀՄՄ-ն և նրա գործընկերները ձգտել են ստեղծել շատ կիրառելի, ճկուն և հարմարվող շրջանակ, որը կներառի միջազգային չափանիշները և ընդհանուր նպատակները, մասնավորապես՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան և ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները:

ՀՄՄ-ն ունի գլոբալ համախմբող դեր, իսկ ես հպարտ եմ փաստով, որ այս վերանայված ուղեցույցները մեր համատեղ ջանքերի արդյունք են և համահեղինակվել են միջազգային լայն հանրության փորձագետների և բազմաթիվ շահագրգիռ անձանց կողմերից:

Ուրախ եմ նաև ներկայացնելու մեր նոր ԵԱՊ թալիսմանին՝ Սանգոյին, ընկերասեր, աշխույժ և անվախ կերպար, որը ստեղծվել է ամբողջությամբ մի խումբ երեխաների կողմից և հանդիսանում է ՀՄՄ-ի միջազգային երիտասարդության իրազեկման նոր ծրագրի մի մաս:

Մի ժամանակաշրջանում, որտեղ ավելի ու ավելի շատ երիտասարդներ են հայտնվում առցանց, ՀՄՄ-ի այս ուղեցույցներն ավելի կարևոր են, քան երբևէ: Քաղաքականություն մշակողները, ոլորտը, ծնողներն ու մանկավարժները, և հենց իրենք՝ երեխաները, բոլորն էլ կենսական դեր ունեն: Ես, ինչպես միշտ, երախտապարտ եմ աջակցության համար և անհամբերությամբ սպասում եմ մեր սերտ համագործակցության շարունակությանն այս կարևոր խնդրի շուրջ:



Դորին Բոգդան-Մարտին

Հեռահաղորդակցության Ջարգացման Գրասենյակի տնօրեն

Նախաբան

Երեսուն տարի առաջ գրեթե բոլոր կառավարությունները պարտավորվել են հարգել, պաշտպանել և առաջ մղել երեխաների իրավունքները: Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (ՄԿԿ) պատմության մեջ ամենաշատ երկրիների կողմից վավերացված մարդու իրավունքների միջազգային պայմանագիրն է: Թեև վերջին երեք տասնամյակների ընթացքում զգալի առաջընթաց է գրանցվել, սակայն կարևոր մարտահրավերներ են մնացել, և երեխաների համար ռիսկային ոլորտներ են ի հայտ եկել:

2015 թվականին բոլոր ազգերը կրկին հայտնեցին իրենց հանձնառությունը երեխաների հանդեպ 2030 թվականի օրակարգի և կայուն զարգացման 17 համընդհանուր նպատակների (ԿՁՆ) վերաբերյալ: Օրինակ՝ նպատակ 16.2-ը կոչ է անում մինչև 2030 թվականը վերջ տալ երեխաների նկատմամբ բռնություններին, շահագործմանը և բոլոր տեսակի բռնություններին ու խոշտանգումներին: Սակայն երեխաներին պաշտպանելն ընդհանուր խնդիր է 17 ԿՁՆ-ներից 11-ի շրջանակներում: ՅՈՒՆԻՍԵՖ-ը երեխաներին դնում է 2030 թվականի օրակարգի կենտրոնում, ինչպես պատկերված է Նկար 1-ում:

Նկար 1. Երեխաները, ՏՀՏ- և ԿՁՆ-ներ



Children central role in



2030-ի Կայուն զարգացման օրակարգն ընդունում է, որ ՏՀՏ-ները կարող են լինել ԿՁՆ-ներին հասնելու հիմնական հնարավորությունը: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) տարածումը և գլոբալ փոխկապակցվածությունը ներուժ ունի արագացնելու մարդկային առաջընթացը, կամրջելու թվային անջրպետը և զարգացնելու գիտելիքի հասարակությունները: Այն նաև սահմանում է կրթության ոլորտում կայուն զարգացման համար ՏՀՏ-ների օգտագործման հատուկ թիրախներ (նպատակ 4), գենդերային հավասարություն (նպատակ 5), ենթակառուցվածքներ (նպատակ 9 – համընդհանուր

և մատչելի ինտերնետ հասանելիություն) և նպատակ 17 – գործընկերություններ և իրականացման միջոցներ²:

ՏՀՏ-ներն արդեն կատարել են իրենց քայլը և հզորացրել են միլիարդավոր անհատների ամբողջ աշխարհում՝ հասանելիություն ապահովելով կրթական ռեսուրսներին և առողջապահությանը, ինչպես նաև այնպիսի ծառայությունների, ինչպիսիք են էլեկտրոնային կառավարումը, սոցիալական մեդիան և այլն:

Այսպիսով՝ Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների առաջընթացը երեխաներին և երիտասարդներին՝ շփվելու, կապվելու, կիսվելու, սովորելու, տեղեկատվություն ստանալու և իրենց կարծիքն արտահայտելու համար աննախադեպ հնարավորություններ է ստեղծում, որոնք ազդում են իրենց և համայնքների վրա: Սակայն համացանցի և շարժական տեխնոլոգիաների ավելի լայն և հեշտ հասանելիությունը նաև զգալի մարտահրավերներ է ստեղծում երեխաների անվտանգության և բարեկեցության համար՝ ինչպես առցանց, այնպես էլ անցանց:

Կառավարությունները, քաղաքացիական հասարակությունը, տեղական համայնքները, միջազգային կազմակերպությունները և ոլորտը պետք է միավորվեն ընդհանուր նպատակի համար, որպեսզի կարողանան նվազեցնել թվային աշխարհի ռիսկերը և միաժամանակ հնարավորություն ընձեռեն ավելի շատ երեխաների և երիտասարդների քաղել դրա օգուտները: Քաղաքականություն մշակողները պետք է հատկապես հասնեն միջազգային նպատակին՝ առցանց անվտանգ պահելով երեխաներին:

2008 թվականի նոյեմբերին Հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ) կողմից մեկնարկեց Երեխաների առցանց պաշտպանության (ԵԱՊ) նախաձեռնությունը որպես բազմաշահառու միջազգային նախաձեռնություն՝ ՏՀՏ-ների արագ զարգացման և երեխաների պաշտպանության մարտահրավերներին արձագանքելու նպատակով: Այս նախաձեռնությունը նպատակ ունի համախմբել գլոբալ համայնքի բոլոր կողմերի գործընկերներին՝ ստեղծելու անվտանգ և հզոր առցանց փորձ ամբողջ աշխարհի երեխաների համար:

Ավելին, Հեռահաղորդակցության միջազգային միության լիազոր կոնֆերանսը, որը տեղի ունեցավ Դուբայում 2018 թվականին, վերահաստատեց ԵԱՊ նախաձեռնության կարևորությունը՝ ընդունելով այն որպես իրազեկվածության բարձրացման, լավագույն փորձի փոխանակման և անդամ պետություններին, հատկապես զարգացող երկրներին օգնություն և աջակցություն ցուցաբերելու հարթակ՝ ԵԱՊ ճանապարհային քարտեզների մշակման և իրականացման գործում:

² ՄԱԶԾ, Կայուն զարգացման նպատակներ | ՄԱԶԾ, undp.org, հասանելի է դարձել 2020 թվականի հունվարի 29-ին, <https://www.undp.org/content/undp/en/home/sustainable-development-goals.html>; Հուլիս ժառ, «Ինչու են ՏՀՏ-ներն այդքան կարևոր ԿԶՆ-ներին հասնելու համար», ՀՄՄ, ՀՄՄ նորությունների ամսագիր, 48, հասանելի է դարձել 2020 թվականի հունվարի 29-ին, https://www.itu.int/en/itu/news/Documents/2017/2017-03/2017_ITUNews03-en.pdf

Այն նաև ճանաչեց երեխաների առցանց պաշտպանության կարևորությունը ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոնվենցիայի և մարդու իրավունքների այլ պայմանագրերի շրջանակներում՝ խրախուսելով համագործակցությունը երեխաների առցանց պաշտպանության գործում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի միջև:

Համաժողովը ճանաչեց Կայուն զարգացման 2030 թվականի օրակարգը՝ Կայուն զարգացման նպատակներում (ԿՁՆ) անդրադառնալով երեխաների առցանց պաշտպանության տարբեր ասպեկտներին, մասնավորապես՝ ԿՁՆ 1, 3, 4, 5, 9, 10 և 16; Այն հետագայում ճանաչեց 175-րդ բանաձևը՝ (Rev. Դուբայ, 2018) հաշմանդամություն ունեցող անձանց և հատուկ կարիքներ ունեցող անձանց համար հեռահաղորդակցության/տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (S&S) հասանելիության մասին և Համաշխարհային հեռահաղորդակցության զարգացման 67-րդ բանաձևը՝ երեխաների առցանց պաշտպանության գործում ՀՄՄ հեռահաղորդակցության զարգացման սեկտորի (ՀՄՄ-D) դերի մասին:

2019 թվականի վերջին ՀՄՄ/ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կայուն զարգացման լայնաշերտ հաղորդակցության հանձնաժողովը հրապարակեց Երեխաների առցանց անվտանգության զեկույցը՝ գործող առաջարկներով՝ երեխաների համար համացանցն ավելի անվտանգ դարձնելու վերաբերյալ:

Երեխաների առցանց պաշտպանության վերաբերյալ ուղեցույցների առաջին փաթեթը թողարկվել է 2009 թվականին ՀՄՄ-ի կողմից՝ ԵԱՊ նախաձեռնության համատեքստում: Վերջին տասնամյակի ընթացքում ԵԱՊ ուղեցույցները թարգմանվել են բազմաթիվ լեզուներով և աշխարհի շատ երկրներում օգտագործվել որպես ուղեցույց՝ երեխաների առցանց պաշտպանության հետ կապված ճանապարհային քարտեզների և ազգային ռազմավարությունների համար:

Նրանք ծառայել են ազգային պետական մարմիններին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, երեխաների խնամքի հաստատություններին, արդյունաբերությանը և երեխաների առցանց պաշտպանության այլ շահագրգիռ կողմերին:

Ավելի կոնկրետ, ուղեցույցներն օգտագործվել են նախագծման համար, երեխաների առցանց պաշտպանության ազգային ռազմավարությունների մշակման և իրականացման համար շատ անդամ երկրներում, ինչպիսիք են՝ Կամերունը, Գաբոնը, Գամբիան, Գանան, Քենիան, Սիերա Լեոնեն, Ուգանդան և Չամբիան Աֆրիկայի տարածաշրջանում, Բահրեյնը և Օմանը արաբական տարածաշրջանում, Բրունեյ, Կամբոջա Կիրիբատի, Ինդոնեզիա, Մալայզիա, Մյանմար և Վանուատու Ասիա-Խաղաղ օվկիանոսյան տարածաշրջանում, իսկ Եվրոպայի տարածաշրջանում՝ Բոսնիան, Վրաստանը, Մոլդովան, Մոնտենեգրոն, Լեհաստանը և Ուկրաինան:

Ավելին, ուղեցույցները հիմք են հանդիսացել տարածաշրջանային միջոցառումների համար, ինչպիսիք են՝ Երեխաների առցանց պաշտպանության մասին տարածաշրջանային կոնֆերանսը (ԵԱՊՏԿ). «Ապագա թվային քաղաքացիների հզորացումը» միջոցառումը Կամպալայում, Ուգանդա (2014) և Երեխաների առցանց պաշտպանության վերաբերյալ Հարավարևելյան Ասիայի պետությունների ասոցիացիայի տարածաշրջանային համաժողովը, որը տեղի է ունեցել 2020 թվականին Բանգկոկում, Թայլանդ:

Համաձայն [179 բանաձևի](#)՝ (Rev. Դուբայ, 2018) ՀՄՄ-ն համագործակցել է ԵԱՊ նախաձեռնության գործընկերների և շահագրգիռ կողմերի հետ, հանձնարարություն է ստացել թարմացնել ուղեցույցների չորս փաթեթը՝ հաշվի առնելով հեռահաղորդակցության ոլորտում տեխնոլոգիական զարգացումներն, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների և երեխաների վերաբերյալ ուղեցույցները:

Այս գործընթացի արդյունքում ուղեցույցները նշանակալիորեն թարմացվել և վերանայվել են փորձագետների և համապատասխան շահագրգիռ անձանց կողմից՝ ստեղծելով առաջարկությունների լայն փաթեթ՝ երեխաներին թվային աշխարհում անվտանգ պահելու համար: Դրանք բազմաթիվ շահագրգիռ կողմերի համատեղ ջանքերի արդյունք են՝ օգտագործելով երեխաների առցանց պաշտպանության ոլորտում ամբողջ աշխարհի մասշտաբով բազմաթիվ կազմակերպությունների և անհատների գիտելիքները, փորձը և հմտությունները: Նրանք նպատակ ունեն սպագա սերունդների համար անվտանգ և սպառնալի կիբերաշխարհի հիմքեր ստեղծել: Այդ իսկ պատճառով նախատեսված են որպես նախագիծ, որը կարող է հարմարեցվել և օգտագործվել ազգային կամ տեղական սովորույթներին և օրենքներին համապատասխան: Ավելին, այս ուղեցույցներն անդրադառնում են մինչև 18 տարեկան բոլոր երեխաների և երիտասարդների խնդիրներին՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր տարիքային խմբի տարբեր կարիքները: Նրանց նպատակ է նաև լուծել տարբեր կենսապայմաններում գտնվող երեխաների և հատուկ կարիքներով ու հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքները: Ուղեցույցները նաև ուժեղացնում են երեխաների առցանց պաշտպանության շրջանակը՝ անդրադառնալով նրանց առցանց հանդիպող բոլոր հնարավոր ռիսկերին, սպառնալիքներին և վնասներին, ինչպես նաև մանրակրկիտ հավասարակշռում են այն առավելությունները, որոնք թվային աշխարհը կարող է բերել երեխաների կյանք:

Հույս կա, որ այս ուղեցույցները ոչ միայն կհանգեցնեն ավելի ներառական տեղեկատվական հասարակության կառուցմանը, այլև հնարավորություն կտան ՀՄՄ անդամ պետություններին կատարել իրենց պարտավորությունները երեխաների իրավունքների պաշտպանության և իրականացման ուղղությամբ, ինչպես ամրագրված է

Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայում³, որն ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1989 թվականի նոյեմբերի 20-ի 44/25 բանաձևով և Տեղեկատվական հասարակության համաշխարհային գազաթնաժողովի (ՏՀՀԳ)⁴ արդյունքների փաստաթղթով:

Տրամադրելով/թողարկելով այս ուղեցույցները, ԵԱՊ նախաձեռնությունը կոչ է անում բոլոր շահագրգիռ կողմերին մշակել քաղաքականություններ և ռազմավարություններ, որոնք կպաշտպանեն երեխաներին կիբերտարածությունում և կնպաստեն նրանց ավելի ապահով հասանելիությանն առցանց ռեսուրսների բոլոր արտասովոր հնարավորություններին:

3 ՅՈՒՆԻՍԵՖ, «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա», [unicef.org](https://www.unicef.org), հասանելի է դարձել 2020 թվականի հունվարի 29-ին, <https://www.unicef.org/child-rights-convention>:

4 Տեղեկատվական հասարակության համաշխարհային գազաթնաժողովը (ՏՀՀԳ) անցկացվել է երկու փուլով՝ Ժնևում (2003թ. դեկտեմբերի 10-12-ը) և Թունիսում (2005թ. նոյեմբերի 16-18-ը): ՏՀՀԳ-ը եզրափակեց «մարդակենտրոն, ներառական և զարգացմանը միաված տեղեկատվական հասարակություն կառուցելու համարձակ հանձնառությամբ, որտեղ յուրաքանչյուրը կարող է ստեղծել, օգտվել, օգտագործել և կիսել տեղեկատվությունն ու գիտելիքները»:

1. Փաստաթղթի ակնարկ

1.1 Նպատակը

Ազգային կառավարությունները պարտավոր են ապահովել երեխաների պաշտպանությունն ինչպես ֆիզիկական, այնպես էլ վիրտուալ աշխարհում, քանի որ նոր տեխնոլոգիաներն այժմ ինտեգրված են երեխաների և երիտասարդների կյանքի յուրաքանչյուր ոլորտ, և այլևս իմաստ չունի փորձել կոշտ տարբերությունները պահպանել իրական աշխարհի և առցանց իրադարձությունների միջև: Այս երկուսը գնալով ավելի ու ավելի միահյուսված ու փոխկապակցված են դառնում:

Քաղաքականություն մշակողները⁵ և բոլոր այլ համապատասխան շահագրգիռ կողմերը շատ կարևոր դեր ունեն: Տեխնոլոգիաների զարգացման արագությունը նշանակում է, որ քաղաքականության մշակման ավանդական մեթոդներից շատերն այլևս չեն համապատասխանում այս նպատակին: Քաղաքականություն մշակողներից պահանջվում է մշակել օրենսդրական շրջանակ, որը հարմարեցված է, ներառական և հարմար է արագ փոփոխվող թվային դարաշրջանին՝ երեխաներին առցանց պաշտպանելու նպատակով:

Այս ուղեցույցների նպատակն է ՀՄՄ անդամ պետությունների քաղաքականություն մշակողներին առաջարկել օգտատիրոջ համար ճկուն և հարմար շրջանակ՝ հասկանալու և գործելու իրենց իրավական պարտավորությունների համաձայն՝ ապահովելու երեխաների պաշտպանությունն ինչպես իրական, այնպես էլ ֆիզիկական և վիրտուալ աշխարհում:

Ուղեցույցներն անդրադառնում են քաղաքականություն մշակողների համար մի քանի կարևոր հարցերի.

1. Ինչ է երեխայի առցանց պաշտպանությունը:
2. Ինչո՞ւ պետք է քաղաքականություն մշակողը հոգ տանի երեխաների առցանց պաշտպանության մասին:
3. Ո՞րն է իմ երկրի իրավական, սոցիալ-քաղաքական և զարգացման համատեքստը:
4. Ինչպե՞ս պետք է քաղաքականություն մշակողները սկսեն դիտարկել և ձևավորել երեխաների առցանց պաշտպանության արդյունավետ և կայուն քաղաքականություն իրենց երկրում:

Այդպիսով, ուղեցույցները հիմնվում են գոյություն ունեցող մոդելների, շրջանակների և ռեսուրսների վրա՝ առաջարկելով համատեքստ և լավ փորձի պատկերացում ամբողջ աշխարհի մասշտաբով:

⁵ Քաղաքականություն մշակողներ տերմինն այստեղ վերաբերում է բոլոր շահագրգիռ կողմերին, որոնք պատասխանատու են քաղաքականության մշակման և իրականացման համար, հատկապես՝ կառավարության ներսում:

1.2 Շրջանակը

Երեխաների առցանց պաշտպանության շրջանակն ընդգրկում է ռիսկերի լայն շրջանակ և ցանկացած վնաս, որին երեխաները ենթարկվում են առցանց և սպառնում են երեխաների անվտանգությանն ու բարեկեցությանը: Բարդ մարտահրավեր է, որին պետք է մոտենալ տարբեր տեսանկյուններից, ներառյալ՝ օրենսդրությունը, կառավարումը, կրթությունը, քաղաքականությունը և հասարակությունը:

Բացի այդ, երեխաների առցանց պաշտպանությունը պետք է հիմնված լինի ինչպես ընդհանուր, այնպես էլ երկրին հատուկ ռիսկերի, սպառնալիքների և վնասների ըմբռնումով, որոնց երեխաները բախվում են թվային միջավայրում: Սա պահանջում է հստակ սահմանումներ և միջամտություն, հստակ պարամետրերի սահմանում, որոնք ներառում և տարբերակում են հանցագործություն կազմող գործողությունները և այն գործողությունները, որոնք, թեև անօրինական չեն, այնուամենայնիվ, վտանգ են ներկայացնում երեխայի բարեկեցության համար:

Այդ նպատակով ուղեցույցները ներկայացնում են թվային միջավայրում երեխաներին սպառնացող ընթացիկ սպառնալիքների և վնասների ընդհանուր պատկերը: Արագությունը, որով զարգանում են տեխնոլոգիաները և դրա հետ կապված սպառնալիքներն ու վնասները, բերում են նրան, որ քաղաքականության մշակման ավանդական արագությունն ու մեթոդները չեն կարողանում համապատասխանել իրավիճակին: Թվային դարաշրջանում քաղաքականություն մշակողները պետք է կառուցեն իրավական և քաղաքական շրջանակներ, որոնք բավականաչափ հարմարվողական և ներառական են՝ լուծելու առկա մարտահրավերները և հնարավորինս կանխատեսելու գալիքները: Դա անելու համար անհրաժեշտ է համագործակցություն յուրաքանչյուր շահագրգիռ կողմի, այդ թվում՝ ՏՀՏ ոլորտի, հետազոտող, գիտական համայնքի, քաղաքացիական հասարակության և հենց երեխաների հետ: Այս գործընթացին կարելի է աջակցել՝ հաշվի առնելով երեխաների առցանց պաշտպանության հիմնական սկզբունքները:

1.3 Համընդհանուր սկզբունքներ

Այստեղ շարադրված են տասնմեկ խաչաձև սկզբունքներ, որոնք միասին կնպաստեն երեխաների առցանց պաշտպանության հեռանկարային և ամբողջական ազգային ռազմավարության մշակմանը:

Այս սկզբունքների հերթականությունն ավելի շուտ արտացոլում է տրամաբանական պատմությունը, քան կարևորության կարգը:

Երեխաների առցանց պաշտպանության ազգային ռազմավարությունը պետք է.

1. հիմնված լինի ամբողջական տեսլականի վրա, որը ներառում է կառավարությունը, ոլորտը և հասարակությունը,
2. արդյունքը լինի ընդհանուր թվային միջավայրի համապարփակ

ըմբռնում և վերլուծություն, որը, սակայն, պետք է համապատասխանեցվի երկրի պայմաններին և առաջնահերթություններին,

3. հետևողական լինի և հարգի երեխաների հիմնարար իրավունքները, որոնք ամրագրված են Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և այլ կարևոր միջազգային կոնվենցիաներով և օրենքներով,
4. հետևողական լինի և հարգի գոյություն ունեցող, նմանատիպ և հարակից ներպետական օրենքները և ռազմավարությունները, ինչպիսիք են երեխաների շահագործման մասին օրենքները կամ երեխաների անվտանգության ռազմավարությունները,
5. հարգի երեխաների քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները, որոնք չպետք է զոհաբերվեն պաշտպանությանը,
6. զարգանա բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությամբ՝ ներառելով երեխաներին, ինչպես նաև լուծի նրանց կարիքներն ու պարտականությունները, բավարարի փոքրամասնությունների և մարգինալացված խմբերի կարիքները,
7. նախագծված լինի տնտեսական և սոցիալական բարգավաճմանն ուղղված կառավարության ավելի լայն ծրագրերին համապատասխանելու և ՏՀՏ-ների ներդրումը կայուն զարգացման և սոցիալական ներառման մեջ առավելագույնի հասցնելու համար,
8. իր նպատակին հասնելու համար օգտագործի քաղաքականության ամենահարմար գործիքները՝ հաշվի առնելով երկրի առանձնահատկությունները,
9. սահմանվի կառավարության ամենաբարձր մակարդակում, որը պատասխանատու կլինի համապատասխան դերերի ու պարտականությունների նշանակման և բավարար մարդկային և ֆինանսական ռեսուրսների բաշխման համար,
10. օգնի ստեղծել թվային միջավայր, որին երեխաները, ծնողները/խնամակալները և շահագրգիռ կողմերը կարող են վստահել,
11. ուղղորդի շահագրգիռ կողմերի ջանքերը՝ երեխաների թվային գրագիտությունը բարձրացնելու և կրթելու համար, որպեսզի կարողանան իրենց առցանց պաշտպանել:

1.4 Այս ուղեցույցների կիրառումը

Այս ուղեցույցները հաշվի են առնում համապատասխան հետազոտությունները, գոյություն ունեցող մոդելներն ու նյութերը և հստակ առաջարկություններ են ներկայացնում երեխաների առցանց պաշտպանության ազգային ռազմավարության մշակման համար:

- Բաժին 2-ը ներկայացնում է երեխաների առցանց պաշտպանությունը և տալիս է պատկերացումներ վերջին հետազոտությունների վերաբերյալ, ներառյալ՝ նոր զարգացող տեխնոլոգիաների, երեխաների համար հիմնական սպառնալիքների և վնասների վերաբերյալ ասպեկտները:
- Բաժին 3-ը սահմանում է երեխաների առցանց պաշտպանության ազգային ռազմավարության նախապատրաստվելը՝ ներառելով համապատասխան շահագրգիռ կողմերին, առցանց սպառնալիքներին արձագանքելու առկա օրինակները և ազգային ռազմավարություն ունենալու վնասներն ու օգուտները:
- Բաժին 4-ն ընդգրկում է առաջարկություններ՝ շրջանակի և իրականացման վերաբերյալ:
- Բաժին 5-ը ներկայացնում է ազգային ստուգաթերթեր՝ երեխաների առցանց պաշտպանության ազգային ռազմավարություն մշակելու համար:
- Բաժին 6-ը տալիս է օգտակար տեղեկատու նյութեր:

2. Ներածություն

2019 թվականին աշխարհի բնակչության կեսից ավելին օգտվել է համացանցից: Օգտատերերի մեծ մասը մինչև 44 տարեկաններն են, բայց հավասարապես շատ են օգտվում ինտերնետից 16-24 և 35-44 տարեկանները: Այսօր մարդկանց հսկայական քանակի համար ինտերնետը դարձել է առօրյա կյանքի անբաժան մաս: Համացանցը ստեղծվել է մեծահասակների համար, բայց երեխաների ու դեռահասաների կողմից դրա կիրառումն օրեցօր մեծանում է, իսկ թվային տեխնոլոգիաների ազդեցությունը նրանց կյանքի և ապագայի վրա՝ աճում: Համաշխարհային մակարդակում յուրաքանչյուր երրորդ երեխա օգտվում է համացանցից (0-18 տարեկան)⁶, իսկ զարգացող երկրներում երեխաներն ու երիտասարդները համացանցի օգտագործման առաջատարն են⁷, և գնահատվում է, որ առաջիկա հինգ տարիների ընթացքում այդ մարդկանց թիվը կկրկնապատկվի: Նոր սերունդը մեծանում է համացանցի հետ, և մեծամասնությունը միանում է բջջային ցանցի տեխնոլոգիայի միջոցով:⁸ Հետևաբար, թվային քաղաքականությունը, գործնական քայլերն ու թվային արտադրանքն ավելի շատ պետք է համապատասխանեն երեխաների կարիքներին, տեսլականին՝ հաշվի առնելով նրանց կարծիքը:

Թեև համացանցից հասանելիությունը հիմնարար է երեխաների իրավունքների իրացման համար, սակայն դեռևս առկա են հասանելիության զգալի տարածաշրջանային, ազգային, գենդերային և այլ անհավասարություններ, որոնք սահմանափակում են աղջիկների, հաշմանդամություն ունեցող երեխաների, փոքրամասնությունների և այլ խոցելի խմբերի հնարավորությունները: Ինչ վերաբերում է թվային գենդերային բաժանմանը, ապա հետազոտությունը ցույց է տալիս, որ բոլոր տարածաշրջաններում, բացառությամբ Ամերիկայի Միացյալ Նահանգների, արական սեռի օգտատերերը հիմնականում գերազանցում են կին օգտատերերին: Շատ երկրներում աղջիկները չունեն նույն հասանելիության հնարավորությունները, ինչ տղաները, իսկ այնտեղ, որտեղ որ ունեն, ապա աղջիկները ոչ միայն շատ ավելի մեծ չափով վերահսկվում և սահմանափակվում են համացանցի օգտագործման մեջ, այլև նրանք կարող են վտանգի ենթարկել իրենց անվտանգությունը՝ համացանց մուտք գործելու դեպքում:⁹

6 ՏՀԶԿ, «Նոր տեխնոլոգիաները և 21-րդ դարի երեխաները. Վերջին միտումները և արդյունքները», ՏՀԶԿ Կրթության աշխարհային փաստաթուղթ թիվ 179 (Կրթության և հմտությունների տնօրինություն, ՏՀԶԿ), հասանելի է 2020 թվականի հունվարի 27-ից, <https://www.oecd.org/officialdocuments/publicdisplaydocumentpdf/?cote=EDU/WKP%282018%2915&docLanguage=En>:

7 Ofcom, «Երեխաներ և ծնողներ. ՁԼՄ-ների օգտագործման և վերաբերմունքի զեկույց 2018» (Ofcom), հասանելի է 2020 թվականի հունվարի 17-ից, https://www.ofcom.org.uk/__data/assets/pdf_file/0024/134907/children-and-parents-media-use-and-attitudes-2018.pdf:

8 ՀՄՄ, «Տեղեկատվական հասարակության զեկույցի չափումը», հասանելի է 2020 թվականի հունվարի 16-ից, https://www.itu.int/dms_pub/itu-d/opb/ind/D-IND-ICTOI-2018-SUM-PDF-E.pdf:

9 «Երիտասարդ դեռահասներ և թվային մեդիա. օգտագործում, ռիսկեր և հնարավորություններ ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում», GAGE, հասանելի է 2020 թվականի հունվարի 29-ից, <https://www.gage.odi.org/publication/digital-media-risks-opportunities/>:

Ակնհայտ է, որ այն երեխաները և երիտասարդները, ովքեր չունեն թվային հմտություններ կամ խոսում են փոքրամասնությունների լեզուներով, ապա չեն կարող հեշտությամբ գտնել համապատասխան բովանդակություն առցանց: Իսկ գյուղական վայրերում ապրող երեխաներն ավելի քիչ թվային հմտություններ ունեն և ավելի շատ ժամանակ են անցկացնում առցանց (հատկապես խաղեր խաղալով), ինչպես նաև ստանում են ավելի քիչ ծնողական աջակցություն և հետևողականություն¹⁰:

Այնուամենայնիվ, ոչ մի խոսակցություն չի կարող լինել առցանց ռիսկերի և սպառնալիքների մասին՝ առանց թվային տեխնոլոգիայի ահռելի հարստացող և հզորացող բնույթի գիտակցման: Համացանցը և թվային տեխնոլոգիաները փոխել են մեր ապրելակերպը և բազմաթիվ նոր ուղիներ բացել՝ շփվելու, խաղեր խաղալու, երաժշտություն վայելելու, մշակութային, կրթական և հմտությունները զարգացնող միջոցառումների լայն տեսականիով զբաղվելու համար: Համացանցն ապահովում է հասանելիություն առողջապահական և կրթական ծառայություններին, ինչպես նաև կարող է տեղեկությունների աղբյուր հանդիսանալ այն թեմաների վերաբերյալ, որոնք կարևոր են երիտասարդների համար, բայց կարող են տաբու լինել նրանց հասարակություններում:

Ճիշտ այնպես, ինչպես երեխաները և երիտասարդները հաճախ առաջատար դիրքերում են համացանցի ընձեռած նոր հնարավորություններն ընդունելու և դրանց հարմարվելու հարցում, այնպես էլ նրանք նաև ենթարկվում են անվտանգության և բարեկեցության հետ կապված մի շարք խնդիրների, որոնք պետք է ճանաչվեն և դիմակայվեն հասարակության կողմից: Կարևոր է բաց քննարկել երեխաների և երիտասարդների համար առցանց վտանգները: Քննարկումը բացում է մի հարթակ, որտեղ երեխաներին և երիտասարդներին կարելի է սովորեցնել, թե ինչպես ճանաչել ռիսկը և կանխել կամ վարվել վնասների հետ, եթե դրանք իրականանան, ինչպես նաև համացանցի առավելություններն ու հնարավորությունները:

Աշխարհի շատ երկրներում երիտասարդները լավ են հասկանում որոշ ռիսկեր, որոնց նրանք բախվում են առցանց:¹¹ Հետազոտությունները ցույց են տվել, որ երեխաների և երիտասարդների մեծամասնությունը կարողանում է տարբերակել կիբերհարձակումն առցանց կատակից:

10 Լիվինգստոն, Ս., Քարոնեֆելդ Ուինթեր, Դ. և Հուսեյն, Մ. (2019): Երեխաների համաշխարհային առցանց համեմատական զեկույց, Իննոկենտիի հեղափոխական զեկույց: ՅՈՒՆԻՍԵֆ-ի հեղափոխությունների գրասենյակ - Իննոկենտի, Ֆլորենցիա, <https://www.unicef-irc.org/publications/1059-global-kids-online-comparative-report.html>:

Սա կարող է ունենալ անսպասելի արդյունքներ, օրինակ՝ ՀԱԲԼԱՏԱՄ-ի կողմից իրականացված հեղափոխությունը Լատինական Ամերիկայի հինգ երկրներում ցույց է տվել, որ խոցելի համայնքներում երեխաները կարող են օգտագործել ծանոթությունների հարթակներ, տեսախաղեր և սոցիալական ցանցեր՝ անօրինական նպատակներով դրամական գործարքներ իրականացնելու համար: *Contectados al Sur* ցանց, «Հարլապամ», Հարլապամ ծրագիր 2020, հասանելի է 2020 թվականի փետրվարի 6-ից, <https://hablatam.net/>:

11 2016 թվականից ՀՄՄ-ն ԵԱՊ շրջանակներում խորհրդակցություններ է իրականացնում երեխաների և մեծահասակների շահագրգիռ կողմերի հետ համապատասխան հարցերի շուրջ, ինչպիսիք են կիբերհարձակումը, թվային գրագիտությունը և երեխաների առցանց գործունեությունը:

Նրանք գիտակցում են, որ կիրքերհարձակումն ունի հանրային հարթություն և նախատեսված է վսասելու համար, այնուամենայնիվ, երեխայի առցանց հնարավորությունների և ռիսկերի հավասարակշռումը մնում է մարտահրավեր¹²:

ՀՄՄ անդամ պետությունների համար երեխաների և երիտասարդների առցանց պաշտպանությունը շարունակում է մնալ առաջնահերթություն, որ այն պետք է մանրակրկիտ հավասարակշռված լինի երեխաների և երիտասարդների համար՝ առցանց հնարավորությունները խթանելու ջանքերի հետ¹³, և արվի այնպես, որ պաշտպանի երեխաներին և երիտասարդներին՝ առանց ազդելու նրանց հասանելիության կամ ավելի լայն հանրության տեղեկատվության հասանելիության կամ խոսքի, արտահայտվելու և միավորվելու ազատությունից օգտվելու ունակության վրա:

Հատուկ ներդրումների և ստեղծագործ լուծումների ակնհայտ կարիք կա: Հատկապես երեխաների ու մեծահասակների միջև թվային անջրպետի պատճառով և երեխաների ու երիտասարդների առջև ծառայած ռիսկերը լուծելու համար, որը սահմանափակվում է ծնողների, ուսուցիչների և խնամակալների ցուցումներով: Միևնույն ժամանակ, երբ երեխաներն ու երիտասարդները մեծանում, դառնում են չափահաս, ծնողներ և հասարակության ակտիվ անդամներ, ապա նրանց տրվում է թվային անջրպետը նվազեցնելու պոտենցիալ և անբացատրելի հնարավորություն:

Այս լույսի ներքո համացանցի նկատմամբ վստահության ձևավորումը պետք է լինի հանրային քաղաքականության առաջնահերթություն: Կառավարությունները և հասարակությունը պետք է աշխատեն երեխաների և երիտասարդների հետ՝ նրանց հեռանկարները հասկանալու, ռիսկերի ու հնարավորությունների մասին իրական հանրային բանավեճ սկսելու համար: Առցանց ռիսկերը կառավարելու համար կարող է արդյունավետ լինել երեխաներին և երիտասարդներին աջակցելը, սակայն կառավարությունները պետք է նաև ապահովեն համարժեք աջակցության ծառայություններ, նրանց համար, ովքեր առցանց վսաս են կրում և երեխաներին տեղեկացնեն, թե ինչպես կարող են օգտվել այդ ծառայություններից:

¹² ՀՄՄ, Երիտասարդական խորհրդարկություն, <https://www.itu.int/en/council/cwg-cop/Pages/meetings.aspx>

¹³ ՅՈՒՆԻՍԵՖ, «Երեխաների գլոբալ առցանց համեմատական զեկույց (2019 թ.)»

Որոշ երկրներ պայքարում են բավարար ռեսուրսներ հատկացնելու համար, որպեսզի լուծեն թվային գրագիտության և առցանց երեխաների անվտանգության խնդիրները: Այնուամենայնիվ, երեխաները հայտնում են, որ ծնողները, ուսուցիչները, տեխնոլոգիական ընկերությունները, կառավարությունները կարևոր դերակատարներ են իրենց առցանց անվտանգությունն ապահովելու և լուծումներ մշակելու գործում: ՀՄՄ անդամ երկրները նաև նշել են, որ զգալի աջակցություն կա ինչպես գիտելիքների փոխանակման, այնպես էլ համակարգված ջանքերով ավելի մեծ թվով երեխաների առցանց անվտանգությունն ապահովելու համար: Երեխաները և երիտասարդները «նավարկվում են» ավելի ու ավելի բարդ թվային լանդշաֆտով, իսկ արհեստական ինտելեկտի ընդունումը, մեքենայական ուսուցումը, մեծ տվյալների վերլուծությունը, ռոբոտաշինությունը, վիրտուալ, ընդլայնված իրականությունը և իրերի ինտերնետը նախատեսված են փոխակերպել երեխաների մեդիապրակտիկան: Սա պահանջում է, որ որքան հնարավոր է շուտ ներդրումներ և քաղաքականություն մշակվի ապագայի երեխաների, ծնողների և համայնքների համար:

2.1 Ինչ է երեխաների առցանց պաշտպանությունը

Առցանց տեխնոլոգիաները երեխաներին և երիտասարդներին տալիս են շփվելու, նոր հմտություններ ձեռք բերելու, ստեղծագործ լինելու և ավելի լավ հասարակությանը նպաստելու բազմաթիվ հնարավորություններ:

Սակայն դրանք կարող են նաև նոր ռիսկեր առաջացնել, ինչպիսիք են՝ գաղտնիության, ապօրինի բովանդակության, ոտնձգությունների, կիբերհարձակման, անձնական տվյալների չարաշահման կամ երեխաների սեռական բռնության հետ կապված խնդիրները:

Այս ուղեցույցները մշակում են ամբողջական մոտեցում՝ արձագանքելու բոլոր հնարավոր սպառնալիքներին և վնասներին, որոնց կարող են հանդիպել երեխաները և երիտասարդները թվային գրագիտության ձեռքբերման ժամանակ: Նրանք գիտակցում են, որ բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերը դերակատարում ունեն իրենց թվային ճկունության, բարեկեցության և պաշտպանության հարցում՝ միևնույն ժամանակ օգտվելով այն հնարավորություններից, որոնք կարող է առաջարկել համացանցը:

Երեխաների և երիտասարդների պաշտպանությունը ընդհանուր պատասխանատվություն է, և բոլոր շահագրգիռ կողմերի վրա է դրված ապահովել կայուն ապագա բոլորի համար: Որպեսզի դա տեղի ունենա, ապա քաղաքականություն մշակողները, ոլորտը, ծնողները, խնամակալները, մանկավարժները և այլ շահագրգիռ կողմերը պետք է ապահովեն, որ երեխաները և երիտասարդները կարողանան իրականացնել իրենց ներուժն առցանց և անցանց:

Թեև չկա երեխաների առցանց պաշտպանության համընդհանուր սահմանում, բայց այն նպատակ ունի համապարփակ մոտեցում

ցուցաբերել երեխաների և երիտասարդների համար՝ անվտանգ, տարիքին համապատասխան, ներառական և մասնակցային թվային տարածքներ կառուցելու համար, որը բնութագրվում է.

- պատասխան, աջակցություն և ինքնօգնություն սպառնալիքի դեպքում,
- մնասի կանխարգելում,
- դինամիկ հավասարակշռություն՝ պաշտպանություն ապահովելու և երեխաների համար թվային քաղաքացիներ լինելու հնարավորություն ընձեռելու միջև,
- ինչպես երեխաների, այնպես էլ հասարակության իրավունքների պաշտպանություն:

Ավելին, տեխնոլոգիաների և հասարակության արագ առաջընթացի և համացանցի անսահման հնարավորությունների պատճառով պետք է երեխաների առցանց պաշտպանությունը լինի ճկուն և ադապտացվող, որպեսզի արդյունավետ լինի: Թեև այս ուղեցույցներն երեխաներին և երիտասարդներին պատկերացում են տալիս առցանց կարևորագույն ռիսկերի մասին, ներառյալ՝ մնասակար և անօրինական բովանդակությունը, ոտնձգությունը, կիբերհարձակումը, անձնական տվյալների չարաշահումը կամ սեռական նպատակներով գրումինգը, երեխաներին սեռական նպատակներով չարաշահումը և շահագործումը, սակայն հայտնվելու են նոր մարտահրավերներ տեխնոլոգիական նորարարությունների զարգացման հետ մեկտեղ, որոնք տարբերվելու են ըստ տարածաշրջանի: Այնուամենայնիվ, նոր մարտահրավերները լավագույնս կլուծվեն՝ միասին աշխատելով որպես գլոբալ համայնք, քանի որ այս մարտահրավերներին անհրաժեշտ է գտնել նոր լուծումներ:

2.2 Երեխաները թվային աշխարհում

Համացանցը փոխեց մեր ապրելակերպը: Այն ամբողջությամբ ինտեգրված է երեխաների և երիտասարդների կյանքում՝ անհնարին դարձնելով թվային և ֆիզիկական աշխարհներն առանձին դիտարկելը: Այսօր ինտերնետից օգտվողների մեկ երրորդը երեխաներ և երիտասարդներ են, և ՅՈՒՆԻՍԵՖ-ի գնահատմամբ՝ երիտասարդների 71 տոկոսն արդեն առցանց է:

Համացանցի այսքան հասանալիությունն ահռելի ուժ է տվել: Առցանց աշխարհը թույլ է տալիս երեխաներին և երիտասարդներին հաղթահարել թերություններն ու հաշմանդամությունը, և նոր ասպարեզներ է տրամադրել ժամանցի, կրթության, մասնակցության և հարաբերությունների կառուցման համար: Թվային հարթակներն այսօր օգտագործվում են տարբեր գործողությունների համար և հաճախ հանդիսանում են մուլտիմեդիա փորձառություններ:

Հասանելիություն ունենալ, սովորել օգտագործել և ղեկավարել այս տեխնոլոգիան կարևոր է համարվում երիտասարդների զարգացման համար, հատկապես երբ առաջին անգամ օգտագործվում են վաղ տարիքում:

Քաղաքականություն մշակողները պետք է հասկանան, որ երեխաները և երիտասարդները հաճախ սկսում են օգտագործել հարթակներն ու ծառայությունները նախքան նախանշված նվազագույն տարիքին հասնելը, հետևաբար, կրթությունը պետք է վաղ սկսվի:

Երեխաներն ու երիտասարդները ցանկանում են ներգրավվել զրույցի մեջ, և նրանք արժեքավոր փորձ ունեն որպես «թվային բնիկներ», որը կարելի է կիսել: Քաղաքականություն մշակողները և փորձագետները պետք է ներգրավվեն երեխաների և երիտասարդների հետ առցանց միջավայրի վերաբերյալ շարունակական բանավեճում՝ պաշտպանելով նրանց իրավունքները:

Համացանցի հասանելիություն

Համացանցի օգտագործումը մեծ աճ է գրանցել: 2019 թվականին աշխարհի բնակչության կեսից ավելին օգտվել է համացանցից (53,6 տոկոս), մոտ 4,1 միլիարդ օգտատեր: Համաշխարհային մակարդակում համացանցից յուրաքանչյուր երրորդ օգտվողը մինչև 18 տարեկան երեխա է¹⁴: Այնուամենայնիվ, աշխարհում համացանցի տարածման մակարդակը շատ ավելի բարձր է մնում զարգացած երկրներում: Ցածր եկամուտ ունեցող որոշ երկրներում օգտվողների թիվն աճում է՝ հասնելով մինչև յուրաքանչյուր երկրորդը, մինչդեռ ավելի բարձր եկամուտ ունեցող երկրներում հարաբերակցությունը կազմում է 5-ից 1-ը: ՅՈՒՆԻՍԵՖ-ի տվյալներով՝ ամբողջ աշխարհում երիտասարդների 71 տոկոսն արդեն առցանց է¹⁵: Երեխաներն ու երիտասարդները, հետևաբար, այժմ զգալի, մշտական և կայուն ներկայություն ունեն համացանցում¹⁶: Համացանցը ծառայում է սոցիալական, տնտեսական կամ քաղաքական նպատակների և դարձել է ընտանեկան, սպառողական ապրանք կամ ծառայություն, որն անբաժանելի է ընտանիքների, երեխաների և երիտասարդների ապրելակերպի համար:

2017 թվականին տարածաշրջանային առումով երեխաների և երիտասարդների ինտերնետ հասանելիությունը մեծապես կապված էր տվյալ երկրի սոցիալ-տնտեսական վիճակի հետ: Այսպիսով, կարելի է փաստել, որ ցածր եկամուտ ունեցող երկրները հակված են ունենալ ավելի քիչ համացանցից օգտվող երեխաներ, քան բարձր եկամուտ ունեցողները:

14 Լիվինգստոն, Ս., Քարր. Ջ., Բրն. Ջ. (2015) Երեքից մեկը. Համաշխարհային ինտերնետի կառավարման խնդիրը երեխաների իրավունքներին անդրադառնալու համար: Համացանցի կառավարման գլոբալ հանձնաժողով. Թղթային շարք.Լոնդոն. CIGI և Chatham House, <https://www.cigionline.org/publications/one-three-internet-governance-and-childrens-rights>

15 Լայնաշերտ կապի հանձնաժողով, «Երեխաների առցանց անվտանգություն. Նվազագույնի հասցնելով բռնության, չարաշահման և շահագործման ռիսկն առցանց (2019 թ.), ԼայնաշերտԿայուն զարգացման հանձնաժողով, հոկտեմբեր 2019, 84, https://broadbandcommission.org/Documents/working-groups/ChildOnlineSafety_Report.pdf

16 Լիվինգստոն, Քարր և Բրն, «Երեքից մեկը. Ինտերնետի կառավարում և երեխաների իրավունքները»:

Շատ երկրներում երեխաները և երիտասարդներն ավելի շատ ժամանակ են անցկացնում առցանց հանգստյան օրերին, քան աշխատանքային, ընդ որում, դեռահասները (15-17 տարեկան) ամենաերկար ժամանակը՝ (միջին տևողությունը՝ (2,5-5,3)կախված երկրից:

Համացանցից օգտվելը

Երեխաների և երիտասարդների շրջանում համացանց մուտք գործելու ամենատարածված սարքը բջջային հեռախոսն է, որին հաջորդում են սեղանի և դյուրակիր համակարգիչները: Երեխաները և երիտասարդներն օրական մոտ երկու ժամ են անցկացնում առցանց, ինչը կրկնապատկվում է՝ հանգստյան յուրաքանչյուր օրը: Ոմանք մշտապես կապի մեջ են լինում, սակայն շատերը տանը դեռևս հասանելիություն չունեն համացանցին:

Գործնականում, համացանցից օգտվող երեխաների և երիտասարդների մեծ մասը մուտք է գործում համացանց մեկից ավելի սարքերի միջոցով:

Երեխաները և երիտասարդները, ովքեր միանում են համացանցին շաբաթական առնվազն մեկ անգամ, երբեմն դա անելու համար օգտագործում են մինչև երեք տարբեր սարքեր: Ավելի հարուստ երկրների մեծ երեխաներն ու երիտասարդները հիմնականում ավելի շատ սարքեր են օգտագործում, իսկ հետազոտված յուրաքանչյուր երկրում տղաները գերազանցում են աղջիկներին:

Աղջիկների և տղաների ամենահայտնի զբաղմունքը տեսահոլովակներ դիտելն է: Համացանցից օգտվող երեխաների և երիտասարդների ավելի քան երեք քառորդն ասում է, որ նրանք առցանց տեսանյութեր են դիտում շաբաթն առնվազն մեկ անգամ միայնակ կամ ընտանիքի այլ անդամների հետ:

Շատ երեխաներ և երիտասարդներ կարող են համարվել «ակտիվ սոցիալիզատորներ»՝ օգտագործելով մի քանի սոցիալական մեդիա հարթակներ, ինչպիսիք են՝ Ֆեյսբուքը, Թվիթերը, ՏիկՏոկը կամ Ինստագրամը:

Երեխաներն ու երիտասարդները նաև քաղաքականությամբ են զբաղվում առցանց և իրենց ձայնը լսելի դարձնում բլոգերությամբ:

Առցանց խաղերին մասնակցության ընդհանուր մակարդակը տատանվում է ըստ երկրների՝ համահունչ երեխաների և երիտասարդների կողմից ինտերնետ հասանելիության մատչելիությանը, մինչդեռ ինտերնետ օգտագործող երեխաների և երիտասարդների 10-30 տոկոսը շաբաթական կտրվածքով զբաղվում է ստեղծագործ առցանց գործունեությամբ:

Տարբեր տարիքի շատ երեխաներ և երիտասարդներ օգտվում են համացանցից շաբաթական կտրվածքով, որպեսզի ստանան կրթություն, կատարեն տնային աշխատանքներ, իսկ բացակայելու դեպքում կարողանան լրացնել կամ փնտրել առողջապահական թեմայով առցանց

տեղեկատվություն: Ավելի մեծ երեխաներն ավելի շատ են տենչում տեղեկատվության ստանալ, քան փոքրերը:

2.3 Տեխնոլոգիաների ազդեցությունը երեխաների թվային փորձի վրա

Համացանցը և թվային տեխնոլոգիաները կարող են հնարավորություն ստեղծել և վտանգ ներկայացնել երեխաների և երիտասարդների համար: Երեխաներն օգտվում են և սոցիալական ցանցերից ստանում ուսումնասիրելու, սովորելու, հաղորդակցվելու և հիմնական հմտությունները զարգացնելու բազմաթիվ հնարավորություններ: Օրինակ՝ սոցիալական ցանցերը երեխաների կողմից դիտվում են որպես հարթակներ, որոնք թույլ են տալիս նրանց բացահայտել անձնական ինքնությունն անվտանգ միջավայրում: Երիտասարդների համար կարևոր է ունենալ համապատասխան հմտություններ և իմանալ, թե ինչպես լուծել գաղտնիության և հեղինակության հետ կապված խնդիրները: *«Ես գիտեմ, որ այն ամենը, ինչ տեղադրում ենք համացանցում, մնում է հավերժ, և դա կարող է ազդել մեր կյանքի վրա սպազայում», Տդա, 14 տարեկան, Չիլի:*

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երեխաների մեծամասնությունն օգտագործում է սոցիալական ցանցերը մինչև նախանշված նվազագույն տարիքը՝ տասներեք տարեկան¹⁷, իսկ տարիքի ստուգման ծառայությունները, ընդհանուր առմամբ, թույլ են կամ բացակայում են, որի հետևանքով ավելանում են երեխաներին սպառնացող վտանգները:

Այնուամենայնիվ, եթե երեխաները ցանկանում են սովորել թվային հմտություններ, դառնալ թվային քաղաքացիներ, ապա նրանք նաև պետք է հակված լինեն մտածելու ընկերների և ծանոթների հետ շփվելու գաղտնիության մասին ևս: Օրինակ՝ ինչ կարող են տեսնել իմ ընկերները, իսկ օտարներն ու երրորդ անձինք, բնականաբար, ավելի քիչ: Ընդհանուր առմամբ, երեխաների բնական հետաքրքրասիրությունը, ռիսկի գիտակցման ցածր շեմի հետ զուգակցված, կարող է նրանց խոցելի դարձնել գրումինգի, շահագործման, ահաբեկման, այլ տեսակի վնասակար բովանդակության կամ շփման հարցում:

Բջջային հավելվածների միջոցով լուսանկարներով և տեսանյութերով կիսվելու լայն տարածվածությունը, մասնավորապես, երեխաների կողմից ուղիղ հեռարձակման հարթակների օգտագործումը ներկայացնում է գաղտնիության և ռիսկերի հետ կապված մտահոգություններ:

¹⁷ Լիվինգսթոն, Քարր և Բրն, «Երեքից մեկը. Ինտերնետի կառավարում և երեխաների իրավունքները»:

Որոշ երեխաներ ստեղծում են իրենց, ընկերների, հասակակիցների սեռական բնույթի լուսանկարները և տարածում համացանցում: Ոմանց համար, հատկապես ավելի մեծ երեխաների, դա կարող է դիտվել որպես սեքսուալության և սեռական ինքնության բնական ուսումնասիրություն, մինչդեռ ավելի փոքր երեխաների համար հաճախ կա հարկադրանք չափահասի կամ այլ երեխայի կողմից: Ինչ էլ որ լինի, արդյունքում ստացված բովանդակությունը շատ երկրներում անօրինական է և կարող է երեխաներին ենթարկել քրեական հետապնդման վտանգի, ինչպես նաև կարող է օգտագործվել երեխայի հետագա շահագործման համար:

Նման կերպ, առցանց խաղերը երեխաներին հնարավորություն են տալիս իրականացնել խաղալու իրենց հիմնարար իրավունքը և ստեղծել կապեր, ժամանակ անցկացնել, հանդիպել նոր ընկերների, զարգացնել կարևոր հմտություններ: Մեծամասամբ սա կարող է դրական լինել: Այնուամենայնիվ, կան ապացույցներ, որոնք ցույց են տալիս, որ պատասխանատու չափահասի կողմից չվերահսկվող և աջակցության չարժանացած առցանց խաղերի հարթակները կարող են նաև այնպիսի վտանգներ ներկայացնել երեխաների համար, ինչպիսիք են՝ խաղերից կախվածությունը, ֆինանսական ռիսկերը, երեխաների անձնական տվյալների հավաքագրումը և դրամայնացումը, կիբերհարձակումները, ատելության խոսքը, բռնությունը, անպատշաճ վարքագիծը կամ բովանդակությունը¹⁸, ինչպես նաև գրումինգը՝ օգտագործելով իրական, համակարգչային կամ նույնիսկ վիրտուալ իրականության լուսանկարներ և տեսանյութեր, որոնք ներկայացնում են երեխաների սեռական բռնությունն ու շահագործումը: Ավելին, տեխնոլոգիաների զարգացումները հանգեցրել են իրերի ինտերնետի առաջացմանը, որտեղ սարքերի աճող քանակն ու տիրույթը կարող են միանալ, շփվել և համացանցի միջոցով ցանց ստեղծել: Սա ներառում է խաղալիքներ, մանկական մոնիտորներ և արհեստական ինտելեկտով աշխատող սարքեր, որոնք կարող են վտանգներ ներկայացնել գաղտնիության և անցանկալի շփման տեսանկյունից:

2.4 Հիմնական սպառնալիքներն առցանց տիրություն գտնվող երեխաների համար

Մեծահասակները և երեխաներն ենթարկվում են առցանց մի շարք ռիսկերի և վտանգների: Այնուամենայնիվ, երեխաները շատ ավելի խոցելի են: Որոշ երեխաներ նույնիսկ ավելի խոցելի են, քան մյուսները, օրինակ՝ հաշմանդամ¹⁹ կամ տեղափոխության մեջ գտնվող երեխաները: Քաղաքականություն մշակողները պետք է երաշխավորեն, որ բոլոր երեխաները կարող են զարգանալ և անվտանգ կրթվել թվային միջավայրում:

¹⁸ ՅՈՒՆԻՍԵՖ, «Երեխաների գլոբալ առցանց համեմատական զեկույց (2019 թ.)»:

¹⁹ Lundy et al., «ԵՐԿՈՒ ՍԵՂՄՈՒՄ ԱՌԱՋ ԵՎ ՄԵԿ ՍԵՂՄՈՒՄ ԵՏ», Հաշմանդամություն ունեցող երեխաների մասին զեկույց թվային միջավայրում (Եվրոպայի խորհուրդ, հոկտեմբեր 2019)

Այն գաղափարը, որ երեխաները խոցելի են և պետք է պաշտպանված լինեն շահագործման բոլոր ձևերից, ուրվագծված է նաև Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայում:

Թվային միջավայրի մի քանի ոլորտներ մեծ հնարավորություններ են ընձեռում երեխաներին, բայց միևնույն ժամանակ կարող են ավելացնել ռիսկերը, որոնք կարող են խորապես վնասել և խաթարել նրանց բարեկեցությունը:

Մտահոգություններ կան ինչպես մեծերի, այնպես էլ երեխաների համար, որ համացանցը կարող է օգտագործվել անձնական տվյալներին հասանելիություն ձեռք բերելու, ապատեղեկատվություն տարածելու կամ ավելի վատ՝ պոռնոգրաֆիային հասանելիություն տալու համար:

Այստեղ շատ կարևոր է տարբերակել երեխաներին սպառնացող վտանգները: Ռիսկի տարրեր պարունակող ոչ բոլոր գործողություններն են վտանգավոր, ինչպես նաև ոչ բոլոր ռիսկերն են անպայման դառնում վնասակար երեխաների համար, օրինակ՝ սեքստինգը երիտասարդների կողմից սեքսուալությունը և հարաբերություններն ուսումնասիրելու միջոց է, որը պարտադիր չէ լինի վնասակար:

Գծապատկեր 2. Երեխաների առցանց սպառնալիքների դասակարգում²⁰

Գծապատկեր 2-ը ցույց է տալիս մատրիցա, որը դասակարգում է երեխաների համար առցանց ռիսկերը: Երեք սյունակները վերնագրված են՝ 1) Բովանդակություն (երեխան որպես ընդունող (զանգվածային արտադրությունների)), 2) Շփում (երեխան որպես մասնակից (մեծահասակների նախաձեռնությամբ)), 3) Վարքագիծ (երեխան որպես գործող անձ (հանցագործ/զոհ)): Չորս տողերը վերնագրված են՝ ագրեսիվ, սեքսուալ, արժեքներ, գովազդ: Յուրաքանչյուր տողի համար ագրեսիվը հասկանում ենք՝ 1 բռնի/վատ բովանդակություն, 2 ուրնձգություն, 3 ահաբեկում, հասակակիցների թշնամական գործողություն: Սեքսուալը հասկանում ենք 1 պոռնոգրաֆիկ բովանդակություն, 2 սիրահեղուկ, սեռական բռնություն անձանոթ մարդկանց հետ հանդիպելիս, 3 սեռական ուրնձգություն, սեքսփինգ: Արժեքները հասկանում ենք՝ 1 ռասիստական/ապրեիություն պարունակող բովանդակություն, 2 գաղափարական համոզում, 3 պոպուլիստ վնասակար բովանդակություն, որը սրտեղծվել է օգտատերերի կողմից: Գովազդը հասկանում ենք, գովազդային, ներկառուցված մարքեթինգ, 2 անձնական տվյալների շահագործում և չարաշահում, 3 մոլախաղ, հեղինակային իրավունքի խախտում:

Աղբյուր՝ Եվրամիության երեխաներն առցանց (Լիվինգստոն, Հադդոն, Գորզիգ, և Օլաֆսոն, (2011))

20 Լիվինգստոն, Ս., Հադդոն, Լ., Գորզիգ, Ա., և Օլաֆսոն, Կ. (2011). Ռիսկերը և անվտանգությունը համացանցում: Եվրոպացի երեխաների հեռանկարը. ամբողջական բացահայտումներ: Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքական գիտությունների դպրոց: Եվրամիության երեխաները առցանց, <http://eprints.lse.ac.uk/33731/>

	Բովանդակություն	Շփում	Վարքագիծը
	Երեխան որպես ընդունող (զանգվածային արտահրույսությունների)	Երեխան որպես մասնակից (մեծահասակների կողմից նախաձեռնված գործողություն)	Երեխան որպես գործող անձ (հանցագործ, զոհ)
Ագրեսիվ	Բռնի/դաժան բովանդակություն	Ոտնձգություն, հետապնդում	Ահաբեկում, հասակակիցների կողմից թշնամական գործողություն
Սեքսուալ	Պոռնոգրաֆիկ բովանդակություն	Սիրահետում, սեռական բռնություն անձանոթների հետ հանդիպման ժամանակ	Սեռական ոտնձգություններ, սեքստինգ
Արժեքներ	Ռասիստական/ատելություն պարունակող բովանդակություն	Գաղափարական համոզում	Օգտատերերի կողմից ստեղծված պոտենցիալ վնասակար բովանդակություն
Կոմերցիոն	Գովազդ, ներկառուցված մարքեթինգ	Անձնական տվյալների շահագործում և չարաշահում	Ազարտային խաղեր, հեղինակային իրավունքի խախտում

Թվային դարաշրջանի գալուստը նոր մարտահրավերներ է ներկայացրել երեխաների պաշտպանության համար: Երեխաներին պետք է հզորացնել՝ ուղղորդելով անվտանգ առցանց աշխարհ և քաղել դրա բազմաթիվ պարզները:

Քաղաքականություն մշակողները պետք է ապահովեն, որ համապատասխան օրենսդրությունը, երաշխիքներն ու գործիքները լինեն, որպեսզի թույլ տան երեխաներին ապահով զարգանալ և սովորել: Չափազանց կարևոր է, որ երեխաներն ունենան անհրաժեշտ հմտություններ՝ բացահայտելու սպառնալիքները և լիովին հասկանալու իրենց վարքագծի հետևանքներն ու նրբություններն առցանց:

Երբ երեխաներն առցանց են, ապա կարող են բախվել բազմաթիվ սպառնալիքների ինչպես կազմակերպությունների, մեծահասակների, այնպես էլ հասակակիցների կողմից:

Բովանդակություն և շահարկում

- Անպատշաճ կամ նույնիսկ հանցավոր բովանդակության հետ շփումը կարող է երեխաներին հասցնել ծայրահեղությունների, ինչպիսիք են՝ ինքնավնասումը, կործանարար և բռնի վարքագիծը: Նման բովանդակության հետ շփումը կարող է հավասարապես հանգեցնել արմատականացման, ռասիստական կամ խտրական գաղափարներին միանալուն: Ընդունված է, որ շատ երեխաներ չեն պահպանում կայքերում տեղադրված տարիքային սահմանափակումները:
- Սխալ կամ թերի տեղեկատվության ազդեցությունը սահմանափակում է նրանց շրջապատող աշխարհի ըմբռնումը: Օգտատիրոջ վարքագծի հիման վրա բովանդակության հարմարեցման միտումը կարող է հանգեցնել «զտված փուլիկների»՝ սահմանափակելով երեխաների համար բովանդակության լայն շրջանակի զարգացումը և հասանելիությունը:
- Շահարկման նպատակով ալգորիթմականորեն զտված բովանդակության ազդեցությունը կարող է մեծապես ազդել երեխայի զարգացման, կարծիքի, արժեքների և սովորությունների վրա:

Շփում մեծահասակների կամ հասակակիցների հետ

Երեխաները կարող են բախվել իրենց հասակակիցների կամ մեծահասակների կողմից շփման սպառնալիքների լայն շրջանակի:

- Առցանց բուլինգը կարող է ավելի լայն տարածում ունենալ և ավելի մեծ արագությամբ, քան անցանցը: Դա կարող է տեղի ունենալ օրվա կամ գիշերվա ցանկացած ժամանակ՝ այդպիսով ներխուժելով նախկինում «անվտանգ տարածքներ» և կարող է լինել անանուն:
- Երեխաներն, ովքեր զոհ են դառնում անցանց ռեժիմում, ամենայն հավանականությամբ, զոհ կդառնան առցանց: Հաշմանդամություն ունեցող երեխաներն ավելի վտանգված են առցանց: Հետազոտությունը ցույց է տալիս, որ նրանց ցանկացած տեսակի բռնության ենթարկվելու և հետապնդելու հավանականությունն ավելի մեծ է: Հետապնդումը կարող է ներառել բուլինգ, ոտնձգություն, բացառում և խտրականություն, երեխայի փաստացի կամ ընկալվող հաշմանդամության հետ կապված այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են՝ վարքագիծ, խոսելու ձև, օգտագործվող սարքավորումներ կամ ծառայություններ:
- Զրպարտությունը և հեղինակությանը վնաս պատճառելը, նկարները և տեսանյութերը կարող են փոփոխվել և կիսվել միլիարդավոր մարդկանց հետ: Անխոհեմ մեկնաբանությունները կարող են հասանելի լինել տասնամյակներ շարունակ՝ ցանկացողին ազատ դիտելու հնարավորությամբ:
- Իրավախախտի կողմից երեխաները հաճախ կարող են թիրախավորվել, սիրահետվել, բռնության ենթարկվել համացանցի

միջոցով աշխարհի ցանկացած ծայրում: Իրավախախտը հաճախ պնդում է, թե իր փոխարեն մեկ ուրիշն է կամ ներկայացնում սխալ կամ փոփոխված անձնական տեղեկություն: Սա կարող է ունենալ մի քանի ձևեր, այդ թվում՝ արմատականացումը կամ իրենց սեռական բացահայտ բովանդակությունն ուղարկելու հարկադրանքը:

- Ճնշման ենթարկվելը, խաբված լինելը կամ հարկադրված գնումներ կատարելը՝ հաշիվ վճարողի իմացությամբ կամ առանց դրա:
- Անցանկալի գովազդն առաջացնում է համաձայնության և տվյալների վաճառքի հետ կապված խնդիրներ:
- Առցանց բուլինգը կարող է հատկապես անհանգստացնող և վնասակար լինել, քանի որ այն կարող է ավելի լայն տարածում ունենալ՝ ավելի մեծ հրապարակայնությամբ, իսկ էլեկտրոնային եղանակով շրջանառվող բովանդակությունը ցանկացած պահի կարող է նորից հայտնվել, ինչը կարող է դժվարացնել բուլինգի ենթարկված զոհի համար միջադեպ փակելը: Այն կարող է պարունակել վնասակար տեսողական պատկերներ կամ վիրավորական խոսքեր, որի բովանդակությունը հասանելի է 24 ժամ: Էլեկտրոնային միջոցներով բուլինգը կարող է տեղի ունենալ 24/7 ռեժիմով, այնպես որ այն կարող է ներխուժել զոհի գաղտնիության տարածք, «անվտանգ» վայրեր, ինչպիսին է նրանց տունը, և անձնական տեղեկատվությունը կարող է շահարկման ենթարկվել, տեսողական պատկերները փոփոխվել և դրանք փոխանցվել ուրիշներին: Ավելին, այն կարող է իրականացվել անանուն: Անձնական տեղեկատվության բացահայտումը, որը հանգեցնում է ֆիզիկական վնասի վտանգի, ներառյալ իրական կյանքում հանդիպումներն առցանց ծանոթների հետ՝ ֆիզիկական և/կամ սեռական բռնության հնարավորությամբ:
- Իրենց կամ ուրիշների իրավունքների ոտնահարում՝ գրագողության և առանց թույլտվության բովանդակությունը վերբեռնելու միջոցով, ներառյալ՝ առանց թույլտվության անպատշաճ լուսանկարներ վերցնելը և վերբեռնելը:
- Այլ մարդկանց հեղինակային իրավունքի խախտում, օրինակ՝ երաժշտություն, ֆիլմեր կամ հեռուստահաղորդումներ ներբեռնելով, որոնց համար պետք է վճարել:
- Համացանցի և/կամ առցանց խաղերի հարկադիր և չափից ավելի օգտագործումն ի վնաս սոցիալական և/կամ բացօթյա խաղերի, որոնք կարևոր են առողջության, վստահության ամրապնդման, սոցիալական զարգացման և ընդհանուր բարեկեցության համար:
- Փորձել վնասել, անհանգստացնել կամ ահաբեկել մեկ ուրիշին, այդ թվում՝ ուրիշ մարդ ձևանալով, հաճախ՝ այլ երեխա:
- Դեռահասների կողմից ավելի ու ավելի տարածված վարքագիծ է «սեքստինգը»՝ (սեքսուալ նկարների կամ տեքստերի փոխանակումը բջջային հեռախոսների միջոցով): Այս նկարները և տեքստերը հաճախ կիսվում են հարաբերությունների մեջ

գտնվող զուգընկերների կամ պոտենցիալ զուգընկերների միջև, բայց երբեմն շատ ավելի լայն լսարանի հետ: Քիչ հավանական է համարվում, որ երիտասարդ դեռահասները համարժեք պատկերացում ունենան այս վարքագծի հետևանքների և դրանցից բխող հնարավոր ռիսկերի մասին:

2.5 Հիմնական վնասները երեխաների համար առցանց

Նախորդ բաժինը վերաբերում է սպառնալիքներին, որոնց երեխաները կարող են հանդիպել առցանց: Այս բաժինն ընդգծում է այն վնասները, որոնք կարող են առաջանալ այդ սպառնալիքներից:

Վնասներ

Համաձայն ՅՈՒՆԻՍԵՖ-ի ուսումնասիրությունների՝ համացանցի օգտագործման վերաբերյալ հետևյալ կատեգորիաները համարվում են ռիսկեր և վնասներ.

- Ինքնաբռնություն և ինքնավնասում.
- Ինքնասպանություն
- Խտրականություն

Անհարմար նյութերի ազդեցությունը.

- Ծայրահեղական/բռնության/դաժան բովանդակության բացահայտում
- Ներկառուցված մարքեթինգ
- Առցանց ազարտային խաղեր
 - Այս հարցի շուրջ հարցված երեխաների մոտ 20 տոկոսն ասել է, որ վերջին մեկ տարվա ընթացքում տեսել է կայքեր կամ առցանց քննարկումներ այն մասին, թե ինչպես են մարդիկ ֆիզիկապես վնասում կամ վիրավորում:

Արմատականացում.

- գաղափարական համոզում
- ատելության խոսք
 - Ավելի հավանական է, որ երեխաները կհայտնեին իրենց վրդովմունքն ատելության խոսքի, առցանց սեռական բովանդակության, առցանց և անցանց վիրավորական վերաբերմունքի, ինչպես նաև դեմ առ դեմ մեկին հանդիպելու կամ առաջին անգամ առցանց ծանոթանալու դեպքում:

Սեռական ոտնձգություն և շահագործում.

- Ինքնաստեղծ բովանդակություն
- սիրահետում
- երեխաների սեռական բռնության նյութ (ԵՍԲՆ)
- թրաֆիքինգ
- երեխաների սեռական շահագործումը՝ ճանապարհորդության և զբոսաշրջության մեջ:

2017 թվականին Դանիայում, Հունգարիայում և Միացյալ Թագավորությունում իրականացված երեխաների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ երեխաների 6 տոկոսի բացահայտ/անկեղծ լուսանկարներն առանց կիսվել են առանց իրենց թույլտվությամբ:

2019 թվականին Ինտերնետի Դիտման Հիմնադրամը (ԻԴՀ) հայտնաբերել է հաստատված ավելի քան 132,000 վեբ էջ, որոնք պարունակում են երեխաների սեռական բռնության լուսանկարներ և տեսանյութեր: Յուրաքանչյուր կայք կարող է պարունակել մեկից մինչև հազարավոր բռնության լուսանկարներ:

Առցանց բռնության հետ կապված ռիսկերը, ինչպիսիք են առանց համաձայնության մերկ լուսանկարների տարածումը և սեռական կիբերհարձակումը, բնութագրվում են գենդերային անհավասար դինամիկայով, ընդ որում աղջիկները սեռական վարքագծի պատճառով ավելի շատ են ենթարկվում գենդերային ճնշումների, որոնք ավելի բացասական են և մեծ վնաս են պատճառում:

- Անձնական տվյալների խախտում և չարաշահում.
- Հաքերային հարձակում
- Խարդախություն և գողություն

Շատերը ծանոթ են խարդախություններին և հաքերային հարձակումներին, սակայն երեխայի առցանց գործունեության հետ կապված գաղտնիության խախտումը դիտվում է որպես ևս մեկ խախտում: Մեծահասակները հաճախ նսեմացնում են երիտասարդներին՝ մանրակրկիտ զննելով նրանց բջջային հեռախոսները և հետազոտելով նրանց գործունեությունն առցանց: Օրինակ՝ Բրազիլիայի երեխաների զեկույցները ցույց են տալիս, որ տարբեր տարիքի և տղաները, և աղջիկները կարծում են, որ ծնողներն ավելի շատ են վերահսկում աղջիկների համացանցից օգտվելը: Սա բացատրելու փորձերը հաճախ ենթադրում են, որ աղջիկները կարող են որոշ դեպքերում ավելի խոցելի լինել հասարակության մեջ, հատկապես՝ անվտանգության առումով, մի համատեքստում, երբ առցանց և օֆլայն փոխգործակցության սահմանը գնալով ավելի ու ավելի մշուշոտ է դառնում:

- Կիբերհարձակում, հետապնդում և ոտնձգություն, հասակակիցների թշնամական և բռնի գործողություն:

Ծանոթության կայքերը և սոցիալական ցանցերը կարող են բռնության և ահաբեկման հարթակ հանդիսանալ, քանի որ անանուն օգտատերերը, ներառյալ երիտասարդները, ներգրավվում են ագրեսիվ կամ վիրավորական հաղորդակցության մեջ եվրոպայի յոթ երկրներում՝ Բելգիա, Դանիա, Իռլանդիա, Իտալիա, Պորտուգալիա, Ռումինիա և Միացյալ Թագավորություն, Լիվինգսթոնը: Կարևոր է նշել նաև, որ հաճախ խոցելի խմբի երեխաների համար մեծ է կիբերհարձակման զոհ դառնալու ռիսկը:

Մասկերոնին, Օլաֆսոնը և Հադոնը²¹ պարզել են, որ 2010 թվականին երեխաների մոտ 8 տոկոսը ենթարկվել է կիբերհարձակման, մինչդեռ 2014 թվականին երեխաների 12%-ը կիբերհարձակման զոհ էր դարձել:

Ուշադրության կենտրոնում անհավասարությունների ուժեղացում

2017 թվականին Աֆրիկայի տարածաշրջանում երեխաների մոտ 60 տոկոսն առցանց չի եղել, մինչդեռ Եվրոպայում՝ ընդամենը 4 տոկոսը: Համացանցի արական սեռի օգտատերերը գերազանցում են կին օգտատերերին աշխարհի բոլոր տարածաշրջաններում, և աղջիկների կողմից համացանցի օգտագործումը հաճախ վերահսկվում և սահմանափակվում է: Լայնաշերտ կապի ընդլայնման հետ այս անհավասարությունը զգալիորեն կաճի²²:

Երեխաները, ովքեր խոսում են փոքրամասնությունների լեզուներով, հաճախ չեն կարողանում գտնել համապատասխան բովանդակություն համացանցում, իսկ գյուղական բնակավայրերի երեխաներն ավելի հավանական է, որ բախվեն գաղտնաբառերի կամ փողի գողության:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ամբողջ աշխարհում շատ դեռահասներ պետք է հաղթահարեն իրենց առցանց մասնակցության նշանակալի խոչընդոտները: Շատերի համար հիմնական խոչընդոտներ և մարտահրավերներ են հանդիսանում համացանցին հասանելիություն չունենալը, վատ կապը, տվյալների և սարքերի համար ծախսերը և համապատասխան սարքավորումների բացակայությունը:

Զարգացող աշխարհի համար մատչելի լայնաշերտ կապի ընդլայնմամբ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ նվազագույնի հասցնելու ռիսկերն ու սպառնալիքներն երեխաների համար, միևնույն ժամանակ, թույլ տալով օգտվել նրանց թվային աշխարհի բոլոր առավելություններից:

Ուշադրության կենտրոնում՝ Երեխաների սեռական բռնության նյութ (ԵՄԲՆ)

Խնդրի մասշտաբը

Համացանցը փոխակերպել է ԵՄԲՆ-ի արտադրության, բաշխման և հասանելիության մասշտաբն ու բնույթը: 2018 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգներում հիմնված տեխնոլոգիական ընկերությունները հայտնել են ավելի քան 45 միլիոն առցանց կասկածվող լուսանկարների և տեսանյութերի մասին, որոնք ցույց են տալիս սեռական բռնության ենթարկված երեխաների ամբողջ աշխարհից: Սա համաշխարհային արդյունաբերություն է, և բռնությունների մասշտաբներն ու ծանրությունը մեծանում են՝ չնայած այն դադարեցնելու ջանքերին:

²¹ Լիվինգստոն, Ս., Մասկերոնի Ջ., Օլաֆսոն, Կ. և Հադոն, Լ... (2014). Երեխաների առցանց ռիսկերն ու հնարավորությունները. ԵՄ երեխաները առցանց-ի և երեխաները միայն օգտվում են բջջային հեռախոսներից-ի համեմատական արդյունքները: Լոնդոնի Կոնվենտալ քոլեջի կազմակերպության և քաղաքական գիտությունների դպրոց www.eukidsonline.net և www.netchildrengomobile.eu/

²² Լայնաշերտ Կապի Հանձնաժողով, «Երեխաների առցանց անվտանգություն. բռնության, չարաշահման և շահագործման առցանց ռիսկի նվազեցում» (2019)

Պատմականորեն, անցանց աշխարհում ԵՄԲԼ-ի գտնելը պահանջում էր, որ իրավախախտները զգալի ծախսերով մեծ ռիսկի դիմեն և նյութին հասանելիություն ունենան: Համացանցի միջոցով իրավախախտներն այժմ կարող են ունենալ ավելի ռիսկային վարքագիծ և համեմատաբար հեշտ հասանելիություն նյութին:

Տեսախցիկներն ավելի փոքր են, ավելի ու ավելի են ինտեգրվում մեր կյանքի բոլոր բնագավառներ՝ հեշտացնելով ԵՄԲԼ-ի արտադրության և ոչ կոնտակտային բռնությունից բովանդակություն ստանալու գործընթացը:

Անհնար է պարզել այս գաղտնի և անօրինական ձեռնարկության ճշգրիտ չափը կամ ձևը: Այնուամենայնիվ, պարզ է, որ այժմ շրջանառվող անօրինական լուսանկարների թիվը կարելի է հաշվել միլիոններով: 2018-ին ԻԴՀ-ն հետևել է, թե որքան հաճախ են հայտնվում այն երեխայի լուսանկարները, ով փրկվել էր 2013-ին: Երեք ամսվա ընթացքում ԻԴՀ-ի վերլուծաբանները հայտնաբերել են 347 անգամ: Այսինքն՝ 5 անգամ յուրաքանչյուր աշխատանքային օրվա ընթացքում:

Ներկայիս պատկերը

Ամեն անգամ, երբ բռնության ենթարկված երեխայի լուսանկարը նորից հայտնվում է համացանցում կամ ներբեռնվում է հանցագործի կողմից, ապա այդ երեխան կրկին բռնության է ենթարկվում: Տուժածները ստիպված են ողջ կյանքի ընթացքում ապրել այս նկարների երկարակեցության և շրջանառության փաստի հետ:

Հենց որ հայտնաբերվում է երեխաների սեռական բռնություն պատկերող նյութ կամ ինտերնետային էջ, ապա կարևոր է հնարավորինս արագ հեռացնել կամ արգելափակել բովանդակությունը: Համացանցի գլոբալ բնույթը դժվարացնում է դա, իսկ իրավախախտները կարող են նյութ արտադրել մի երկրում և իրացնել այն մեկ այլ երկրում՝ սպառողների համար: Գրեթե անհնար է, որ ազգային երաշխիքները կամ ծանուցումներն ազդեցություն ունենան առանց բարդ միջազգային համագործակցության:

Թվային աշխարհում նորարարությունների տեմպերը նշանակում են, որ հանցագործի տարածքն անընդհատ փոխվում է: Վերջերս ի հայտ եկած հիմնական սպառնալիքները ներառում են.

- Գաղտնագրման աճ, որն ակամա թույլ է տալիս իրավախախտներին գործել և կիսվել նյութերով թաքնված ալիքներով, միևնույն ժամանակ ավելի դժվար է դարձնում հայտնաբերումն ու օրենքի կիրարկումը:
- Համացանցի չպաշտպանված անկյուններում ավելանում են երեխաների գրումինգին նվիրված ֆորումները՝ նորմալացնելով և խրախուսելով այս վարքագիծը, որը հաճախ պահանջում է «նոր բովանդակություն» միանալու համար:
- Համացանցի արագ տարածումը հնարավորություն է տալիս օգ-

տատերերին առցանց մուտք գործել այն ոլորտները, որոնք դեռ պետք է մշակվեն/իրականացվեն համապարփակ պաշտպանության ռազմավարություն կամ համապատասխան ենթակառուցվածք:

- Երեխաներն օգտագործում են սարքեր, որոնք չեն վերահսկվում փոքր տարիքում, իսկ առցանց սեռական վարքագիծը նորմալացվում է: Տարեցտարի ավելանում է բռնության ինքնաստեղծ լուսանկարների թիվը:

Ուշադրության կենտրոնում՝ ինքնաստեղծ բովանդակություն

Երեխաները և դեռահասները կարող են նկարել կոմպրոմատային լուսանկարներ կամ տեսանյութերն իրենց մասնակցությամբ: Թեև այս վարքագիծն ինքնին անօրինական է, բայց կարող է համարվել նաև որպես նորմալ, առողջ սեռական զարգացման մի մաս: Չնայած բոլոր ռիսկերին, որ ցանկացած նման բովանդակություն կարող է տարածվել առցանց կամ անցանց՝ երեխաներին միասելու համար, ինչպես նաև օգտագործվել որպես հիմք՝ շնորհներ կորզելու համար: Որոշ երեխաների կարող են ճնշել կամ ստիպել կիսվել սեռական բնույթի լուսանկարներով, իսկ մյուսները՝ մասնավորապես դեռահասները, կարող են պատրաստակամորեն սեռական բովանդակություն արտադրել: Սա չի նշանակում, որ նրանք համաձայն կամ պատասխանատու են այս լուսանկարների շահագործական, չարաշահման, օգտագործման և/կամ տարածման համար:

Սեքստինգը սահմանվել է որպես «սեռական բնույթի լուսանկարների ինքնաարտադրում»²³ կամ «սեքսուալ հաղորդագրությունների կամ լուսանկարների փոխանակում» և «բջջային հեռախոսների և/կամ համացանցի միջոցով²⁴ սեռական բնույթի մերկ կամ գրեթե մերկ լուսանկարների ստեղծում, տարածում և փոխանցում»: Սեքստինգը սեփական անձի կողմից ստեղծվող սեռական բացահայտ բովանդակության ձև²⁵ է, և պրակտիկան «զգալիորեն բազմազան է համատեքստի, իմաստի և մտադրության առումով»:²⁶

Թեև սեքստինգը, հնարավոր է, որ երեխաների մասնակցությամբ ինքնաստեղծ բացահայտ սեռական բնույթի բովանդակության ամենատարածված ձևն է, և հաճախ դա արվում է իրենց համաձայնությունը տված դեռահասների կողմից կամ նրանց միջև, սակայն կան նաև

23 Կարեն Կուպեր և այլք, «Դեռահասները և ինքնանկարված սեքսուալնկարներ, Գրականության վերանայում», «Համակարգիչներ մարդկային վարքագծի մեջ» 55 (փետրվար 2016): 706–16, <https://doi.org/10.1016/j.chb.2015.10.003>.

24 Զեսիկա Ռինգրոուզ և այլք, «Երեխաների, երիտասարդների և «սեքսփինգի» որակական ուսումնասիրություն. Զեկույց պատրաստված NSPCC-ի համար» (Լոնդոն, Մեծ Բրիտանիա: Երեխաների նկատմամբ դաժանության կանխարգելման ազգային միություն, 2012), <http://doi.wiley.com/10.1046/j.1365-2206.1997.00037.x>:

25 UNODC, «Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը երեխաների բռնության և շահագործման վրա թեմայով ուսումնասիրություն» (Վիեննա. ՄԱԿ, 2015 թ.), [26 Կարեն Կուպեր և այլք, «Դեռահասները և ինքնանկարված սեքսուալ լուսանկարներ»](https://www.unodc.org/documents/Cybercrime[3], UNODC, «Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը երեխաների բռնության և շահագործման վրա թեմայով ուսումնասիրություն», էջ 22</p></div><div data-bbox=)

անցանկալի սեքստինգի բազմաթիվ ձևեր: Սա վերաբերում է գործունեության ոչ համաձայնեցված կողմերին, ինչպիսիք են՝ կիսվել կամ ստանալ անցանկալի սեռական բնույթի լուսանկարներ, տեսանյութեր կամ հաղորդագրություններ, օրինակ՝ հայտնի կամ անհայտ անձանց կողմից, ովքեր փորձում են կապ հաստատել, ճնշում գործադրել կամ հարկադրել երեխային:

Սեքստինգը կարող է նաև լինել սեռական ահաբեկման ձև, որտեղ երեխային ճնշում են, որ նա լուսանկար ուղարկի ընկերոջը/ընկերուհուն/հասակակցին, ով այնուհետ առանց նրանց համաձայնության այն տրամադրում է հասակակիցներին և այլոց:

Ուշադրության կենտրոնում՝ կիբերհարձակում (կիբերբուլինգ)

Թեև ահաբեկումը որպես երևույթ շատ վաղուց է առաջացել համացանցում, սակայն առցանց տեղի ունեցող ահաբեկման ավելացված մասշտաբը, շրջանակը և շարունակականությունը կարող է ավելի խորացնել այն, ինչն արդեն իսկ տխուր և հաճախ վնասակար փորձ է դրանից տուժածների համար:

Թեև ահաբեկումն որպես երևույթ շատ վաղուց է առաջացել համացանցում, սակայն առցանց տեղի ունեցող ահաբեկման ավելացված մասշտաբը, շրջանակը և շարունակականությունը կարող է ավելի խորացնել այն, ինչն արդեն իսկ տխուր և հաճախ վնասակար փորձ է դրանից տուժածների համար:

Կիբերհարձակումը սահմանվում է որպես դիտավորյալ և կրկնվող վնաս, որը հասցվում է համակարգիչների, բջջային հեռախոսների և այլ էլեկտրոնային սարքերի օգտագործման միջոցով: Այն հաճախ տեղի է ունենում դպրոցներում և այլուր: Անցանց բուլինգին զուգահեռ կարող է լրացուցիչ տեղի ունենալ ռասիստական, կրոնական կամ սեքսիստական պատճառներով, ինչպես նաև կարող է լինել անցանց պատճառաձ վնասի ընդլայնում, օրինակ՝ հաշիվների կտրման, առցանց տարածված լուսանկարների, տեսանյութերի և վիրավորական հաղորդագրությունների շուրջօրյա 24/7 բովանդակության հասանելիություն: Ընդհանուր առմամբ, սա ավելի սոցիալական խնդիր է, քան կրիմինալ բնույթ ունեցող: Կիբերհարձակման դեմ ուղղված քաղաքականությունը պահանջում է համապարփակ մոտեցում, որը ներառում է դպրոցները, ընտանիքները և ամենակարևորը՝ հենց իրենք՝ երեխաները:

Ուշադրության կենտրոնում՝ առցանց սիրահետում և սեռավարություն

Տեխնոլոգիաների արագ առաջընթացի, համացանցի ու թվային հաղորդակցության հասանելիության բարձրացման հետ մեկտեղ, որը տեղի է ունեցել վերջին տարիներին, անխուսափելիորեն հաջորդել է երեխաներին ուղղված առցանց հանցավոր գործողությունների ռիսկի բարձրացումը: Երեխաների առցանց սեռական շահագործման այս ձևերի թվում են առցանց սիրահետումը և երեխաների սեռավարությունը:

Առցանց սիրահետումը լայնորեն վերաբերում է մեծահասակի հետ ընկերանալու և երեխայի վրա ազդելու գործընթացին (մինչև 18 տարեկան), համացանցի կամ այլ թվային տեխնոլոգիաների օգտագործման միջոցով՝ հեշտացնելով այդ երեխայի հետ կոնտակտային կամ ոչ կոնտակտային սեռական շփումը: Սիրահետման գործընթացի միջոցով հանցագործը փորձում է ձեռք բերել երեխայի պատրաստակամությունը՝ գաղտնիությունը պահպանելու և հայտնաբերումից ու պատժից խուսափելու համար²⁷:

²⁷ Անհայր կորած և շահագործման ենթարկված երեխաների միջազգային կենտրոն, «Երեխաների առցանց գրոմինգը/սիրահետումը սեռական նպատակներով. Մոդելային օրենսդրություն և գլոբալ վերանայում», 1-ին հրատարակություն (Կորած և շահագործված երեխաների միջազգային կենտրոն, 2017), https://www.icmec.org/wp-content/uploads/2017/09/Online-Grooming-of-Children_FINAL_9-18-17.pdf.

Կարևոր է գիտակցել, որ կան նաև հասակակիցների նկատմամբ բռնության դեպքեր:

ԻՆՏԵՐՊՈԼ-ը հայտնում է, որ համացանցը հեշտացնում է գրումինգը, իսկ մեծ թվով հեշտությամբ հասանելի պոտենցիալ թիրախներ ունենալու շնորհիվ էլ հնարավորություն է տալիս սիրահետողներին ներկայանալ երեխայի համար գրավիչ ձևով:

Երեխաների առցանց սեռական հանցագործները կիրառում են մանիպուլյացիա, հարկադրանք և գայթակղություն՝ նվազեցնելու արգելքները և դրդում են երեխաներին զբաղվել սեռական գործողությամբ: Սիրահետողը ձեռնարկում է խոցելի պոտենցիալ զոհին հայտնաբերելու միտումնավոր գործընթաց, երեխայի ընտանիքի վերաբերյալ հետախուզական տվյալների հավաքագրում, կիրառում է ճնշում կամ ամոթ/վախ՝ երեխային սեռական բռնության ենթարկելու համար: Սիրահետողները կարող են օգտագործել մեծահասակների պոռնոգրաֆիա և երեխաների բռնության կամ շահագործման նյութեր՝ իրենց պոտենցիալ թիրախներին տրամադրելու համար՝ ներկայացնելով երեխաների սեռական ակտիվությունը որպես բնական և նորմալ երևույթ: Համացանցը փոխել է մարդկանց փոխազդեցության ձևը և վերաիմաստավորել է «ընկեր» հասկացությունը: Սիրահետողը կարող է առցանց ընկերություն հաստատել երեխայի հետ շատ հեշտությամբ և արագ, ինչը ստիպում է վերագնահատել ավանդական «անձանոթ մարդկանց վտանգավորության» կրթական հաղորդագրությունները:

Առցանց գրումինգը/ սիրահետումն առաջին անգամ պաշտոնապես ճանաչվել է միջազգային իրավական փաստաթղթում 2007 թվականին՝ Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի կողմից (Լանզարոտեի կոնվենցիա): 23-րդ հոդվածը քրեականացնում է «երեխաներին սեռական նպատակներով հրահրելը», ինչը պահանջում է սեռական հանցագործություն կատարելու նպատակով երեխայի հետ հանդիպելու դիտավորյալ առաջարկություն, որին հաջորդում են «նման հանդիպման տանող նյութական գործողություններ»:²⁸

28 Լանզարոտեի Կոմիտե, Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի Կողմերի կոմիտե, Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով երեխաներին սեռական նպատակներով հրահրելը (գրումինգ/սիրահետում), կարծիք Լանզարոտեի կոնվենցիայի 23-րդ հոդվածի և դրա վերաբերյալ: Բացադրական գրություն, 2015թ. հունիսի 17, at <https://edoc.coe.int/en/children-s-rights/7064-lanzarote-committee-opinion-on-article-23-of-the-lanzarote-convention-and-its-explanatory-note.html> (վերջին այցելությունը՝ 2019 թվականի նոյեմբերի 6):

Սիրահետման²⁹ շատ դեպքերում երեխաները ենթարկվում են առցանց սեռական բռնության և շահագործման:³⁰ Լանզարոտեի կոնվենցիայով և գործող բազմաթիվ ազգային օրենքներով պահանջվող «հանդիպումն» ամբողջովին վիրտուալ է, բայց, այնուամենայնիվ, նույնքան վնասակար է երեխայի համար, որքան ֆիզիկական հանդիպումը:³¹ Շատ կարևոր է, որ գրումինգի քրեականացումը տարածվի «այն դեպքերի վրա, երբ սեռական բռնությունը ոչ թե անձամբ հանդիպման արդյունք է, այլ կատարվում է առցանց»: Սեռավարությունը կարող է առաջանալ որպես առցանց սիրահետման հատկանիշ կամ որպես առանձին հանցագործություն: Սեռավարությունը կարող է առաջանալ նաև առանց առցանց գրումինգի գործընթացի, իսկ որոշ դեպքերում առցանց սիրահետումը կարող է հանգեցնել սեռավարության³²: Սեռավարությունը կարող է տեղի ունենալ առցանց սիրահետման համատեքստում, քանի որ սիրահետողը մանիպուլյացիա է անում և ազդեցություն գործադրում երեխային՝ սիրահետման ընթացքում սպառնալիքների, ահաբեկման և իրեն սեռական լուսանկարներ ուղարկելու հարկադրանքի միջոցով (ինքնուրույն ստեղծած բովանդակություն): Եթե տուժողը չի տրամադրում պահանջված սեռական բարեհաճություններ, լրացուցիչ ինտիմ լուսանկարներ, գումար կամ այլ առավելություններ, ապա նրա լուսանկարները կարող են տեղադրվել առցանց՝ պատճառելով նվաստացում, անհանգստություն կամ ստիպել երեխային լրացուցիչ սեռական բնույթի նյութեր ստեղծել:

Սեռավարությունը դիտարկվում է որպես «վիրտուալ սեռական ոտնձգություն»՝ զոհերի վրա նմանատիպ հուզական և հոգեբանական ազդեցության պատճառով:³³ Որոշ դեպքերում բռնությունը այնքան տրավմատիկ է, որ զոհերը փորձել են ինքնապսակվել կամ ինքնասպանություն գործել, որպես բռնությունից փախչելու միջոց:

29 Անհայր կորած և շահագործման ենթարկված երեխաների ազգային կենտրոն (NCMEC), Սեռականություն, <http://www.missingkids.com/theissues/onlineexploitation/sexortion> (վերջին այցելությունը՝ 2019 թվականի նոյեմբերի 6):

30 Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության տերմինաբանական ուղեցույցներ, երեխաների սեռական շահագործման միջգերատեսչական աշխատանքային խումբ, Լյուքսեմբուրգ, հունվարի 28, 2016թ., D.4iii, 27-28, <http://luxembourgguidelines.org/անգլերեն-տարբերակ>

31 Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության տերմինաբանական ուղեցույցներ, երեխաների սեռական շահագործման միջգերատեսչական աշխատանքային խումբ, Լյուքսեմբուրգ, հունվարի 28, 2016թ., D.4iii, 27-28, <http://luxembourgguidelines.org/անգլերեն-տարբերակ>:

32 Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության տերմինաբանական ուղեցույցներ, երեխաների սեռական շահագործման միջգերատեսչական աշխատանքային խումբ, Լյուքսեմբուրգ, հունվարի 28, 2016թ., D.4iii, 27-28, <http://luxembourgguidelines.org/անգլերեն-տարբերակ>:

33 Բենջամին Ուիթսոն, «Սեքստորիոնգ. Կիրառանվորանություն, դեռահասներ և հեռակա սեռական ոտնձգություններ» (Բրուքինգսի ինստիտուտ, մայիսի 11, 2016 թ.), <https://www.brookings.edu/wp-content/uploads/2016/05/sexortion1-1.pdf>.

Եվրոպայում նշել է, որ երեխաների սեռավարության շրջանակը գնահատելու համար տեղեկատվություն հավաքելը դժվար է և կարող է խիստ թերզեկուցվել³⁴: Բացի այդ, առցանց սիրահետման և սեռավարության համար ընդհանուր տերմինաբանության և սահմանումների բացակայությունը խոչընդոտ է ճշգրիտ տվյալների հավաքագրման և գլոբալ խնդիրների իրական շրջանակի ըմբռնման համար:

2.6 Խոցելի խնդիրներ ունեցող երեխաներ

Երեխաները և երիտասարդները կարող են խոցելի լինել տարբեր պատճառներով: 2019-ին իրականացված հետազոտությունը ցույց է տվել, որ «խոցելի երեխաների թվային կյանքը հազվադեպ է ստանում նույն նրբերանգը և զգայուն ուշադրությունը, որը ձգտում է գրավել «իրական կյանքի» դժբախտությունները»: Ավելին, զեկույցում ասվում է, որ «լավագույն դեպքում նրանք [երեխաները և երիտասարդները] ստանում են նույն ընդհանուր առցանց անվտանգության խորհուրդները, ինչպես բոլոր մյուս երեխաները և երիտասարդները, սակայն անհրաժեշտ է մասնագետի միջամտությունը»:

Առանձնահատուկ խոցելիության երեք օրինակներ են՝ միգրանտ երեխաներ, աուտիզմի սպեկտրի խանգարումներով երեխաներ և հաշմանդամություն ունեցող երեխաներ), բայց, իհարկե, կան շատ ուրիշներ:

Միգրանտ երեխաներ

Միգրանտների նախապատմություն ունեցող երեխաներն ու երիտասարդները հաճախ գալիս են մեկ երկիր (կամ արդեն ապրում են այնտեղ)՝ ունենալով որոշակի սոցիալ-մշակութային փորձառություններ և ակնկալիքներ: Թեև տեխնոլոգիան սովորաբար համարվում է միացման և մասնակցության դյուրինացնող միջոց, սակայն առցանց ռիսկերն ու հնարավորությունները կարող են էապես տարբերվել տարբեր համատեքստերում: Ավելին, էմպիրիկ բացահայտումները և հետազոտությունները ցույց են տալիս ընդհանուր առմամբ թվային մեդիայի կենսական գործառույթը.

- Այն կարևոր է կողմնորոշվելու համար (նոր երկիր մեկնելիս):
- Ընդունող երկրի հասարակության/մշակույթին ծանոթանալու կենտրոնական գործառույթ է:
- Այն ընդունող երկրի հասարակության/մշակույթին յուրացնելու և ծանոթանալու կենտրոնական գործառույթ է:
- Սոցիալական լրատվամիջոցները կարող են առանցքային դեր խաղալ ընտանիքի և հասակակիցների կապը պահպանելու և ընդհանուր տեղեկություններ ստանալու համար:

³⁴ Եվրոպայի, «Օնլայն սեռական հարկադրանքը և շորթումը որպես հանցագործության ձև, որն ազդում է երեխաների վրա. Օրենքի կիրարկման հեռանկարը» (Կիրքերհանցագործության դեմ պայքարի եվրոպական կենտրոն, 2017 https://www.europol.europa.eu/sites/default/files/documents/online_sexual_coercion_and_extortion_as_a_form_of_crime_affecting_children.pdf).

Բազմաթիվ դրական կողմերի հետ մեկտեղ թվային մեդիան կարող է նաև մարտահրավերներ առաջացնել միգրանտների համար, այդ թվում՝

Ենթակառուցվածք. կարևոր է մտածել առցանց անվտանգ տարածքների մասին, որպեսզի միգրանտ երեխաներն ու երիտասարդները կարողանան օգտվել գաղտնիությունից և անվտանգությունից:

Ռեսուրսներ. միգրանտներն իրենց գումարի մեծ մասը ծախսում են կանխավճարային հեռախոսային քարտերի համար:

Ինտեգրում. միգրանտ երեխաներն ու երիտասարդները, բացի տեխնոլոգիաների հասանելիությունից, պետք է նաև լավ թվային կրթություն ստանան:

Աուտիզմի սպեկտրի խանգարում ունեցող երեխաներ (ԱՍԽ)

Աուտիզմի սպեկտրը ԴՍՄ-5 վարքագծի ախտորոշման գործընթացում ամփոփում է երկու հիմնական տիրույթ.

- Սահմանափակ և կրկնվող վարքագիծ («նմանության անհրաժեշտություն»):
- Սոցիալական և հաղորդակցական վարքագծի հետ կապված դժվարություններ:
- Հաճախակի զուգակցում մտավոր հաշմանդամության հետ, լեզվական խնդիրներ և այլն:

Տեխնոլոգիան և համացանցը երեխաներին և երիտասարդներին անսահման հնարավորություններ են տալիս սովորելու, հաղորդակցվելու և խաղալու համար: Այնուամենայնիվ, այս առավելությունների հետ մեկտեղ կան բազմաթիվ ռիսկեր, որոնց նկատմամբ ԱՍԽ ունեցող երեխաները և երիտասարդները կարող են ավելի խոցելի լինել:

- Համացանցը կարող է աուտիզմ ունեցող երեխաներին և երիտասարդներին հնարավորություններ ընձեռել շփվելու և հատուկ հետաքրքրություններ ունենալու համար, որոնք նրանք կարող են չունենալ ցանցից դուրս:
- Սոցիալական մարտահրավերները, ինչպիսիք են ուրիշների մտադրությունները հասկանալու դժվարությունը, կարող են այս խմբին խոցելի դարձնել վատ մտադրություններով «ընկերների» հանդեպ:
- Առցանց մարտահրավերները հաճախ կապված են աուտիզմի հիմնական բնութագրերի հետ: Կոնկրետ, հատուկ ուղեցույցը կարող է բարելավել անհատների առցանց փորձը, սակայն հիմքում ընկած մարտահրավերները մնում են:

Հաշմանդամություն ունեցող երեխաներ

Հաշմանդամություն ունեցող երեխաներն առցանց բախվում են ռիսկերի նույն ձևերով, ինչպես հաշմանդամություն չունեցող երեխաները, բայց նրանք կարող են նաև բախվել իրենց հաշմանդամության հետ կապված հատուկ ռիսկերի: Հաշմանդամություն ունեցող երեխաները հաճախ բախվում են իրենց համայնքային կյանքին մասնակցելու մերժման, խարանման (ֆիզիկական, տնտեսական և հասարակական վերաբերմունքի) խոչընդոտների: Այս փորձառությունները կարող են նպաստել, որ հաշմանդամություն ունեցող երեխան փնտրի սոցիալական փոխազդեցություններ և ընկերական հարաբերություններ առցանց տարածություններում, որոնք կարող են դրական լինել, բարձրացնել ինքնագնահատականը և ստեղծել աջակցության ցանցեր: Այնուամենայնիվ, դա կարող է նաև նրանց վտանգել, ինչպես գրումինգի կամ առցանց հրահրման և/կամ սեռական ոտնձգությունների դեպքերը: Հետազոտությունը ցույց է տալիս, որ այն երեխաները, ովքեր դժվարություններ են ունենում ցանցից դուրս, և նրանք, ովքեր տառապում են հոգեւոցիալական դժվարություններից, ապա նման միջադեպերի դեպքում մեծ ռիսկի են ենթարկվում³⁵:

Ընդհանուր առմամբ, այն երեխաները, ովքեր զոհ են դարձել անցանց ռեժիմում, ամենայն հավանականությամբ, կարող են զոհ դառնալ առցանց: Թեև հաշմանդամություն ունեցող երեխաներն ավելի վտանգված են առցանց, սակայն նրանք առցանց լինելու ավելի մեծ կարիք ունեն: Հետազոտությունները ցույց են տալիս, որ հաշմանդամություն ունեցող երեխաներն ավելի հավանական է, որ ենթարկվեն ցանկացած տեսակի բռնության³⁶, մասնավորապես, ավելի հավանական է, որ ենթարկվեն սեռական վիկտիմիզացիայի³⁷: Վիկտիմիզացիան կարող է ներառել ահաբեկում, ոտնձգություն, բացառում և խտրականություն՝ հիմնված երեխայի փաստացի կամ ընկալվող հաշմանդամության կամ նրա հաշմանդամության հետ կապված այնպիսի ասպեկտների, ինչպիսիք են՝ վարվելակերպը կամ խոսելը, սարքավորումները կամ ծառայությունները, որոնք օգտագործում են: Հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ գրումինգի, առցանց միջնորդության և/կամ սեռական ոտնձգությունների հեղինակները կարող են ներառել ոչ միայն երեխաներին թիրախ դարձնող հանցագործները, այլ նաև նրանց, ովքեր թիրախավորում են հաշմանդամություն ունեցող երեխաներին:

35 Էնդրյու Շրոք և այլք, «Պահանջում, ոտնձգություն և խնդրահարույց բովանդակություն», *Բերքմանի Ինտերնետի և հասարակության կենտրոն, Հարվարդի համալսարան, դեկտեմբեր 2008*, 87, https://cyber.harvard.edu/sites/cyber.law.harvard.edu/files/ISTTF-LitReviewDraft_0.pdf:

36 ՅՈՒՆԻՍԵՖ, «Աշխարհի երեխաների վիճակի մասին զեկույց. Հաշմանդամություն ունեցող երեխաներ», 2013, https://www.unicef.org/publications/files/SOWC2013_Exec_Summary_ENG_Lo_Res_24_Apr_2013.pdf

37 Կարրին Մյուլլեր-Ջոնսոն, Մանուել Պ. Էյսներ և Ինգրիդ Օբսոյթ, «Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երիտասարդների սեռական վիկտիմիզացիա. Տարածվածության մակարդակների ուսումնասիրություն, և ռիսկի և պաշտպանիչ գործոնների, Միջանձնային բռնության ամսագիր 29, հ.17 (նոյեմբեր 2014)՝ 3180–3206, <https://doi.org/10.1177/0886260514534529>

Նման իրավախախտները կարող են լինել «նվիրյալներ»՝ հաշմանդամություն չունեցող անձինք, ում սեռականորեն գրավում են հաշմանդամություն ունեցող անձինք (առավել հաճախ անդամահատվածներ կամ շարժունակության միջոցներ օգտագործողներ) կամ նրանք, ովքեր կարող են նաև հաշմանդամ ձևանալ³⁸: Նման մարդկանց գործողությունները կարող են ներառել հաշմանդամություն ունեցող երեխաների լուսանկարների և տեսանյութերի ներբեռնումը, (որոնք իրենց բնույթով անվնաս են) և/կամ դրանց տարածումը հատուկ ֆորումների կամ սոցիալական մեդիայի հաշիվների միջոցով: Ֆորումներում և սոցիալական մեդիայում հաշվետվության գործիքները հաճախ չունեն նպատակային կամ համապատասխան ուղի՝ նման գործողությունների դեմ պայքարելու համար: Մտահոգություններ կան, որ «կիսվելը» (ծնողները, որոնք տարածում են իրենց երեխաների տեղեկություններն ու լուսանկարներն առցանց) կարող է խախտել երեխայի գաղտնիությունը, հանգեցնել բուլինգի, պատճառեն անհարմարություն կամ բացասական հետևանքներ ունենալ հետագա կյանքում³⁹: Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողները կարող են կիսվել նման տեղեկատվությամբ և փնտրել աջակցություն կամ խորհուրդ՝ դրանով իսկ հաշմանդամություն ունեցող երեխաներին ենթարկելով անբարենպաստ հետևանքների և ավելի մեծ ռիսկի:

Հաշմանդամություն ունեցող որոշ երեխաներ կարող են բախվել համացանցի օգտագործման դժվարությունների կամ առցանց միջավայրից դուրս մնալու խնդրի հետ՝ անհասանելի դիզայնի պատճառով (օրինակ՝ հավելվածներ, որոնք թույլ չեն տալիս մեծացնել տեքստի չափը), պահանջվող հարմարանքների մերժումը (օրինակ՝ էկրանի ընթերցման ծրագրակազմը կամ հարմարվողական համակարգչային կառավարումը), համապատասխան աջակցության անհրաժեշտությունն (օրինակ՝ ուսուցում, թե ինչպես օգտագործել սարքավորումները, մեկ առ մեկ աջակցություն սոցիալական փոխազդեցությունների նավարկման համար)⁴⁰:

Պայմանագրի ռիսկի կամ դրույթների և պայմանների ստորագրման հետ կապված՝ հաշմանդամություն ունեցող երեխաներն ավելի բարձր ռիսկի են ենթարկվում՝ ընդունելով իրավական պայմաններ, որոնք երբեմն նույնիսկ մեծահասակները չեն կարողանում հասկանալ:

38 Ռիչարդ Բրունո, «Նվիրյալներ, հավակնորդներ և ցանկացողներ. Կեղծ հաշմանդամության երկու դեպք», *Սեռական և հաշմանդամություն 15, համար.4 (1997): 18*, <https://link.springer.com/content/pdf/10.1023/A:1024769330761.pdf>:

39 ՅՈՒՆԻՍԵՖ, «Երեխայի գաղտնիությունը համացանցի դարաշրջանում 2.0 և 3.0, քաղաքականության մարտահրավերները և հնարավորությունները», *Ինոցենտիի քննարկման փաստաթուղթ 2017-03 (ՅՈՒՆԻՍԵՖ, Ինոցենտիի հետազոտությունների գրասենյակ, մուտք է գործել 2020 թվականի հունվարի 16-ին*, https://www.unicef-irc.org/publications/pdf/Child_privacy_challenges_opportunities.pdf:

40 Այս իրավունքների վերաբերյալ ուղեցույցների համար տես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Կոնվենցիայի 9-րդ հոդվածը մատչելիության մասին և 21-րդ հոդվածն՝ արտահայտվելու և կարծիքի ազատության և տեղեկատվության հասանելիության մասին:

2.7 Երեխաների ընկալումներն առցանց ռիսկերի մասին

Ամբողջ աշխարհում բռնության ենթարկվելն, անհամապատասխան բովանդակության, ապրանքների և ծառայությունների հասանելիությունը, տվյալների պաշտպանության և գաղտնիության հարցերն այն ռիսկերն են, որոնք ընդգծված են երեխաների կողմից⁴¹:

Դեռահասները նշում են թվային տեխնոլոգիաների հետ իրենց ներգրավվածության վերաբերյալ մի շարք մտահոգություններ: Դրանք ներառում են սովորաբար քննարկվող առցանց անվտանգության մտահոգությունները, ինչպիսիք են՝ առցանց անձանոթների հետ շփվելու, անպատշաճ բովանդակություն մուտք գործելու կամ չարամիտ ծրագրերից և վիրուսներից վտանգվելու վախը, մինչդեռ մյուսների մտահոգությունները վերաբերում են իրենց հասանելի տեխնոլոգիաների հուսալիությանը, ծնողների իրենց «մասնավոր» առցանց կյանք ներխուժմանը և իրենց թվային գրագիտության հմտություններին⁴²:

ԵՄ երեխաներն առցանց-ի հետազոտությունը ցույց է տալիս, որ պոռնոգրաֆիան և բռնության բովանդակությունը գլխավորում են երեխաների առցանց մտահոգությունները Եվրոպայում: Ընդհանուր առմամբ, տղաներին շատ անհանգստացնում է բռնությունը, բայց աղջիկներն ավելի շատ են մտահոգված շփման հետ կապված ռիսկերով⁴³: Ռիսկերի վերաբերյալ մտահոգությունն ավելի մեծ է «բարձր օգտագործման, բարձր ռիսկայնության» մակարդակ ունեցող երկրների երեխաների շրջանում:

Լատինական Ամերիկայում երեխաների հետ խորհրդակցությունները ցույց են տվել, որ գաղտնիության կորուստը, բռնությունը և ոտնձգությունները հիմնական մտահոգություններն են⁴⁴: Երեխաները հայտնում են, որ իրենք շփվել են անձանոթ մարդկանց հետ, իսկ սա հատկապես առցանց խաղեր խաղալու ժամանակ է տեղի ունենում: Նման իրավիճակներում հիմնական ռազմավարությունը կարծես թե չի ներգրավում և/կամ արգելափակում անձին: Աղջիկները վաղ տարիքից բախվում են սոցիալական ցանցերում ոտնձգությունների, բայց նրանց հաջողվում է ինքնուրույն ղեկավարել բռնության այս ձևերը՝ արգելափակելով օգտատերերին և փոխելով գաղտնիության կարգավորումները:

41 Ամանդա Երրորդ և այլք, «Երեխաների իրավունքները թվային դարաշրջանում», (Մեյքուրն. Օսոնգ և համալսելի հետազոտության կենտրոն, Սեպտեմբեր 2014, http://www.uws.edu.au/__data/assets/pdf_file/0003/753447/Childrens-rights-in-the-digital-age.pdf.)

42 Ամանդա Երրորդ և այլք, «Երիտասարդ և առցանց. Երեխաների տեսակետները թվային դարաշրջանում կյանքի վերաբերյալ», Աշխարհի երեխաների վիճակը 2017 թվականի ուղեկից զեկույց (Սիդնեյ: Արևմտյան Սիդնեյի համալսարան, 2017): Ձեկույցն ամփոփել է 10-18 տարեկան 490 երեխաների տեսակետները՝ 26 տարբեր երկրներից, ովքեր խոսում են 24 պաշտոնական լեզուներով:

43 Լիվինգստոն Ս.(2014) ԵՄ երեխաներն առցանց, Սրացված տվյալներ, մեթոդներ, առաջարկություններ, LSE, Լոնդոն. ԵՄ երեխաներն առցանց, <https://lisedesignunit.com/EUKidsOnline/>:

44 Contectados al Surgain, «HABLATAM».

Ոտնձգությունները գալիս են այն օգտատերերից, ովքեր երբեմն իսպաներեն չեն խոսում, բայց կարողանում են նրանց ուղարկել լուսանկարներ, ընկերության առաջարկներ և մեկնաբանել իրենց գրառումները: Որոշ տղաներ նույնպես հայտնում են, որ նման խնդրանքներ են ստացել:

Աշխարհի շատ մասերում երեխաները լավ հասկանում են որոշ ռիսկերը, որոնց բախվում են առցանց⁴⁵: Հետազոտությունները ցույց են տվել, որ երեխաների մեծամասնությունը կարողանում է տարբերակել կիբերբուլինգն առցանց կատակներից կամ ծաղրից՝ գիտակցելով, որ կիբերբուլինգը հանրային հարթություն ունի և նախատեսված է միասնալու համար:⁴⁶

3. Երեխաների առցանց պաշտպանության ազգային ռազմավարության նախապատրաստում

Ազգային կառավարությունները և քաղաքականություն մշակող հաստատությունները պետք է բացահայտեն լավագույն փորձը և ներգրավեն հիմնական շահագրգիռ կողմերին՝ երեխաների առցանց պաշտպանության ազգային ռազմավարություն մշակելու և երեխաների ու երիտասարդների համար առցանց անվտանգությունը խթանելու համար:

Հետևյալ բաժիններն ընդգծում են բնորոշ դերակատարներին և շահագրգիռ կողմերին՝ երեխաներին առցանց պաշտպանելու, նրանց հնարավոր դերի և պարտականությունների ուրվագծման հարցում:

3.1 Դերակատարներ և շահագրգիռ կողմեր

Քաղաքականություն մշակողները կարող են բացահայտել համապատասխան անձանց, խմբերին և կազմակերպություններին, որոնք ներկայացնում են այս դերակատարներին, շահագրգիռ կողմերին և իրենց իրավասության շրջանակներում յուրաքանչյուրին: Նրանց ցանկացած ընթացիկ, պլանավորված և հնարավոր գործողությունների գնահատումը կարևոր է երեխաների առցանց պաշտպանության ռազմավարությունների ազգային համակարգման և կազմակերպման համար:

Երեխաները և երիտասարդները

Ամբողջ աշխարհում երեխաներն ու երիտասարդները ցույց են տվել, որ կարող են շատ հեշտությամբ հարմարվել և օգտագործել նոր տեխնոլոգիաները:

⁴⁵ 2016 թվականից ՀՄՄ-ն Երեխաների առցանց պաշտպանության (ԵԱՊ) ծրագրի շրջանակներում խորհրդակցություններ է իրականացնում երեխաների և մեծահասակների շահագրգիռ կողմերի հետ համապատասխան հարցերի շուրջ, ինչպիսիք են կիբերհարձակումը, թվային գրագիտությունը և երեխաների առցանց գործունեությունը:

⁴⁶ ՅՈՒՆԻՍԵՖ, «Երեխաների գլոբալ առցանց համեմատական զեկույց (2019 թ.)»:

Համացանցը գնալով ավելի կարևոր է դառնում դպրոցներում և որպես ասպարեզ, որտեղ երեխաները կարող են աշխատել, խաղալ և շփվել: Երեխաների հիմնադրամ դաշինքի վերջին զեկույցի համաձայն՝ հարցված երեխաների միայն 18,1 տոկոսն է կարծում, որ կառավարող մարդիկ գործում են իրենց պաշտպանելու համար: Կարևոր է, որ քաղաքականություն մշակողները ներգրավվեն երեխաներին այս հարցում՝ ճանաչելով նրանց լսելու իրավունքը (Հոդված 12 CRC): Երեխաներին պաշտպանելու համար քաղաքականություն մշակողները պետք է ստանդարտացնեն երեխայի սահմանումը բոլոր իրավական փաստաթղթերում: Երեխան պետք է սահմանվի որպես 18 տարեկանից ցածր յուրաքանչյուր ոք: Սա համահունչ է ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (UNCRC) 1-ին հոդվածին, որը սահմանում է, որ «երեխա նշանակում է 18 տարեկանից ցածր յուրաքանչյուր անձ»: Ընկերություններին չպետք է թույլ տրվի վերաբերվել որպես չափափակ ցանկացած մեկի, ով 18 տարեկանից ցածր է, բայց օրինակաչորեն բավարար մեծ է համաձայնություն տալու տվյալների մշակման համար: Այս նեղ սահմանումը հիմնավորված չէ մանկության զարգացման կարևորագույն փուլերի վերաբերյալ որևէ ապացույցով: Այն խաթարում է իրավունքները և սպառնում երեխաների անվտանգությանը:

Թվում է, թե շատ երեխաներ կարող են վստահ օգտագործել տեխնոլոգիաները⁴⁷, սակայն շատերն իրենց անապահով են զգում առցանց և մի շարք մտահոգություններ ունեն⁴⁸ համացանցի հետ կապված:

Երեխաների և երիտասարդների փորձի բացակայությունը կարող է նրանց խոցելի դարձնել մի շարք ռիսկերի նկատմամբ: Նրանք իրավունք ունեն օգնություն և պաշտպանություն ակնկալել: Կարևոր է նաև հիշել, որ ոչ բոլոր երեխաներն ու երիտասարդները նույն ձևով կփորձարկեն համացանցը կամ նոր տեխնոլոգիաները: Ֆիզիկական կամ այլ հաշմանդամությամբ պայմանավորված հատուկ կարիքներով որոշ երեխաներ կարող են հատկապես խոցելի լինել առցանց միջավայրում և լրացուցիչ աջակցության կարիք ունենալ: Հարցումները բազմիցս ցույց են տվել, որ այն, ինչ մեծահասակների կարծիքով անում են երեխաներն ու երիտասարդներն առցանց, և այն, ինչ իրականում տեղի է ունենում, կարող են շատ տարբեր լինել: Հարցված երեխաների կեսն ասել է, որ իրենց երկրում մեծահասակները չեն լսում իրենց կարծիքը կարևոր հարցերի վերաբերյալ⁴⁹:

47 Երեխաների Հիմնադրամի Դաշինք «ԲՈՆՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԴԵՄ, ԻՆՉՊԵՍ ԲԱՅԱՏՐՈՒՄ ԵՆ ԵՐԵՒԱՆԵՐԸ», Փրկել ձայների մեծ երազանքները, 2019 https://childfundalliance.org/zdocs/a9357061-749f-4ebf-a1e9-b1aee81cb216/SVBD-THE_REPORT-digital.pdf.

48 Եվրոպայի խորհուրդ, «Դա մեր աշխարհն է. Երեխաների տեսակետները, թե ինչ պես պաշտպանել իրենց իրավունքները թվային աշխարհում», զեկույց երեխաների խորհրդավորության մասին (Եվրոպայի խորհուրդ, Երեխաների իրավունքների բաժին, հոկտեմբեր 2017), <https://rm.coe.int/it-s-our-world-children-s-views-on-how-to-protect-irights-in-the-/1680765dff>.

49 Երեխաների Հիմնադրամի Դաշինք «ԲՈՆՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՒԱՆԵՐ Ի ԴԵՄ, ԻՆՉՊԵՍ ԲԱՅԱՏՐՈՒՄ ԵՆ ԵՐԵՒԱՆԵՐԸ»:

Այդ իսկ պատճառով, կարևոր է ապահովել, որ քաղաքականություն մշակելու համար ձեռք բերվեն համապատասխան մեխանիզմներ, որպեսզի գտնվեն բոլոր երեխաների և երիտասարդների ձայները լսելի դարձնելու, և որ նրանց կոնկրետ փորձը կիրառելու համար հաշվի առնվող տեխնոլոգիաներն ազգային մակարդակում և այս ոլորտում:

Ծնողներ, խնամակալներ և մանկավարժներ

Երեխաների հետ ամենաշատ ժամանակն անցկացնում են ծնողները, խնամակալները և դաստիարակները: Նրանք պետք է կրթվեն թվային գրագիտությամբ, որպեսզի հասկանան առցանց միջավայրը և կարողանան պաշտպանել երեխաներին և սովորեցնել նրանց, ինչպես պաշտպանվել: Կրթական հաստատությունները հատուկ պատասխանատվություն են կրում երեխաներին սովորեցնելու համար, ինչպես պետք է ավելի անվտանգ մնալ առցանց: Եթե նրանք օգտվում են համացանցից դպրոցում, տանը կամ այլուր, ապա քաղաքականություն մշակողները պետք է ազգային ուսումնական ծրագրերում ներառեն թվային գրագիտությունը շատ վաղ տարիքից (3-18 տարեկան): Սա թույլ կտա երեխաներին պաշտպանվել, իմանալ իրենց իրավունքները, հետևաբար, օգտագործել համացանցը որպես գիտելիքներ ընձեռող միջոց:⁵⁰

Քաղաքականություն մշակողները պետք է գիտակցեն, որ ծնողներն ու խնամակալները, գրեթե միշտ լինելու են իրենց երեխաների պաշտպանության և աջակցության ամենաազդեակները: Այնուամենայնիվ, երբ խոսքը վերաբերում է համացանցին, ապա նրանք կարող են իրենց մի փոքր անվստահ զգան: Այստեղ, դպրոցները կարող են հանդես գալ որպես ծնողների և խնամակալների հետ կապ հաստատելու կարևոր ուղի՝ նրանց իրազեկելու ռիսկերի և բազմաթիվ դրական հնարավորությունների մասին, որոնք ներկայացնում են նոր տեխնոլոգիաները: Այնուամենայնիվ, դպրոցները չպետք է լինեն ծնողներին և խնամակալներին օգնության հասնելու միակ ճանապարհը: Կարևոր է օգտագործել բազմաթիվ տարբեր ուղիներ՝ հնարավորինս մեծ թվով ծնողների և խնամակալների հետ կապ հաստատելու հնարավորությունն առավելագույնի հասցնելու համար: Ոլորտն այստեղ էական դեր ունի՝ աջակցելու իր օգտատերերին կամ հաճախորդներին: Ծնողները և խնամակալները կարող են ընտրել իրենց երեխայի առցանց գործունեությունն ու հասանելիությունը և կառավարել, երեխայի հետ խոսել տեխնոլոգիաների ճիշտ օգտագործման և վարքագծի կանոնների մասին, հասկանալ, թե ինչ է անում երեխան առցանց, որպեսզի ընտանեկան զրույցը միավորի առցանց և անցանց փորձառությունները:

Ծնողները և խնամակալները նույնպես պետք է լավ օրինակ լինեն իրենց երեխաների համար, թե ինչպես օգտագործել սարքերը և պատշաճ կերպով իրենց պահեն համացանցում:

⁵⁰ ՅՈՒՆԻՍԵՖ, «Երեխաների և թվային կապի քաղաքականության ուղեցույց» (Քաղաքական լաբորատորիա, Տվյալներ, Հեղափոխություն և քաղաքականություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, հունիս 2018), <https://www.unicef.org/esa/media/3141/file/PolicyLab-Guide-DigitalConnectivity-Nov.6.18-lowres.pdf>.

Քաղաքականություն մշակողները պետք է գիտակցեն, որ ծնողների և խնամակալների հետ անհրաժեշտ է խորհրդակցել՝ երեխաներին առցանց պաշտպանելու վերաբերյալ նրանց տեսակետները, փորձառությունները և պատկերացումները հասկանալու համար:

Եվ վերջապես, քաղաքականություն մշակողներն այլ պետական հաստատությունների հետ միասին կարող են մշակել հանրային իրազեկման արշավներ՝ ներառելով ծնողների, խնամակալների և մանկավարժների: Հանրային գրադարանները, առողջապահական կենտրոնները, նույնիսկ առևտրի կենտրոնները կարող են համապատասխան վայրեր ապահովել էլեկտրոնային անվտանգության և թվային հմտությունների մասին տեղեկատվության համար: Այս առաջադրանքն իրականացնելու համար պետք է ապահովեն, որ տրված խորհուրդներում լինի չեզոքություն՝ զերծ որևէ մասնավոր շահից և ընդգրկի թվային տարածության մեջ գտնվող հարցերի լայն տեսականի:

Արդյունաբերություն

Արդյունաբերությունն էկոհամակարգի հիմնական շահագրգիռ կողմերից մեկն է, քանի որ ոլորտը տիրապետում է տեխնոլոգիական գիտելիքներին, որին քաղաքականություն մշակողները պետք է անդրադառնան և հասկանան՝ իրավական դաշտը զարգացնելու համար: Այսպիսով, էական է, որ քաղաքականություն մշակողները ներգրավեն արդյունաբերությանն առցանց երեխաների պաշտպանության մասին օրենքների մշակման գործընթացում:

Կարևոր է նաև խրախուսել, որպեսզի արդյունաբերությունը նոր տեխնոլոգիաներ մշակելիս ընդգրկեն իրենց բիզնեսում անվտանգության նախագծման մոտեցումը: Ակնհայտ է, որ ընկերությունները, որոնք մշակում կամ տրամադրում են նոր տեխնոլոգիական ապրանքներ և ծառայություններ, պետք է օգնեն իրենց օգտատերերին հասկանալու, թե ինչպես են նրանք աշխատում, ինչպես օգտագործել դրանք անվտանգ և պատշաճ կերպով:

Արդյունաբերությունը մեծ պատասխանատվություն ունի խթանելու առցանց և անվտանգության օրակարգի մասին իրազեկվածությանը, հասկապես երեխաներին և նրանց ծնողներին կամ խնամակալներին, ինչպես նաև ավելի լայն համայնքին: Այս կերպ ներգրավվելով՝ ոլորտի շահագրգիռ կողմերն ավելին կսովորեն այլ կողմերի մտահոգությունների, ռիսկերի ու վնասների մասին, որոնց ենթարկվում են վերջնական օգտագործողները: Արդյունաբերությունը կարող է այդ գիտելիքներով շտկումներ մտցնել առկա ապրանքների ու ծառայությունների մեջ և բացահայտել զարգացման վտանգները:

Արհեստական ինտելեկտի վերջին զարգացումներն արդյունաբերության համար ճանապարհ է հարթում՝ շատ ավելի ուժեղ ստուգումներ և հավասարակշռություններ ստեղծելու, օգտատերերին բացահայտելու, երեխաների առցանց դրական վարքագծի համար նպաստավոր միջավայր ապահովելու համար:

Որոշ երկրներում համացանցը կառավարվում է ինքնակարգավորման կամ համակարգավորման շրջանակով: Այնուամենայնիվ, մի շարք երկրներ քննարկել կամ ներդրել են իրավական և կարգավորող շրջանակներ, ներառյալ՝ ընկերությունների պարտավորությունները հայտնաբերելն, արգելափակելը և/կամ երեխաներին ուղղված վտանգը հարթակներից կամ ծառայություններից հեռացնելը, ինչպես նաև տրամադրել հաշվետվության հստակ ուղիներ և աջակցության հասանելիություն:

Հետազոտական համայնքը և հասարակական կազմակերպությունները

Համալսարաններում և հետազոտական համայնքում, ամենայն հավանականությամբ, կգտնվեն մի շարք ակադեմիկոսներ և գիտնականներ, ովքեր մասնագիտական հետաքրքրություն և շատ մանրամասն գիտելիքներ ունեն համացանցի սոցիալական և տեխնիկական ազդեցության վերաբերյալ: Նրանք շատ արժեքավոր ռեսուրս են ազգային կառավարությունների և քաղաքականություն մշակողների համար՝ ռազմավարություններ մշակելու և օգնելու գործում, որոնք հիմնված են փաստերի և հիմնավոր ապացույցների վրա: Նրանք կարող են նաև հանդես գալ որպես ինտելեկտուալ հակակշիռ բիզնես շահերին, որոնք երբեմն կարող են լինել չափազանց կարճաժամկետ և առևտրային:

Նմանապես, հասարակական կազմակերպությունները (<4) համայնքում հանդիսանում են փորձի և տեղեկատվության անգնահատելի ռեսուրսներ՝ երեխաներին, ծնողներին, խնամակալներին և մանկավարժներին օգնության հասնելու, ծառայություններ մատուցելու, խթանելու առցանց անվտանգության օրակարգը, ընդհանուր առմամբ, հանրային շահը պաշտպանելու համար:

Իրավապահ մարմիններ

Ցավալի է փաստը, որ որքան էլ տեխնոլոգիան հրաշալի է, բայց այն գրավել է նաև քրեական և հակահասարակական տարրերի ուշադրությունը: Համացանցը մեծապես մեծացրել է ԵՄԲՆ-ի և այլ առցանց վնասների շրջանառությունը: Սեռական գիշատիչները համացանցից օգտվել և երեխաների հետ սկզբնական կապ են հաստատել՝ գայթակղելով նրանց շփման շատ վստասկար ձևերով՝ առցանց և անցանց: Բուլինգը և ոտնձգության այլ ձևերը կարող են մեծ վնաս հասցնել երեխաների կյանքին, և համացանցը նոր ճանապարհ է ստեղծել դրա համար:

Այդ պատճառով կարևոր է իրավապահ մարմինների լիարժեք ներգրավվածությունը ցանկացած ամբողջական ռազմավարության մեջ, որը կօգնի երեխաների և երիտասարդների համար համացանցն ավելի անվտանգ դարձնել: Իրավապահ մարմինների աշխատակիցները պետք է համապատասխան պատրաստվածություն ունենան, որպեսզի երեխաների և երիտասարդների նկատմամբ համացանցի հետ կապված հանցագործությունների հետաքննությունն իրականացնեն: Նրանց անհրաժեշտ է համապատասխան մակարդակի տեխնիկական գիտելիքներ և հասանելիություն դատաբժշկական

հաստատություններին, որոնք հնարավորություն կտան նվազագույն ժամանակում համակարգչից կամ համացանցից ստացված տվյալները հանել և մեկնաբանել:

Բացի այդ, շատ կարևոր է, որ իրավապահ մարմինները հստակ մեխանիզմներ ստեղծեն, որոնք հնարավորություն կտան երեխաների և երիտասարդներին կամ հասարակության որևէ անդամի հայտնել ցանկացած միջադեպի կամ մտահոգության մասին, որը կարող է լինել երեխայի կամ երիտասարդի առցանց անվտանգության վերաբերյալ: Շատ երկրներ, օրինակ, ստեղծել են թեժ գծեր՝ հեշտացնելու ԵՄԲՆ-ի մասին հաղորդումները, և կան նմանատիպ հատուկ մեխանիզմներ՝ հեշտացնելու այլ տեսակի խնդիրների, օրինակ՝ ահաբեկման մասին հաղորդումները: Քաղաքականություն մշակողները պետք է աշխատեն Ինտերնետ թեժ գծերի միջազգային ասոցիացիայի (INHOPE) հետ՝ աջակցելով նրանց ԵՄԲՆ-ի հաշվետվությունների գնահատման և մշակման հարցում, ինչպես նաև օգտվեն INHOPE-ի աջակցությունից այնտեղ, որտեղ չկա թեժ գիծ: Քաղաքականություն մշակողները պետք է ապահովեն, որ իրավապահների և այլ շահագրգիռ կողմերի միջև լինեն բաց հաղորդակցման ուղիներ: Իրավապահ մարմիններն ազգային սահմաններում բռնագրավված ԵՄԲՆ-ի առաջնային աղբյուրն է: Պետք է իրականացվի այս նյութն ուսումնասիրելու գործընթաց, տեղացի տուժածներին նույնականացնելու համար: Եթե դա հնարավոր չէ, ապա նյութը պետք է փոխանցվի ԻՆՏԵՐՊՈԼ՝ Երեխաների սեռական շահագործման միջազգային տվյալների (ICSE) բազայում ներառելու համար: Քաղաքականություն մշակողներն ամբողջ աշխարհում պետք է ապահովեն միջազգային համագործակցությունն իրավապահ մարմինների հետ: Սա կնվազեցնի պաշտոնական գործընթացների ժամանակը և թույլ կտա գործակալներին ավելի արագ արձագանքել:

Սոցիալական ծառայություններ

Այն դեպքերում, երբ երեխաները և երիտասարդները կտուժեն կամ բռնության կենթարկվեն առցանց, (օրինակ՝ կտեղադրվի նրանց անպատշաճ կամ անօրինական լուսանկարը), նրանք, ամենայն հավանականությամբ, կունենան մասնագիտացված և երկարաժամկետ աջակցության կամ խորհրդատվության կարիք: Հնարավոր է, որ լինի նաև համապարփակ ծառայությունների և վերականգնողական պրակտիկայի կարիք իրավախախտների համար, հատկապես՝ երիտասարդ, ովքեր նույնպես կարող էին լինել առցանց կամ անցանց չարաշահումների զոհ: Սոցիալական ծառայությունների շրջանակներում աշխատող մասնագետները պետք է համապատասխան վերապատրաստում անցնեն, որպեսզի կարողանան նման աջակցություն ցուցաբերել: Աջակցությունը պետք է տրամադրվի առցանց և անցանց:

Առողջապահական ծառայություններ

Երեխայի նկատմամբ բռնության ցանկացած դեպքի հետևանքով առաջացած առողջապահական ծառայության անհրաժեշտությունը պետք է ազգային մակարդակով տրամադրվի և ներառվի առողջապահության հիմնական ծրագրում:

Առողջապահական հիմնարկները պետք է չարաշահումների մասին պարտադիր հաղորդագրություն ներկայացնեն: Առողջապահության ոլորտի մասնագետները պետք է ունենան համապատասխան սարքավորումներ և գիտելիքներ, որպեսզի կարողանան աջակցել երեխաներին այս հարցում: Առողջապահական ծառայությունները պետք է նաև ընդգրկեն երեխաների հոգեկան առողջության և բարեկեցության աջակցությունը:

Կառավարության նախարարությունները

Երեխաների առցանց պաշտպանության քաղաքականությունը կմտնի մի շարք նախարարություններ, և կարևոր է բոլոր կառույցների ներգրավվածությունը ցանկացած հաջող ազգային ռազմավարության և գործողությունների ծրագրի համար:

Կարող են ներառել.

- Ներքին գործերը
- Առողջապահությունը
- Կրթությունը
- Արդարադատությունը
- Թվային / Տեղեկատվական ոլորտը
- Կարգավորող մարմինները

Կարգավորող մարմինները լավագույնս կարող են նպաստել վերահսկիչի դերին՝ պետական կառույցների հետ համագործակցությամբ: Սա կարող է ներառել լրատվամիջոցների և տվյալների պաշտպանության կարգավորող մարմինները:

Լայնաշերտ, բջջային և Վայֆայ (WiFi) անլար ցանցի օպերատորներ

Օպերատորները կարող են հայտնաբերել, արգելափակել և զեկուցել իրենց ցանցում հայտնաբերված անօրինական բովանդակության մասին և ծնողներին տրամադրել իրենց երեխաների համացանցին հասանելիությունը կարգավորելու համար ընտանիքին հարմար գործիքներ և ծառայություններ: Մատակարարների համար կարևոր է հավասարապես ապահովել քաղաքացիական ազատության և գաղտնիության պահպանումը:

Երեխաների իրավունքները

Երեխաների իրավունքների պաշտպանության անկախ ինստիտուտները կարող են վճռորոշ դեր խաղալ երեխաների առցանց պաշտպանության ապահովման գործում:

Չնայած նրանց մանդատները տարբեր են, բայց նման հաստատությունները հաճախ ունեն գործառույթներ.

- Վերահսկել օրենքը, երեխաների իրավունքների պաշտպանության քաղաքականության և պրակտիկայի ազդեցությունը,
- նպաստել մարդու իրավունքների միջազգային չափանիշների ներդրմանն ազգային մակարդակում,
- հետաքննել երեխաների իրավունքների խախտումները
- փորձաքննություն տրամադրել դատարաններին երեխաների իրավունքների վերաբերյալ
- ապահովել երեխաների՝ մարդու իրավունքներին առնչվող հարցերի վերաբերյալ տեսակետները լսվելու, ներառյալ՝ համապատասխան օրենքների և քաղաքականության մշակումը
- նպաստել երեխաների իրավունքների հանրային ըմբռնմանը և իրազեկմանը
- ձեռնարկել մարդու իրավունքների վերաբերյալ կրթության և վերապատրաստման նախաձեռնություններ:

Կարևոր է ներառել երեխաների հետ անմիջական խորհրդատվությունը, ինչպես նրանց իրավունքն է՝ ՄԱԿ-ի Կոնգրեսի Կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն: Երեխաների համար մարդու իրավունքների անկախ հաստատությունների խորհրդատվական, հետաքննական, իրազեկության բարձրացման և կրթական գործառույթները բոլորն էլ կարևոր են այն վնասի կանխարգելման և արձագանքման համար, որը երեխաները կարող են ենթարկվել առցանց: Հետևաբար, նման հաստատությունները պետք է լինեն համապարփակ, իրավունքների վրա հիմնված մոտեցում մշակելու հիմքում՝ ամրապնդելու երեխաների առցանց պաշտպանությունը կարգավորող իրավական, կարգավորող և քաղաքականության շրջանակները, ներառյալ երեխաների հետ անմիջական խորհրդատվությունը՝ ՄԱԿ-ի Կոնգրեսի Կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն:

Վերջին ժամանակներում եղել են նաև իրավասությունների օրինակներ, որոնք ներկայացնում կամ դիտարկում են պետական մարմինների ներդրումը, որոնք ունեն հատուկ մանդատ՝ աջակցելու առցանց երեխայի իրավունքներին, այդ թվում՝ նրանց պաշտպանությունը բռնությունից կամ վնասից: Եթե գոյություն ունեն նման գործակալություններ, ապա դրանք պետք է նաև սերտորեն կապված լինեն ազգային մակարդակով՝ երեխաների առցանց պաշտպանությանն ուղղված արձագանքն ուժեղացնելու ջանքերի հետ:

3.2 Երեխաների առցանց պաշտպանության վերաբերյալ առկա պատասխանները

Ազգային և միջազգային մակարդակներում գործելու համար մշակվել են մի քանի նախաձեռնություններ՝ հաշվի առնելով ՏՀՏ-ների աճող կարևորությունը երեխաների կյանքում և ամենաերիտասարդների համար բնորոշ ռիսկերը:

Ազգային մոդելներ

Ազգային մակարդակում պետք է կարևորվեն մի քանի օրենսդրություններ, որոնք ընդգրկում են երեխաների առցանց պաշտպանության համապարփակ շրջանակի կարևոր ասպեկտները: Դրանք ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

- Աուդիովիզուալ մեդիա ծառայությունների դիրեկտիվ (AVMSD) (վերանայվել է 2018թ., ԵՄ)
- Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգ (GDPR) (2018, ԵՄ)

Եղել են նորարարական զարգացումներ անդամ պետությունների կարգավորիչ և ինստիտուցիոնալ արձագանքում երեխաների առցանց անվտանգության և բարեկեցության սպառնալիքներին: Չկա որևէ կերպ արձագանքելու ԵՄՇՆ-ին, կիրքերհարձակմանը և այլ վնասներին, որոնց երեխաները հանդիպում են առցանց, սակայն հատկանշական է, որ վերջին մի քանի տարիներին փորձարկվել են նոր մոտեցումներ:

Տարիքին համապատասխան օրենսգրքի նախագիծ (2019թ., Միացյալ Թագավորություն)

2019-ի սկզբին Տեղեկատվական հանձնակատարների գրասենյակը հրապարակեց իր «Տարիքին համապատասխան օրենսգրքի նախագիծ» առաջարկները՝ երեխաների առցանց պաշտպանության համար:

Առաջարկվող օրենսգիրքը կենտրոնացած էր երեխայի լավագույն շահերի վրա, ինչպես սահմանված է Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայում (UNCRC): Սահմանում էր նաև մի շարք ակնկալիքներ արդյունաբերության համար: Դրանք ներառում են տարիքի ստուգման լուրջ միջոցառումներ, երեխաների համար տեղորոշման ծառայությունների լռելյայն անջատում, արդյունաբերության կողմից երեխաների անձնական տվյալների միայն նվազագույն քանակության հավաքում և պահպանում, որպեսզի ապրանքները նախագծով ապահով լինի, բացատրությունները տարիքին համապատասխան և մատչելի:

Վնասակար թվային հաղորդակցության ակտ (վերանայվել է 2017 թ., Նոր Զելանդիա)

2015 թվականի օրենսդրությունը կիբերչարաշահումը դարձրեց հատուկ հանցագործություն և կենտրոնանում է վնասների լայն շրջանակի՝ կիբեր հարձակումից մինչև վրեժխնդրություն: Այն նպատակ ունի զսպել, կանխել և նվազեցնել թվային վնասակար հաղորդակցությունը, անօրինական դարձնել թվային հաղորդակցության հրապարակումը՝ մեկ ուրիշին լուրջ հուզական անհանգստություն պատճառելու նպատակով և սահմանում է հաղորդակցման 10 սկզբունքներ: Այն հնարավորություն է տալիս օգտատերերին բողոքել անկախ կազմակերպությանը, եթե այդ սկզբունքները խախտվեն կամ դիմել դատարան հաղորդակցության հեղինակի դեմ, եթե խնդիրը չլուծվի:

Էլեկտրոնային անվտանգության հանձնակատար (2015թ., Ավստրալիա)

Էլեկտրոնային անվտանգության հանձնակատարն աշխարհում առաջին պետական գործակալությունն է, որը հատուկ նվիրված է առցանց անվտանգությանը: Այն հիմնադրվել է 2015թ-ին: Էլեկտրոնային անվտանգությունն օրենսդրական դեր ունի՝ առաջնորդելու, համակարգելու, կրթելու և առցանց անվտանգության հարցերի վերաբերյալ խորհուրդներ տալու, որպեսզի ապահովի, որ բոլոր ավստրալացիներն ունենան անվտանգ, դրական և հզոր առցանց փորձառություններ: Էլեկտրոնային անվտանգությունը կառավարում է հետաքննական սխեմաներ, որոնք ուսումնասիրում են մի շարք վնասներ, այդ թվում՝ երեխաների լուրջ կիբերհարձակում, լուսանկարի վրա հիմնված չարաշահում և արգելված բովանդակություն: Այն իրավասու է հետաքննել և միջոցներ ձեռնարկել՝ անդրադառնալով այս տեսակի վնասների հետ կապված բողոքներին կամ հաղորդումներին, ներառյալ՝ որոշ դեպքերում ֆիզիկական անձանց և առցանց ծառայությունների համար նյութերի հեռացման ծանուցումներ տալու իրավունքը: Իր հետաքննական լիազորությունների հետ մեկտեղ Էլեկտրոնային անվտանգությունն ընդունում է համայնքային մի ամբողջ մոտեցում, որն ընդգրկում է սոցիալական, մշակութային և տեխնոլոգիական նախաձեռնություններ և միջամտություններ: Դրական կանխարգելումը, պաշտպանությունը և ակտիվ ջանքերը համապարփակ մոտեցում են ապահովում առցանց անվտանգությանը:

Միջազգային մոդելներ

Միջազգային և անդրազգային մակարդակներում առաջարկություններ և չափորոշիչներ են տրվել տարբեր շահագրգիռ կողմերից: Ներքոնշյալ ուղեցույցներն են հիմք հանդիսացել նաև այս ուղեցույցների համար:

Երեխաների վաճառքի, մանկական մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի վերաբերյալ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի կամ ընտիր արձանագրության իրականացման ուղեցույցներ⁵¹:

51 Եվրոպայի խորհուրդ (2020), Թվային միջավայր, <https://www.coe.int/en/web/children/the>

Եվրոպայի խորհրդի ուղեցույցներ՝ հարգելու և պաշտպանելու երեխայի իրավունքները թվային միջավայրում⁵²:

Ուղեցույցներն ուղղված են Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր երկրներին, որպեսզի օգնեն անդամ երկրներին և այլ համապատասխան շահագրգիռ կողմերին՝ համապարփակ, ռազմավարական մոտեցում որդեգրելու և թվային միջավայրում երեխաների իրավունքների ողջ շրջանակն առավելագույնի հասցնելու համար: Բազմաթիվ լուսաբանված թեմաների թվում են անձնական տվյալների պաշտպանությունը, երեխաներին հարմար բովանդակության ապահովումը, որը հարմարեցված է նրանց զարգացող կարողություններին, ինչպես նաև օգնության գծերն ու թեժ գծերը, խոցելիությունն ու ճկունությունը, ինչպես նաև բիզնես ձեռնարկությունների դերն ու պարտականությունները: Բացի այդ, ուղեցույցները կոչ են անում պետություններին ներգրավել երեխաներին որոշումների կայացման գործընթացներում և ապահովել, որ ազգային քաղաքականությունը համարժեքորեն անդրադառնա թվային միջավայրի զարգացումներին: Ուղեցույցները ներկայումս հասանելի են 19 լեզուներով: Դրանք նաև կունենան փաստաթղթի՝ երեխաներին հարմար տարբերակ, ինչպես նաև ձեռնարկ քաղաքականություն մշակողների համար, որը կտրամադրի կոնկրետ միջոցառումներ ուղեցույցների իրականացման վերաբերյալ:

Եվրոպայի խորհուրդ Լանզարոտեի կոնվենցիա

Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա ([Լանզարոտեի կոնվենցիա](#)), որը պահանջում է պետություններից ամբողջական պատասխան առաջարկել երեխաների նկատմամբ սեռական բռնությանը «4 մասից բաղկացած մոտեցման» միջոցով, այն է՝ *կանխարգելում, պաշտպանություն, հետապնդում և ազգային ու միջազգային համագործակցության խթանում*: Կոնվենցիայի գործողությունը թվային միջավայրի հետ կապված հստակեցվել է «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին» կոնվենցիայի կողմերի կոմիտեի կողմից («Լանզարոտե կոմիտե»)՝ մի շարք փաստաթղթերի ընդունման միջոցով:

Սրանք են.

Կարծիք երեխայի կողմից ստեղծված սեռական բնույթ ակնարկող կամ բացահայտ լուսանկարների և/կամ տեսանյութերի վերաբերյալ, որոնք երեխաները կիսվել կամ ստացել են (6 հունիսի 2019թ.):

S<S-ների օգտագործման միջոցով երեխաների նկատմամբ սեռական հանցագործությունների վերաբերյալ Լանզարոտեի կոնվենցիայի կիրառելիության մասին մեկնողական կարծիք (12 մայիսի 2017 թ.):

digital-environment. Թվայինմիջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրականացնելու համար Եվրոպայի խորհրդի ուղեցույցը միջկառավարական մարմնի կողմից ընդունված սրանդարտների առաջին փաթեթն է (CM/Rec, 2018)

Դեկլարացիա վեր հասցեների վերաբերյալ, որոնք գովազդում են երեխաների սեռական բռնության նյութերը, լուսանկարները կամ Լանգարոտեի կոնվենցիայի համաձայն՝ հաստատված ցանկացած այլ հանցագործություն (2016թ. հունիսի 16):

Կարծիք Լանգարոտեի կոնվենցիայի 23-րդ հոդվածի վերաբերյալ, ինչպես նաև երեխաներին սեռական նպատակներով ներգրավելը տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով (Սիրահետում):

Լանգարոտեի կոմիտեն իրականացնում է Կոնվենցիայի կատարման մոնիտորինգ. Կոմիտեի 2-րդ թեմատիկ մոնիտորինգի փուլում երեխաների պաշտպանությանը սեռական շահագործումից և սեռական բռնությունից օժանդակում են ՏՀՏ-ները. Մոնիտորինգի փուլի վերաբերյալ հաշվետվություն է հրապարակվել 2020թ.:

2019 թվականի դրությամբ կան Կոնվենցիայի 46 մասնակից պետություն, այդ թվում՝ Թունիսը, որը միացել և հանդիսանում է առաջին ոչ անդամ պետությունը:

Եվրոպայի խորհրդի հետագա ուղեցույցները

Եվրոպայի խորհրդի հետագա ստանդարտներն ու գործիքները նպաստում են կոլեկտիվ կերպով ձեռք բերված համապարփակ շրջանակին, որն ուղղված է բոլոր շահագրգիռ կողմերին:

Կիրառելի հանցագործության մասին Եվրոպայի խորհրդի Կոնվենցիան Կողմերի համար պարունակում է պարտավորություններ, այդ թվում՝ մի շարք հանցագործությունների քրեականացնելը՝ կապված երեխաների սեռական բռնության նյութերի հետ: Այն ներկայումս վավերացված է 64 մասնակից պետությունների կողմից: Եվրոպայի խորհուրդը կենտրոնանում է նաև երեխաներին և նրանց շրջապատող մարդկանց՝ թվային ոլորտում անվտանգ «նավարկելու» հնարավորություն տալու վրա: Սա խթանվում է կրթական գործիքների միջոցով, ներառյալ՝ ամբողջությամբ վերանայված «Ինտերնետ գրագիտության ձեռնարկ»-ը (2017), «Թվային քաղաքացիության կրթության ձեռնարկ»-ը (2019) և ծնողներին ուղղված ձեռնարկներ՝ «Ծնողավարությունը թվային դարաշրջանում» – «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների առցանց պաշտպանության համար» ծնողական ուղեցույց (2017թ.), «Թվային քաղաքացիությունը...և ձեր երեխան – այն, ինչ յուրաքանչյուր ծնող պետք է իմանա և անի» (2019): Վերջապես, Եվրոպայի խորհուրդը խորհրդատվական հետազոտություն է իրականացրել՝ կապված թվային միջավայրում երեխաների և նրանց իրավունքների հետ: «Դա մեր աշխարհն է. թվային միջավայրում հաշմանդամություն ունեցող երեխաների փորձառությունների մասին» (2017) – «Երկու կտտոց առաջ և մեկ կտտոց հետ: Հաշվետվություն թվային միջավայրում հաշմանդամություն ունեցող երեխաների մասին» (2019):

Երեխաների առցանց անվտանգության հաշվետվություն

Երեխաների առցանց անվտանգություն. բռնության, չարաշահման և շահագործման ռիսկի նվազեցում առցանց + Երեխաների առցանց անվտանգության համընդհանուր հռչակագիր⁵²:

ՏՀՁԿ-ի հանձնարարականներն առցանց երեխաների պաշտպանության վերաբերյալ (2012 / վերանայում 2019-2020)

Ազգային և անդրազգային այլ նախաձեռնությունները պետք է կարևորվեն ինչպես հետագայում երեխաների առցանց պաշտպանության ռազմավարությունների ստեղծման, այնպես էլ ազգային ջանքերի և միջազգային համագործակցության աջակցության համար:

Օրինակ՝ հետևյալ նախաձեռնությունները.

Երեխաների սեռական շահագործման միջազգային տվյալների բազա

ԻՆՏԵՐՊՈԼ-ի կողմից կառավարվող Երեխաների սեռական շահագործման նկարների տվյալների բազան (ԵՄՍՇՆՏԲ) հզոր հետախուզական և հետաքննական գործիք է, որն ամբողջ աշխարհում թույլ է տալիս մասնագիտացված քննիչներին տվյալներ փոխանակել գործընկերների հետ: Հասանելի է ԻՆՏԵՐՊՈԼ-ի անվտանգ գլոբալ ոստիկանական հաղորդակցության համակարգի միջոցով (հայտնի է որպես I-247): ԵՄՍՇՆՏԲ-ն օգտագործում է նկարների համեմատման բարդ ծրագրակազմ՝ զոհերի, չարաշահողների և վայրերի միջև կապ հաստատելու համար: ԵՄՍՇՆՏԲ-ն անդամ երկրների հավաստագրված օգտատերերին հնարավորություն է տալիս իրական ժամանակում մուտք գործել տվյալների բազա, հարցաքննել գոյություն ունեցող տնտեսություններին, վերբեռնել նոր տվյալներ, ստուգել և տեսակավորել նյութերը, հակասել, կատարել վերլուծություն և շփվել աշխարհի այլ փորձագետների հետ և պատասխանել երեխաների սեռական շահագործման հետ կապված հարցումներին:

Մենք ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ (WePROTECT) գլոբալ դաշինք

Մենք ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ գլոբալ դաշինքը (ՄՊԳԴ) գլոբալ շարժում է, որը միավորում է ազդեցությունը, փորձը և ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են վերափոխելու, թե ինչպես են վերաբերվում երեխաների առցանց սեռական շահագործմանն ամբողջ աշխարհում (ԵԱՍՇ): Այն կառավարությունների, համաշխարհային տեխնոլոգիական ընկերությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցությունն է: Նրա բազմակողմանի լինելն այս ոլորտում եզակի է: Մենք ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ գլոբալ դաշինքի տեսլականն է՝ բացահայտել և պաշտպանել ավելի շատ զոհերի, ավելի շատ հանցագործների ձերբակալել և վերջ դնել երեխաների առցանց սեռական շահագործմանը: Մենք

⁵² *Լայնաշերտ կապի կայուն զարգացման հանձնաժողով (2019), Լայնաշերտ կապի վիճակը 2019. Լայնաշերտ կապը որպես կայուն զարգացման հիմք, https://www.itu.int/dms_pub/itu-s/opb/pol/S-POL-BROADBAND.20-2019-PDF-E.pdf.*

ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ գլոբալ դաշինքը բաղկացած է մի շարք բաղադրիչներից, մասնավորապես, ազգային արձագանքի մոդելից և գլոբալ ռազմավարական պատասխանից: Լրացուցիչ մանրամասները կարող եք գտնել Հավելված 3-ում:

Երեխաների առցանց անվտանգության ինդեքս 2020թ.

DQ ինստիտուտ 2020-ի Երեխաների առցանց անվտանգության ինդեքսն (ԵԱԱԻ) աշխարհի առաջին իրական ժամանակի վերլուծական հարթակն է, որն օգնում է երկրներին: ԵԱԱԻ շրջանակը կառուցված է վեց սյուներից: Առաջին և երկրորդ սյուները՝ կիրքերոշիկերը և կարգապահ թվային օգտագործումը վերաբերում են թվային տեխնոլոգիաների խելամիտ օգտագործմանը: Երրորդն ու չորրորդը՝ թվային իրավասություն, առաջնորդություն և կրթություն, որոնք կապված են հզորացման հետ: Վերջին երկու սյուները վերաբերում են ենթակառուցվածքին, իսկ դրանք սոցիալական ենթակառուցվածքների և կապի սյուներն են:

3.3 Առցանց վնասների պատասխանների օրինակներ

Հավելված 4-ում կան առցանց վնասների արձագանքման մի շարք օրինակներ: Այս օրինակները ներառում են կրթական պատասխաններ, օրենսդրական և առցանց վնասների նույնականացում:

3.4 Երեխաների առցանց պաշտպանության ազգային ռազմավարության առավելությունները

Օրենքների ներդաշնակեցում

Բոլոր երկրների կողմից քրեական կամ այլ նպատակներով ՏՀՏ-ների չարաշահման դեմ համապատասխան օրենսդրության ընդունումն առանցքային է համաշխարհային կիրքերանվտանգության հասնելու համար: Սպառնալիքները կարող են ծագել աշխարհի ցանկացած կետում, իսկ մարտահրավերներն իրենց բնույթով միջազգային են և պահանջում են միջազգային համագործակցություն, հետաքննական օգնություն, ընդհանուր բովանդակային և ընթացակարգային դրույթներ: Այսպիսով, կարևոր է, որ երկրները ներդաշնակեցնեն իրենց իրավական շրջանակները՝ կիրքերանցագործության դեմ պայքարելու, երեխաներին առցանց պաշտպանելու և միջազգային համագործակցությունը հեշտացնելու համար⁵³:

Համապատասխան ազգային օրենսդրության, կիրքերանցագործություններին առնչվող իրավական դաշտի մշակումը և այս մոտեցման շրջանակներում միջազգային մակարդակով ներդաշնակեցումն առանցքային քայլ է երեխաների առցանց պաշտպանության ցանկացած ազգային ռազմավարության հաջողության ուղղությամբ:

⁵³ Լայնաշերտ Կայուն զարգացման հանձնաժողով (2019)

Սա նախ և առաջ պահանջում է քրեական օրենսդրության անհրաժեշտ էական դրույթներ և այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ համակարգչային խարդախությունը, ապօրինի մուտքը, տվյալների միջամտությունը, հեղինակային իրավունքի խախտումներն ու ԵՄԲԼ-ն քրեականացնելը և միաժամանակ հոգում, որ երեխաներն անհիմն չքրեականացվեն: Այն փաստը, որ քրեական օրենսգրքում կան դրույթներ, որոնք կիրառելի են իրական աշխարհում կատարված նմանատիպ արարքների նկատմամբ, չի նշանակում, որ դրանք կարող են կիրառվել նաև համացանցում կատարված արարքների նկատմամբ: Հետևաբար, ներկայիս ազգային օրենքների մանրակրկիտ վերլուծությունը կենսական նշանակություն ունի հնարավոր բացերը հայտնաբերելու համար: Հաջորդ քայլը կլինի օրենսդրական լեզվի և տեղեկատու նյութի բացահայտումն ու սահմանումը, որը կարող է օգնել երկրներին կիրառելի անցագործության դեմ ներդաշնակեցված օրենքների և ընթացակարգային կանոնների հաստատման գործում: Նման գործնական գործիքները կարող են օգտագործվել երկրների կողմից կիրառանվտանգության իրավական դաշտի և հարակից օրենքների մշակման համար: ՀՄՄ-ն այս ուղղությամբ աշխատել է անդամ պետությունների և համապատասխան շահագրգիռ կողմերի հետ և մեծապես նպաստել կիրառելի անցագործությունների դեմ օրենսդրության գլոբալ ներդաշնակեցմանը:

Հաշվի առնելով տեխնոլոգիական նորարարությունների արագ տեմպերը, ինքնակարգավորումը և համակարգավորումն առաջ են քաշվել որպես գործող կարգավորման հնացման և երկարատև օրենսդրական գործընթացի հնարավոր լուծումներ: Այնուամենայնիվ, արդյունավետ լինելու համար կարգավորող մարմինները/քաղաքականություն մշակողները պետք է սահմանեն հստակ վերանայման գործընթաց և մեթոդաբանություն, գնահատեն ինքնակարգավորման և համակարգավորման արդյունավետությունը, և այն դեպքում, եթե ինքնակարգավորումը և համակարգավորումը չեն կարողանում լուծել բացահայտված մարտահրավերները, ապա նախաձեռնել պաշտոնական օրենսդրական գործընթաց՝ այդ մարտահրավերները լուծելու համար:

Համակարգում

Հավանական է, որ դերակատարների և շահագրգիռ կողմերի շրջանակում արդեն կան մի շարք գործող միջոցառումներ և գործողություններ՝ ուղղված երեխաներին առցանց պաշտպանելուն, սակայն դրանք տեղի են ունեցել առանձին-առանձին: Դրանց հասկանալի կարևոր է երեխաների առցանց պաշտպանության ազգային ռազմավարության մշակման գործում՝ առկա ջանքերը գնահատելու համար: Ռազմավարությունը կհամակարգի և կուղղորդի ջանքերը ինչպես առկա, այնպես էլ նոր գործողությունների կազմակերպման միջոցով:

4. Առաջարկություններ շրջանակների և իրականացման համար

Կառավարությունները պետք է անդրադառնան թվային միջավայրում երեխաների նկատմամբ բռնության բոլոր դրսևորումներին: Այնուամենայնիվ, թվային միջավայրում երեխաներին պաշտպանելու համար ձեռնարկված միջոցները չպետք է անտեղի սահմանափակեն այլ իրավունքների իրականացումն, ինչպիսիք են՝ խոսքի ազատության իրավունքը, տեղեկատվություն ստանալու իրավունքը կամ միավորվելու ազատության իրավունքը: Երեխաների բնական հետաքրքրասիրությունն ու նորարարության զգացումը սահմանափակելու փոխարեն՝ առցանց ռիսկերին հանդիպելու վախից, շատ կարևոր է օգտագործել երեխաների հնարամտությունը և բարձրացնել նրանց ճկունությունը՝ միաժամանակ ուսումնասիրելով թվային միջավայրի ներուժը:

Շատ դեպքերում երեխաների նկատմամբ բռնության ակտերը կատարվում են այլ երեխաների կողմից: Նման իրավիճակներում կառավարությունները հնարավորինս պետք է հետամուտ լինեն վերականգնողական մոտեցումներին, որոնք վերականգնում են հասցված վնասը՝ միաժամանակ կանխելով երեխաների քրեականացումը: Կառավարությունները պետք է խթանեն SCS-ների կիրառումը բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարում, ինչպես օրինակ՝ երեխաների համար տեխնոլոգիաների և ռեսուրսների զարգացումը տեղեկատվության հասանելիություն ապահովելու համար, վնասակար նյութերն արգելափակելու և զեկուցելու բռնության դեպքերի մասին, երբ դրանք տեղի են ունենում⁵⁴:

Երեխաների առցանց անվտանգության գլոբալ իրավիճակին դիմակայելու համար կառավարությունները պետք է դյուրացնեն հաղորդակցությունն իրենց համապատասխան կառույցների միջև, ինչպես նաև բաց համագործակցեն երեխաների առցանց վնասը վերացնելու համար:

⁵⁴ Երեխաների նկատմամբ բռնության հարցերով Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ, Մարդու իրավունքների խորհրդին Երեխաների նկատմամբ բռնության հարցերով Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ տարեկան հաշվետվություն, A/HRC/31/20 (հունվար 2016), պար.103 և 104:

4.1 Շրջանակային առաջարկություններ

4.1.1 Իրավակարգավորումների շրջանակ

Կառավարությունները պետք է վերանայեն և անհրաժեշտության դեպքում թարմացնեն իրենց իրավական դաշտն՝ աջակցելով թվային միջավայրում երեխայի իրավունքների լիարժեք իրակացմանը: Համապարփակ իրավական դաշտը պետք է անդրադառնա կանխարգելիչ միջոցառումներին, թվային միջավայրում երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերի արգելմանը, երեխաների իրավունքների խախտումները վերացնելու համար արդյունավետ պաշտպանության միջոցների ապահովմանը, վերականգմանը և վերաինտեգրմանը, երեխաների նկատմամբ զգայուն խորհրդատվությանը, հաշվետվությունների և բողոքների մեխանիզմների ստեղծմանը և անպատժելիության դեմ պայքարի հաշվետվողականության մեխանիզմներին⁵⁵:

Հնարավորության դեպքում օրենսդրությունը պետք է լինի տեխնոլոգիայի տեսանկյունից չեզոք, որպեսզի դրա կիրառելիությունը չխաթարվի ապագա տեխնոլոգիական զարգացումներից⁵⁶:

Օրենսդրության արդյունավետ իրականացումը կառավարություններից պահանջում է լրացուցիչ միջոցներ ձեռնարկել, ներառյալ՝ իրազեկման բարձրացումը և սոցիալական մոբիլիզացման նախաձեռնությունները, կրթական ջանքերն ու արշավները, ինչպես նաև երեխաների հետ և երեխաների համար աշխատող մասնագետների կարողությունների զարգացումը:

Համապատասխան օրենք մշակելիս նաև կարևոր է նկատի ունենալ երեխաների տարիքային և սեռային առանձնահատկությունները: Տարբեր տարիքի երեխաների համար կարող են պահանջվել տարբեր արձագանքներ, ինչպես նաև այն երեխաների համար, ովքեր ունեն հատուկ կարիքներ, գտնվում են թվային միջավայրում կամ դրա միջոցով վնասվելու մեծ ռիսկի տակ:

Կառավարությունները պետք է ստեղծեն հստակ, կանխատեսելի իրավական և կարգավորող միջավայր, որն աջակցում է ձեռնարկություններին և այլ երրորդ կողմերին՝ կատարելու իրենց պարտականությունները, պաշտպանելու երեխաների իրավունքներն իրենց գործունեության ողջ ընթացքում՝ տանը և արտերկրում⁵⁷:

55 Երեխաների նկատմամբ բռնության հարցերով Գլխավոր քարտուղարի հափուկ ներկայացուցիչ, Մարդու իրավունքների խորհրդին Երեխաների նկատմամբ բռնության հարցերով Գլխավոր քարտուղարի հափուկ ներկայացուցչի տարեկան հաշվետվություն, A/HRC/31/20 (հունվար 2016), պար.103 և 104:

56 Երեխաների նկատմամբ բռնության հարցերով Գլխավոր քարտուղարի հափուկ ներկայացուցիչ, երեխաների ներուժի ազատում և ռիսկերի նվազեցում. SCS-ներ, ինտերնետ և երեխաների նկատմամբ բռնություն, 2014 (Նյու Յորք: Միավորված ազգերի կազմակերպություն), էջ.55:

57 ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 16, պար. 53:

Հետևյալ ասպեկտներն օգտակար կլինեն քաղաքականություն մշակողների համար՝ ցանկացած իրավակարգավորումների շրջանակների վերանայելու հարցում:

- Սիրահետումը կամ երեխաներին հեռակա հրապուրելու, շորթելու կամ հարկադրելու այլ ձևեր՝ անպատշաճ սեռական շփման կամ սեռական գործունեության մեջ,
- ԵՄԲՆ-ի տիրապետման, արտադրության և տարածման ապահովում՝ անկախ բաշխման մտադրությունից,
- ռոնթգություն, բուլինգ, չարաշահում կամ ատելության խոսք առցանց,
- առցանց ահաբեկչական նյութ,
- կիբերանվտանգություն:

4.1.2 Քաղաքականություն և ինստիտուցիոնալ շրջանակներ

Երեխաների իրավունքների իրացումը թվային միջավայրում երաշխավորելու համար կառավարությունները պահանջում են հավասարակշռություն գտնել երեխաների կողմից ՏՀՏ-ների օգտագործման առավելություններն առավելագույնի հասցնելու և դրանց հետ կապված ռիսկերը նվազագույնի հասցնելու միջև: Դրան կարելի է հասնել ազգային լայնաշերտ կապի ծրագրերում⁵⁸ երեխաներին առցանց պաշտպանելուն ուղղված միջոցառումներ ներառելով և երեխաների առցանց պաշտպանության առանձին բազմակողմանի ռազմավարություն մշակելու միջոցով: Նման օրակարգում լիովին պետք է ինտեգրված լինեն երեխաների իրավունքները կամ երեխաների պաշտպանությանն առնչվող ցանկացած գործող քաղաքականության շրջանակները և պետք է լրացուցիչ լրացնեն երեխաների պաշտպանության ազգային քաղաքականությունը՝ առաջարկելով հատուկ շրջանակ երեխաների բոլոր ռիսկերի և հնարավոր վնասների համար՝ նպատակ ունենալով ստեղծել անվտանգ, ներառական և հզորացնող թվային համակարգ⁵⁹:

Կառավարությունները պետք է ստեղծեն ազգային համակարգող շրջանակ՝ հստակ մանդատով և բավարար լիազորություններով՝ երեխաների իրավունքները, թվային լրատվամիջոցները և ՏՀՏ-ին վերաբերող բոլոր գործողությունները համակարգելու ինչպես միջոլորտային, ազգային, տարածաշրջանային, այնպես էլ տեղական մակարդակներում: Կառավարությունները պետք է ներառեն ժամանակային նպատակներ և թափանցիկ գործընթաց՝ գնահատելու և վերահսկելու առաջընթացը և պետք է ապահովեն, որ անհրաժեշտ մարդկային, տեխնիկական և

58 Լայնաշերտ կապի վիճակը 2019, Հանձնարարական 5.6, էջ 78: https://www.itu.int/dms_pub/itu-s/opb/pol/S-POL-BROADBAND.20-2019-PDF-E.pdf

59 Լայնաշերտ կապի ազգային ծրագրերի համար երեխաների պաշտպանության մոդելային դրույթների համար տես երեխաների առցանց անվտանգության զեկույցի 10-րդ գլուխը:

Ֆինանսական ռեսուրսները հասանելի լինեն այս շրջանակի արդյունավետ գործունեության համար⁶⁰:

Կառավարությունները պետք է ստեղծեն բազմաշահառու հարթակ՝ երեխաների ազգային թվային օրակարգի մշակումը, իրականացումը և մոնիտորինգը ղեկավարելու համար: Նման հարթակը պետք է համախմբի կարևորագույն ներկայացուցիչներին, այդ թվում՝ երեխաներին և երիտասարդներին, ծնողներին/խնամակալներին, կառավարության համապատասխան բաժիններին, կրթության, արդարադատության, առողջապահության և սոցիալական խնամքի ոլորտներին, մարդու իրավունքների ազգային ինստիտուտներին և համապատասխան կարգավորող մարմիններին, քաղաքացիական հասարակությանը, արդյունաբերությանը, ակադեմիան և համապատասխան մասնագիտական ասոցիացիաներին:

4.1.3 Կարգավորող դաշտ

Կառավարությունները պատասխանատվություն են կրում երեխաների իրավունքների ոտնահարումների համար, որոնք եղել են բիզնես ձեռնարկությունների կողմից կամ դրանց նպաստել են բիզնես ձեռնարկությունները, որտեղ նրանք չեն ձեռնարկել անհրաժեշտ, համապատասխան և ողջամիտ միջոցներ՝ կանխելու և վերացնելու համար նման խախտումներն, այլ կերպ համագործակցել կամ հանդուրժել են խախտումները⁶¹:

Բիզնեսի և մարդու իրավունքների ուղեցույց սկզբունքներն ակնկալում են, որ կորպորացիաներն ապահովեն շտկման և բողոքարկման մեխանիզմներ, որոնք լինեն օրինական, մատչելի, կանխատեսելի, արդարացի, իրավունքներին համապատասխան, թափանցիկ, հիմնված երկխոսության և ներգրավվածության վրա, լինեն շարունակական ուսուցման աղբյուր: Բիզնես ձեռնարկությունների կողմից ստեղծված բողոքարկման մեխանիզմները կարող են ճկուն և տեղին այլընտրանքային լուծումներ տալ, և երբեմն երեխայի լավագույն շահերից է բխում, որ ընկերության վարքագծի վերաբերյալ բարձրացված մտահոգությունները լուծվեն նրանց միջոցով: Բոլոր դեպքերում պետք է դատարանները, վարչական պաշտպանության միջոցները կամ այլ ընթացակարգերը հասանելի լինեն⁶²: Պետք է ուշադրություն դարձնել այն մեխանիզմներին, որոնք երեխաների համար ստեղծում են անվտանգ, տարիքին համապատասխան ծառայություններ, որպեսզի օգտատերերը զեկուցեն իրենց մտահոգությունները:

60 Երեխաների նկատմամբ բռնության հարցերով Գլխավոր քարտուղարի հապուկ ներկայացուցիչ, Երեխաների նկատմամբ բռնության հարցերով Գլխավոր քարտուղարի փարեկան զեկույց (ղեկվեմքեր, 2014 թ.) A/HRC/28/55 և երեխաների ներուժի բացթողում և նվազագույնի հասցնել ռիսկերը. SCS-ներ, ինտերնետ և երեխաների նկատմամբ բռնություն, 2014 (Նյու Յորք: Միավորված ազգերի կազմակերպություն), պար. 88.

61 ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 16, պար. 28.

62 Գլխավոր քարտուղարի հապուկ ներկայացուցիչ զեկույցը մարդու իրավունքների և անդրազգային կորպորացիաների և այլ բիզնես ձեռնարկությունների խնդրի վերաբերյալ, A/HRC/17/31 (2011), պար.71.

Չնայած ներքին բողոքարկման մեխանիզմների առկայությանը, կառավարությունները, պետք է ստեղծեն երեխաների իրավունքների խախտումների հետաքննության և փոխհատուցման մոնիտորինգի մեխանիզմներ՝ նպատակ ունենալով բարելավել SCS և այլ համապատասխան ընկերությունների հաշվետվողականությունը, ինչպես նաև ուժեղացնել կարգավորող մարմնի պատասխանատվությունը երեխաների իրավունքներին և SCS-ին առնչվող չափորոշիչների մշակման համար⁶³: Հատկապես կարևոր է կորպորատիվ գործողություններից բացասաբար փորձ ձեռք բերած անձանց հասանելի դարձնել այլ միջոցներ, ինչպիսիք են քաղաքացիական դատավարությունները և դատական այլ միջոցները, որոնք հաճախ երկարատև են ու ծախսատար⁶⁴:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն ընդգծել է մարդու իրավունքների ազգային ինստիտուտների պոտենցիալ դերն այս ոլորտում՝ ուրվագծելով, թե ինչպես նրանք կարող են ունենալ ոլորտի սուբյեկտների կողմից խախտումների վերաբերյալ բողոքներ ստանալու, հետաքննելու և միջնորդելու դերը, լայնածավալ չարաշահումների վերաբերյալ հանրային հետաքննությունների անցկացում և երեխայի իրավունքների կոնվենցիային համապատասխանությունն ապահովելու համար օրենսդրական վերանայումների իրականացում: Կոմիտեն նշել է, որ անհրաժեշտության դեպքում «պետությունները պետք է ընդլայնեն մարդու իրավունքների ազգային ինստիտուտների օրենսդրական մանդատն՝ երեխաների իրավունքներին և բիզնեսին համապատասխանելու համար»: Հատկապես կարևոր է, որ բողոքների ցանկացած մեխանիզմ լինի երեխաների նկատմամբ զգայուն, ապահովի զոհերի գաղտնիությունն ու պաշտպանությունը, ցուցաբերվի հետևողականություն, իրականացվի մոնիտորինգ և կատարվի ստուգման գործողություններ տուժած երեխաների համար:

Ոլորտի օրինակներից մեկը, որտեղ մարդու իրավունքների ազգային հաստատությունը կամ այլ կարգավորող մարմինը կարող է արդյունավետ միջոց տրամադրել երեխաներին, կիբերհարձակման դեպքերն են: Ներքին շտկման և բողոքարկման մեխանիզմները երբեմն անարդյունավետ են լինում նման դեպքերում, քանի որ, թեև բովանդակությունն անհանգստացնող է և վնասակար, սակայն հաճախ չի լուծվում ազգային օրենսդրության կողմից և չկա հստակ հիմք՝ բովանդակության հաղորդավարի կողմից այն հեռացնելու համար: Երեխաների համար կարևոր երաշխիք կլինի Հանրային մարմնին կիբերհարձակման դեպքերի վերաբերյալ բողոքներ ստանալու, բովանդակության պատասխանատուներին համապատասխան նյութը հեռացնելու և միջնորդություն անելու իրավունք տալը⁶⁵:

63 ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտե, 2014 թվականի ընդհանուր քննարկման օրվա զեկույց, պար. 96.

64 Կարծիքի և արտահայտման ազատության իրավունքի խթանման և պաշտպանության մասին հարուկ զեկուցողի զեկույց, A/HRC/32/38 (2016), պար.71.

65 Բերպրանդե Կրոմբրուգ, «Մարդու իրավունքների խորհրդի զեկույցն իրերեսուն մեկերորդ նստաշրջանի վերաբերյալ» (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ, 2016 թ.):

Այն կունենա արագ արձագանքման առավելություններ, ինչը կարևոր նշանակություն ունի կիրառելի արձակման համատեքստում, ինչպես նաև հստակ իրավական հիմք՝ կիրառելի արձակման նյութերի հեռացման դեմ պայքարի համար:

Կառավարությունները պետք է նաև գիտակցեն, որ թվային միջավայրի կարգավորմանն առնչվող մոտեցումը ձևավորելու ընթացքում պետք է հաշվի առնել նման կարգավորման ազդեցությունը մարդու բոլոր իրավունքների ու խոսքի ազատության վրա⁶⁶:

Կառավարությունները պետք է պարտավորեցնեն ձեռնարկություններին՝ իրականացնելու երեխաների իրավունքների պատշաճ ուսումնասիրություն: Սա կապահովի, որ բիզնես ձեռնարկությունները բացահայտեն, կանխեն և մեղմացնեն նրանց ազդեցությունը երեխաների իրավունքների, ներառյալ նրանց գործարար հարաբերություններում և գլոբալ գործունեության շրջանակներում⁶⁷:

Բացի այդ, կառավարությունները պետք է դիտարկեն լրացուցիչ միջոցներ և համոզվեն, որ ոլորտի կազմակերպությունների գործունեությունը կարող են ազդեցություն ունենալ թվային միջավայրում երեխաների իրավունքների վրա և համապատասխան են ամենաբարձր չափանիշների՝ կանխելու և արձագանքելու իրավունքների հնարավոր խախտումները, որպեսզի արժանանան ֆինանսավորման կամ պայմանագրերի որակավորման:

4.2 Իրականացման վերաբերյալ առաջարկություններ

Կառավարությունները պետք է ապահովեն իրավունքների ոտնահարման զոհ դարձած երեխաների պաշտպանության արդյունավետ միջոցների հասանելիությունը, այդ թվում՝ աջակցություն կրած վնասի անհապաղ և համապատասխան վերականգնում՝ անհրաժեշտության դեպքում փոխհատուցման միջոցով: Կառավարությունները պետք է նաև համապատասխան օգնություն և աջակցություն ցուցաբերեն թվային մեդիայի և SCS-ների հետ կապված խախտումների զոհ դարձած երեխաներին, ներառյալ՝ համապարփակ ծառայություններ ապահովելով երեխայի լիարժեք վերականգնանքը և վերաինտեգրմանը, ինչպես նաև կանխելով տուժած երեխաների կրկնակի զոհ դառնալը:⁶⁸

Անվտանգ և հեշտ հասանելի, զգայուն խորհրդատվության, զեկուցման և բողոքների մեխանիզմները, օգնության գծերը պետք է սահմանվեն օրենքով և կազմեն երեխաների պաշտպանության ազգային համակարգի մաս:

⁶⁶ Կարծիքի և արտահայտման ազատության իրավունքի խթանման և պաշտպանության մասին հարուկ զեկուցողի զեկույց, A/HRC/32/38 (2016), պար. 45.

⁶⁷ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 16, պար. 62

⁶⁸ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտե, 2014 թվականի ընդհանուր քննարկման օրվազեկույց, պար. 106.

Կարևոր է ապահովել, որ այս ծառայությունները միացված լինեն որևէ կարգավորող ծառայության և օգնել պարզեցնել երեխայի փոխգործակցությունն ինստիտուցիոնալ մարմինների հետ այն ժամանակահատվածում, երբ նրանք կարող են առցանց խնդիրների բախվել: Օգնության գծերը հատկապես արժեքավոր են խիստ զգայուն հարցերի առնչությամբ, ինչպիսին է սեռական բռնությունը, որը երեխաներին դժվար է քննարկել հասակակիցների, ծնողների, խնամակալների կամ ուսուցիչների հետ: Օգնության գծերը նաև կարևոր դեր են խաղում երեխաներին այնպիսի ծառայություններ ուղղորդելու համար, ինչպիսիք են՝ իրավաբանական ծառայություններն, ապահով տներն, իրավապահ մարմինները կամ ռեաբիլիտացիան:⁶⁹

Նաև, կառավարությունները պետք է հասկանան և հետևեն հանցագործի վարքագծին, որպեսզի բարձրացնեն բռնության ենթարկողների հայտնաբերման մակարդակը և նվազեցնեն արդեն իսկ դատապարտվածների կրկնակի հանցանք գործելու ռիսկը: Ստեղծեն օգնության գծեր, որոնք առաջարկում են անվճար, անանուն հեռախոսային կամ զրույցի վրա հիմնված խորհրդատվություն, այն պոտենցիալ հանցագործների համար, ովքեր երեխաների հանդեպ սեռական հետաքրքրության զգացումներ կամ մտքեր են ունենում: Իրենց վարքագիծը փոխելու հարցում հանցագործներին օգնելը նվազագույնի է հասցնում կրկնահանցագործության ռիսկը:

Բողոքների մշակման կանոնադրական մեխանիզմները նույնպես հանդիսանում են իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների շրջանակի կարևոր մասը:

Կարգավորող մարմինները պետք է անկախ ուսումնասիրություններ անցկացնեն՝ գնահատելու, թե ինչպես են հարթակները զեկուցում և զբաղվում երեխաների պաշտպանության հետ կապված խնդիրներով: Կարգավորող մարմինների համար պետք է լինի տեխնոլոգիա՝ հարթակներն ինքնուրույն վերահսկելու համար: Արդյունաբերության ներկայացուցիչներին պետք է աջակցել թափանցիկության, հաշվետվությունների հրապարակման համար: Միջազգային հանրության և արդյունաբերության ոլորտի հետ միասին կառավարությունները պետք է մշակեն չափանիշների համընդհանուր հավաքածու, որը շահագրգիռ կողմերը կարող են օգտագործել՝ երեխաների առցանց անվտանգության բոլոր համապատասխան ասպեկտները չափելու համար:

4.2.1 Սեռական շահագործում

Կոնկրետ նկատառումներ քաղաքականություն մշակողների համար, երբ քննարկում են երեխաներին սպառնացող վտանգները, մասնավորապես՝ երեխաների սեռական բռնության նյութերը, ինքնուրույն

⁶⁹ Երեխաների նկատմամբ բռնության հարցերով Գլխավոր քարտուղարի հասցույթ ներկայացուցիչ. էջ 51 և էջ 65.

ստեղծվող բովանդակություն, գրումինգ, սեռավարություն և այլ առցանց ռիսկեր: Դրանք կարող են ներառել.

- ԵՍԲՆ-ի թրաֆիկը խափանելու կամ նվազեցնելու քայլեր, օրինակ՝ ստեղծել ազգային թեժ գիծ կամ ԻԴՀ հաշվետվության պորտալ, միջոցներ արգելափակելու առցանց բովանդակության հասանելիությունը, որը պարունակում է ԵՍԲՆ կամ դրանց առկայությունը գովազդող նյութեր:
- Համոզվել, որ առկա են ազգային գործընթացներ, երկրում հայտնաբերված ամբողջ ԵՍԲՆ-ը կենտրոնացած են դեպի ազգային ռեսուրս, որն օրենսդրական լիազորություններ ունի ուղղորդելու ընկերություններին հեռացնել բովանդակությունը:
- Ռազմավարություններ՝ ուղղված ԵՍԲՆ-ի պահանջարկին, հատկապես նրանց շրջանում, ովքեր դատապարտված են նման հանցագործությունների համար: Երեխաները բռնության են ենթարկվում ցուցադրվող նյութը ստեղծելու համար, և դիտավորյալ դիտելով կամ ներբեռնելով ԵՍԲՆ-ն ուղղակիորեն նպաստում են լուսանկարում ներկայացված երեխայի դեմ բռնությանը, ինչպես նաև խրախուսում ավելի շատ երեխաների դեմ բռնությանը՝ շատ նկարներ ստեղծելու համար: Անհրաժեշտ է տարածել այն գիտակցումը, որ սա հանցագործություն է:
- Իրազեկության ձևավորում այն փաստի վերաբերյալ, որ երեխաները երբեք իրենց կամքով չեն ենթարկվում սեռական բռնության՝ լինի դա ԵՍԲՆ-ի արտադրության, թե որևէ այլ ձև: Խրախուսեք ԵՍԲՆ-ն կիրառող մարդկանց օգնություն փնտրել, միևնույն ժամանակ տեղեկացրեք նրանց, որ քրեական պատասխանատվության կենթարկվեն այն անօրինական գործունեության համար, որով զբաղվում են:
- ԵՍԲՆ-ի պահանջարկը լուծելու այլ ռազմավարություններ: Օրինակ՝ որոշ երկրներ վարում են դատապարտված սեռական հանցագործների գրանցամատյան: Դատարանները դատական կարգադրություններ են կայացրել, որոնք արգելում են նման իրավախախտներին ընդհանրապես օգտվել համացանցից կամ օգտվել համացանցի այն ծառայություններից, որտեղ հաճախակի են լինում երեխաներն ու երիտասարդները: Այս հրամանների խնդիրը մինչ այժմ եղել է դրանց իրականացման մեջ: Այնուամենայնիվ, որոշ երկրներում ուշադրություն են դարձնում հայտնի սեռական հանցագործներին արգելափակված ցուցակում ներառելու հարցը, ինչը կկանխի դրանում գտնվողներին այցելել կամ միանալ որոշակի վեբկայքերի, օրինակ՝ կայքեր, որոնք հայտնի են, որ այցելում են մեծ թվով երեխաներ և երիտասարդներ: Իհարկե, եթե իրավախախտը միանում է վեբկայքին՝ օգտագործելով այլ անուն կամ կեղծ մուտք, նման միջոցների արդյունավետությունը կարող է զգալիորեն նվազել, սակայն այս վարքագիծը քրեականացնելով կարող է սահմանվել հետագա զսպող միջոց:

- Տուժողներին համապատասխան կարճաժամկետ աջակցության տրամադրում: Այնտեղ, որտեղ երեխաները կամ երիտասարդները զոհ են դարձել առցանց, օրինակ՝ համացանցում հայտնվել է նրանց անօրինական լուսանկարը, բնականաբար, նրանք շատ կմտահոգվեն, թե ով կարող էր տեսնել և ինչ ազդեցություն կունենա: Դա կարող է խոցելի դարձնել երեխային կամ երիտասարդին հետագա սեռական շահագործման և բռնության նկատմամբ: Այդ համատեքստում կարևոր կլինի, որ մասնագիտական աջակցության ծառայություններ լինեն՝ երեխաներին և երիտասարդներին աջակցելու, ովքեր հայտնվում են այս հանգամանքներում: Նման աջակցությունը կարող է անհրաժեշտ լինել երկարաժամկետ հիմունքներով:
- Ապահովել այնպիսի մեխանիզմների առկայությունը և դրանց լայնորեն տարածումը, որոնք կապահովեն անօրինական բովանդակության, անհանգստացնող առցանց վարքագծի մասին հեշտ և արագ արձագանքման/հաղորդման համակարգ, օրինակ՝ այնպիսին, որը նման է կլինի [Վիրտուալ գլոբալ աշխատանքային խմբի և ԻՆՀՈՓ-ի](#) կողմից ստեղծված համակարգին: Պետք է խրախուսել ԻՆՏԵՐՊՈԼԻ 24/7 համակարգի օգտագործումը:
- Ապահովել, որ բավարար թվով իրավապահ մարմինների աշխատակիցներ համապատասխան պատրաստվածություն ունենան համացանցի և համակարգչային հանցագործությունների հետաքննության համար և հասանելիություն ունենան համապատասխան դատաբժշկական հաստատություններին, որպեսզի նրանք կարողանան ստանալ և մեկնաբանել համապատասխան թվային տվյալները:
- Ներդրումներ կատարել իրավապահ մարմինների վերապատրաստման, դատախազության և դատական մարմինների համար՝ առցանց հանցագործների կողմից այս հանցագործությունները կատարելու մեթոդների ուսուցման համար: Ներդրումներ կապահանջվեն նաև թվային սարքերից դատաբժշկական ապացույցներ ձեռքբերելու և մեկնաբանելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռքբերելու և պահպանելու համար: Բացի այդ, կարևոր կլինի երկկողմ և բազմակողմ համագործակցություն և տեղեկատվության փոխանակում այլ երկրների համապատասխան իրավապահ մարմինների և քննչական մարմինների հետ:

4.2.2 Կրթություն

Որպես ռազմավարության մաս՝ բարձրացնել երեխաների թվային գրագիտությունը, որպեսզի նրանք կարողանան օգտվել տեխնոլոգիայից՝ զերծ մնալով վնասներից: Այն թույլ կտա երեխաներին զարգացնել քննադատական մտածողության հմտություններ, որոնք կօգնեն բացահայտել և հասկանալ թվային տարածքում իրենց վարքի լավ և վատ կողմերը: Թեև կարևոր է երեխաներին ցույց տալ վնասները, որոնք կարող են առաջանալ առցանց, այնուամենայնիվ,

արդյունավետությունը կլինի միայն այն դեպքում, եթե ներառվի որպես թվային գրագիտության ավելի լայն ծրագրի մաս, որը պետք է համապատասխանի տարիքին և կենտրոնանա հմտությունների և կարողությունների զարգացման վրա: Կարևոր է ներառել սոցիալական և էմոցիոնալ ուսուցման հայեցակարգերն առցանց անվտանգության կրթության մեջ, քանի որ դրանք կնպաստեն սովորողների ըմբռնմանը և զգացմունքների կառավարմանն առցանց և անցանց, առողջ և հարգալից հարաբերությունների հաստատման համար:

Երեխաները պետք է ունենան համապատասխան գործիքներ և գիտելիքներ համացանցից օգտվելու համար, ինչը նրանց անվտանգ պահելու լավագույն միջոցներից մեկն է: Դպրոցական ծրագրերում թվային գրագիտության ներդրումն ուղիներից մեկն է: Մեկ այլ հնարավորություն է կրթական ռեսուրսների ստեղծումը դպրոցական ծրագրից դուրս: Երեխաների հետ աշխատողները պետք է ունենան համապատասխան գիտելիքներ և հմտություններ՝ երեխաներին վստահորեն աջակցելու համար ինչպես երեխաների առցանց պաշտպանության հետ կապված հարցերին արձագանքելու և լուծելու, այնպես էլ երեխաներին տրամադրելու անհրաժեշտ թվային հմտություններ՝ տեխնոլոգիաներից հաջողությամբ օգտվելու համար:

4.2.3 Արդյունաբերություն

Արդյունաբերության ազգային և միջազգային խաղացողները պետք է աշխատեն բարձրացնել երեխաների առցանց անվտանգության հետ կապված խնդիրների մասին իրազեկությունը և օգնեն բոլոր մեծահասակներին, ովքեր պատասխանատու են երեխայի բարեկեցության համար, ներառյալ՝ ծնողներն ու խնամակալները, դպրոցները, երիտասարդներին ծառայող կազմակերպությունները և համայնքները, զարգացնել անհրաժեշտ գիտելիքներն ու հմտություններն՝ երեխաներին անվտանգ պահելու համար: Արդյունաբերությունը պետք է ավելի անվտանգ մոտեցում որդեգրի իրենց արտադրանքի, ծառայությունների և հարթակների նկատմամբ՝ ընդունելով անվտանգությունը որպես հիմնական նպատակ:

- Տրամադրել տարիքին և ընտանիքին համապատասխան գործիքներ՝ օգտատերերին օգնելով ավելի լավ կառավարել իրենց ընտանիքի պաշտպանությունն առցանց:
- Տրամադրել համապատասխան բողոքարկման մեխանիզմներ իրենց օգտատերերի համար, որպեսզի զեկուցեն խնդիրները և մտահոգությունները: Օգտատերերը պետք է ակնկալեն ժամանակին արձագանքներ իրենց բողոքներին, որոնք ներառում են ձեռնարկված գործողությունների մասին տեղեկություններ: Օգտատերերին պետք է տրամադրել նաև տեղեկություն, թե որտեղից նրանք կարող են ստանալ հետագա աջակցություն:
- Բացի այդ, տրամադրել երեխաների հանդեպ ցանկացած տեսակի բռնության մասին զեկույցներ՝ (դասակարգված որպես հանցավոր գործունեություն) դրանք հայտնաբերելու

և վերացնելու համար: Այս պրակտիկան ցույց է տվել, որ եթե բոլոր շահագրգիռ կողմերը նպաստեն հայտնաբերելու, արգելափակելու և զեկուցելու ուղղությամբ, ապա մենք կարող ենք մտածել ավելի մաքուր և անվտանգ ինտերնետի մասին: Արդյունաբերությունը պետք է հաշվի առնի բոլոր համապատասխան գործիքների օգտագործումը՝ կանխելու իրենց հարթակների շահագործումը, օրինակ՝ [ԻԴՀ ծառայությունները](#):

Շատ կարևոր է ներգրավել էկոհամակարգի բոլոր համապատասխան դերակատարներին, որոնք պետք է տեղյակ լինեն առցանց ռիսկերի և վնասների մասին, որպեսզի կարողանան կանխել երեխաների անհարկի ռիսկերի ենթարկվելը:

Մշակել երեխաների առցանց անվտանգության ընդհանուր չափումներ՝ հարցի բոլոր համապատասխան ասպեկտներին տիրապետելու համար: Ընդհանուր չափանիշներն ու չափորոշիչները միակ միջոցն են՝ հետևելու երկրներում առաջընթացին, որոշելու երեխաների նկատմամբ բռնությունը վերացնելու համար իրականացվող ծրագրերի ու գործողությունների հաջողությունը և ճանաչելու երեխաների առցանց անվտանգության էկոհամակարգի հզորությունը:

5. Երեխաների առցանց պաշտպանության ազգային ռազմավարության մշակում

5.1 Ազգային ստուգաթերթ

Որպեսզի մշակվի երեխաների առցանց անվտանգության վրա կենտրոնացած ազգային ռազմավարություն, ապա քաղաքականություն մշակողները պետք է հաշվի առնեն մի շարք ռազմավարություններ: **Աղյուսակ 1**-ում ներկայացված են հիմնական ոլորտները, որոնք պետք է դիտարկել:

	#	Դիտարկման համար հիմնական ոլորտները	Լրացուցիչ մանրամասներ
Իրավական դաշտը	1	Վերանայել գոյություն ունեցող իրավական դաշտը՝ համոզվելու համար, արդյո՞ք առկա են բոլոր անհրաժեշտ իրավական լիազորությունները, որպեսզի իրավապահ մարմիններին և համապատասխան այլ կառույցներին հնարավորություն ընձեռվի պաշտպանել 18 տարեկանից ցածր անձանց՝ առցանց համացանցին միացված բոլոր հարթակներում:	Ընդհանրապես անհրաժեշտ կլինի, որ լինեն մի շարք օրենքներ, որտեղ հստակ կերևա, որ ցանկացած և յուրաքանչյուր հանցագործություն, որը հնարավոր է իրականացնել երեխայի դեմ իրական աշխարհում, ապա կարող է տեղի ունենալ նաև համացանցում կամ ցանկացած այլ էլեկտրոնային հարթակում: Հնարավոր է նաև անհրաժեշտ լինի մշակել նոր օրենքներ կամ հարմարեցնել գոյություն ունեցողները՝ արգելելով վարքագծի որոշ տեսակներ, որոնք կարող են դրսևորվել միայն համացանցում, օրինակ՝ երեխաներին հեռակա հրապուրելը կամ սեռական բնույթի գործողության դրդելը, երեխաներին սիրահետելը, որպեսզի հանդիպեն իրական աշխարհում՝ սեռական նպատակով: Այս նպատակների հետ մեկտեղ, ընդհանուր առմամբ, անհրաժեշտ կլինի, որ գոյություն ունենա իրավական դաշտ, որն արգելում է համակարգիչների չարաշահումը հանցավոր նպատակների համար, արգելում է հաքերային հարձակումները, վնասակար նյութերի տարածումը և հաստատում, որ համացանցը վայր է, որի շրջանակներում կարող են հանցագործություններ կատարել:
	2	Համապատասխանաբար հաստատել, որ երեխայի նկատմամբ իրական աշխարհում անօրինական ցանկացած գործողություն անօրինական է նաև առցանց, և որ երեխաների առցանց տվյալների պաշտպանության և գաղտնիության կանոնները նույնպես համարժեք են:	Որոշ երկրներ այս ոլորտում քաղաքականություն մշակելու համար ստեղծել են ինքնակարգավորվող կամ համակարգավորվող մոդելներ: Նման մոդելների միջոցով, օրինակ, հրապարակել են լավագույն փորձի կանոններ՝ ուղղորդելու ինտերնետ արդյունաբերությանն այն
Կարգավորող շրջանակ	3	Դիտարկել կարգավորող քաղաքականության մշակումը: Սա կարող է ներառել ինքնակարգավորվող կամ համակարգավորվող քաղաքականության մշակում, ինչպես նաև ամբողջական	Որոշ երկրներ այս ոլորտում քաղաքականություն մշակելու համար ստեղծել են ինքնակարգավորվող կամ համակարգավորվող մոդելներ: Նման մոդելների միջոցով, օրինակ, հրապարակել են լավագույն փորձի կանոններ՝ ուղղորդելու ինտերնետ արդյունաբերությանն այն

		<p>կարգավորող շրջանակ: Ինքնակարգավորող կամ համակարգավորվող քաղաքականությունը կարող է ներառել լավ պրակտիկայի կամ առցանց անվտանգության հիմնական ակնկալիքների ձևակերպումն ու հրապարակումն ինչպես բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերին ներգրավելու հարցում օգնելու, համակարգելու կամ կազմակերպելու և պահ-պանելու, այնպես էլ արագության բարձրացման առումով, որոնցով կարող են ձևակերպվել և գործի դրվել տեխնոլոգիական փոփոխություններին համապատասխան արձագանքները: Կարգավորող մոդելը կարող է սահմանել շահագրգիռ կողմերի ակնկալիքներն ու պարտավորությունները և ամրագրել իրավական համատեքստում: Քաղաքականության խախտման համար տույժերը նույնպես կարող են դիտարկվել:</p>	<p>միջոցներով, որոնք կարող են լավագույնս աշխատել, երբ այն վերաբերում է երեխաներին և երիտասարդներին առցանց ավելի անվտանգ պահելուն: Ինքնակարգավորումը և համատեղ կարգավորումը կարող են ավելի արագաշարժ լինել տեխնոլոգիական փոփոխությունների նկատմամբ՝ համապատասխան արձագանքների ձևակերպման և ուժի մեջ մտնելու արագության բարձրացման առումով:</p> <p>Վերջերս մի քանի երկիր մշակել և/կամ ներդրել են կարգավորող դաշտ: Այս օրինակներում կարգավորող շրջանակն առաջացել է ինքնակարգավորվող կամ համակարգավորվող մոդելներից և սահմանում է շահագրգիռ կողմերի պահանջներն ու ակնկալիքները, մասնավորապես, արդյունաբերության մատակարարներին՝ իրենց օգտագործողներին ավելի լավ պաշտպանելու համար:</p>
<p>Զեկուցում անօրինական բովանդակության մասին</p>	<p>4</p>	<p>Ապահովել համացանցում մեխանիզմի ստեղծմանը, որը խրախուսի և հեշտությամբ տրամադրի հասկանալի միջոցներ՝ համացանցում հայտնաբերված անօրինական բովանդակության բազմազանության</p>	<p>Առցանց ծառայության չարաշահման կամ առցանց վիճելի և անօրինական վարքագծի մասին զեկուցելու մեխանիզմները, օրինակ՝ ազգային թեժ գիծը պետք է լայնորեն ներկայացվի և գովազդվի ինչպես համացանցում, այնպես էլ այլ լրատվամիջոցներում: Եթե ազգային թեժ գիծը հասանելի չէ, ապա ԻԴՀ-ն առաջարկում է Զեկուցման պորտալներ:</p>

		<p>մասին զեկուցելու համար: Օրինակ՝ ազգային թեժ գիծ, որն ունի արագ արձագանքելու և ապօրինի նյութերը հեռացնելու կամ անհասանելի դարձնելու հնարավորություններ: Արդյունաբերությունը պետք է մեխանիզմներ ունենա՝ բացահայտելու, արգելափակելու և վերացնելու երեխաների բռնությունն առցանց՝ օգտվելով իրենց կազմակերպությունների ն առնչվող բոլոր ծառայություններից:</p>	<p>Բռնության մեխանիզմների մասին զեկուցելու հղումները պետք է ակնառու կերպով ցուցադրվեն ցանկացած վեբկայքի համապատասխան մասում, որը թույլ է տալիս ցուցադրել օգտատերերի կողմից ստեղծված բովանդակությունը: Պետք է նաև հնարավոր լինի, որ մարդիկ, ովքեր որևէ կերպ վտանգի մեջ են կամ ականատես են եղել համացանցում մտահոգիչ գործողությունների կարողանան հնարավորինս արագ հայտնել այդ մասին համապատասխան իրավապահ մարմիններին, ովքեր պետք է վերապատրաստված լինեն և պատրաստ արագ արձագանքման: Վիրտուալ գլոբալ աշխատանքային խումբն իրավապահ մարմին է, որն ապահովում է 24/7 մեխանիզմ՝ ԱՄՆ-ից, Կանադայից, Ավստրալիայից և Իտալիայից ապօրինի վարքագծի կամ բովանդակության մասին հաղորդումներ ստանալու համար: Շուտով ակնկալվում է, որ միանալու են այլ երկրներ: Տե՛ս www.virtualglobaltaskforce.com: Տե՛ս նաև ԻՆՀՈՓ-ում:</p>
<p>Զեկուցում օգտվողների մտահոգությունների մասին</p>	<p>5</p>	<p>Արդյունաբերությունը պետք է հնարավորություն ընձեռի օգտագործողներին հայտնել իրենց ծառայությունների մասին, այդ թվում՝ մտահոգությունների, խնդիրների և համապատասխանաբար արձագանքի և լուծում տա:</p>	<p>Ծառայություն մատուցողները պետք է պարտավորվեն իրենց օգտատերերին տրամադրել հստակ ուղեցույց՝ ծառայությունների ջրջանակներում առկա խնդիրների և մտահոգությունների մասին զեկուցելու համար: Դրանք պետք է լինեն երեխաներին հարմար և մատչելի:</p>
<p>Դերակատարներ և շահագրգիռ կողմեր</p>	<p>6</p>	<p>Ներգրավել բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերին, ովքեր հետաքրքրված են առցանց երեխաների պաշտպանության հարցում,</p>	<p>Մի քանի ազգային կառավարություններ օգտակար են համարել համախմբել բոլոր հիմնական շահագրգիռ կողմերին և խաղացողներին, կենտրոնանալու ազգային նախաձեռնության մշակմանը և իրականացմանը՝ երեխաների և երիտասարդների</p>

	<p>մասնավորապես.</p> <ul style="list-style-type: none"> • Պետական մարմիններ • Իրավապահ մարմիններ • Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություններ • Ինտերնետ ծառայությունների մատակարարներ (ԻԾՄ) և այլ էլեկտրոնային ծառայություններ մատուցողներ (ԷԾՄ) • Բջջային հեռախոսների ցանցի մատակարարներ • Հանրային WiFi մատակարարներ • Այլ համապատասխան բարձր տեխնոլոգիական ընկերություններ • Ուսուցչական կազմակերպություններ • Ծնողական կազմաներպություններ • Երեխաներին և երիտասարդներ • Երեխաների պաշտպանություն իրականացնող և այլ համապատասխան հասարակական կազմակերպություններ • Ակադեմիական և հետազոտական համայնքներ • Ինտերնետ սրճարանների և հանրային հասանելիության այլ մատակարարների սեփականատերեր, օրինակ՝ գրադարաններ, 	<p>համար համացանցն ավելի անվտանգ վայր դարձնելու և շատ գործնական ձևով խնդիրների և դրանց հետ վարվելու վերաբերյալ իրազեկության բարձրացմանը: Այս ռազմավարության շրջանակներում կարևոր կլինի գնահատել, որ շատերը համընդհանուր կերպով և մշտապես տարբեր սարքերի միջոցով միացված են համացանցին: Պետք է ներգրավվեն լայնաշերտ, բջջային և Wi-Fi օպերատորները: Բացի այդ, շատ երկրներում հանրային գրադարանների, հեռակենտրոնների և ինտերնետ սրճարանների ցանցը կարող են լինել համացանցին հասանելիության կարևոր աղբյուրներ, հատկապես՝ երեխաների և երիտասարդների համար:</p>
--	---	---

		հեռակենտրոններ, PC Bangs ¹ և առցանց խաղերի կենտրոններ և այլն:	
Հետազոտություն	7	Իրականացնել ազգային դերակատարների և շահագրգիռ կողմերի սպեկտրի հետազոտություն՝ երեխաների առցանց պաշտպանության վերաբերյալ նրանց կարծիքները, փորձառությունները, մտահոգությունները և հնարավորությունները պարզելու համար:	
Կրթության, թվային գրագիտության կոմպետենտություն	8	Թվային գրագիտության առանձնահատկությունները դարձնել ցանկացած ազգային դպրոցական ուսումնական ծրագրի մաս, որը համապատասխանում է տարիքին և կիրառելի է բոլոր երեխաների համար:	Դպրոցները և կրթական համակարգը հիմնականում կներկայացնեն երեխաների առցանց պաշտպանության, ազգային ռազմավարության, կրթության և թվային գրագիտության բաղադրիչի հիմքը: Ցանկացած ազգային դպրոցական ուսումնական ծրագիր պետք է ներառի երեխաների առցանց պաշտպանության ասպեկտները և նպատակադրված լինի բոլոր տարիքի երեխաներին տրամադրել համապատասխան տարիքային հմտություններ՝ տեխնոլոգիաներից օգուտ քաղելու և հաջողությամբ օգտագործելու համար, ինչպես նաև ուշադիր լինի սպառնալիքների և վնասների նկատմամբ, որպեսզի հաջողությամբ խուսափեն դրանցից: Այն պետք է ճանաչի և պարզևատրի դրական և կառուցողական առցանց վարքագիծը: Ցանկացած կրթական և իրազեկման քարոզարշավի ընթացքում կարևոր է ճիշտ մոտեցում ցուցաբերելը: Պետք է խուսափել վախի վրա հիմնված

			<p>հաղորդագրություններից, անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել նոր տեխնոլոգիայի բազմաթիվ դրական և զվարճալի հատկանիշներին:</p> <p>Համացանցը մեծ ներուժ ունի երեխաներին և երիտասարդներին նոր աշխարհներ բացահայտելու հնարավորություն տալու գործում: Առցանց վարքագծի դրական և պատասխանատու ձևերի ուսուցումը հանդիսանում է կրթական և իրազեկման ծրագրերի հիմնական նպատակը: Երեխաների հետ աշխատողները, հատկապես՝ ուսուցիչները, պետք է համապատասխան պատրաստվածություն և սարքավորումներ ունենան՝ հաջողությամբ կրթելու և երեխաներին այդ հմտություններով ապահովելու համար: Նրանք պետք է հասկանան առցանց սպառնալիքներն ու վնասները, ինչպես նաև կարողանան վստահորեն ճանաչել բռնության և վնասի նշաններն, արձագանքեն և զեկուցեն այդ մտահոգությունների մասին, որպեսզի պաշտպանեն իրենց երեխաներին:</p>
<p>Կրթական ռեսուրսներ</p>	<p>9</p>	<p>Օգտվել բոլոր շահագրգիռ կողմերի գիտելիքներից, փորձից և մշակել համացանցի անվտանգության հաղորդագրություններ և նյութեր, որոնք արտացոլում են տեղական մշակութային նորմերն ու օրենքները և երաշխավորում, որ դրանք արդյունավետորեն բաշխվեն և պատշաճ կերպով ներկայացվեն բոլոր հիմնական թիրախային լսարաններին: Հաշվի</p>	<p>Ուսումնական նյութեր պատրաստելիս կարևոր է նկատի ունենալ, որ շատ մարդիկ նոր են տիրապետում տեխնոլոգիային և հարմարավետ չեն զգում օգտագործելուց: Այդ իսկ պատճառով կարևոր է ապահովել, որ անվտանգության նյութերը հասանելի լինեն գրավոր, տպագիր կամ այլ միջոցով, որոնք ավելի հարմար կլինեն նորեկներին օգտագործելու համար, օրինակ՝ տեսանյութով: Խոշոր ինտերնետ ընկերություններից շատերն ունեն վեբկայքեր, որոնցում կան մեծ քանակությամբ առցանց խնդիրների մասին տեղեկատվություններ</p>

		<p>առնել զանգվածային լրատվամիջոցների օգնությունն իրազեկման հաղորդագրությունների խթանման հարցում: Մշակել նյութեր, որոնք ընդգծում են երեխաների և երիտասարդների համար համացանցի դրական, հզորացնող կողմերը և խուսափում են վախի վրա հիմնված հաղորդագրություններից: Խթանել առցանց վարքագծի դրական և պատասխանատու ձևերը: Ռեսուրսներ ստեղծելու մասին մտածել, որոնք կօգնեն ծնողներին գնահատել իրենց երեխաների առցանց անվտանգությունը և սովորել, թե ինչպես նվազագույնի հասցնել ռիսկերը և առավելագույնի՝ սեփական ընտանիքի ներուժը նպատակային կրթության միջոցով:</p>	<p>Երեխաների և երիտասարդների համար: Այնուամենայնիվ, շատ հաճախ այս նյութերը հասանելի են լինում միայն անգլերենով կամ այլ լեզուներով: Հետևաբար, շատ կարևոր է, որ նյութերը արտադրվեն տեղում, որոնք արտացոլում են տեղական օրենքները, ինչպես նաև տեղական մշակութային նորմերը: Սա էական նշանակություն կունենա համացանցի անվտանգության ցանկացած քարոզարշավի կամ մշակված ուսումնական նյութերի համար:</p>
<p>Երեխաների պաշտպանություն</p>	<p>10</p>	<p>Ապահովել, որ լինեն երեխաների պաշտպանության համընդհանուր և համակարգված մեխանիզմներ, որոնք պարտավորեցնում են երեխաների հետ աշխատող բոլոր նրանց (սոցիալական խնամք, առողջապահություն, դպրոցներ և այլն) բացահայտել, արձագանքել, զեկուցել բռնության և վնասի դեպքերը, որոնք տեղի են ունենում առցանց:</p>	<p>Երեխաների պաշտպանության համընդհանուր համակարգ պետք է լինի և կիրառվի բոլոր նրանց համար, ովքեր աշխատում են երեխաների հետ, ինչը նրանց պարտավորեցնում է զեկուցել երեխաների նկատմամբ բռնության կամ վնասի մասին, որպեսզի հնարավոր լինի հետաքննել և կարգավորել իրավիճակները:</p>

<p>Ազգային իրազեկում</p>	<p>11</p>	<p>Կազմակերպել ազգային իրազեկման արշավներ՝ երեխաների առցանց պաշտպանության խնդիրները համընդհանուր կերպով ընդգծելու հնարավորություն ստեղծելու համար: Հնարավոր է, որ համաշխարհային քարոզարշավներն օգտագործելը շահավետ լինեն, ինչպիսին է Անվտանգ ինտերնետի օրը:</p>	<p>Ծնողները, խնամակալները և մասնագետները, ուսուցիչները կարևոր դեր ունեն և կարող են օգնել երեխաներին և երիտասարդներին ավելի անվտանգ լինել առցանց: Պետք է մշակվեն աջակցող ծրագրեր, որոնք կնպաստեն խնդիրների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը և տրամադրեն նաև դրանց հետ վարվելու ռազմավարություններ: Պետք է նաև ուշադրություն դարձնել զանգվածային լրատվամիջոցների օգնությանը իրազեկման հաղորդագրությունների և արշավների խթանման հարցում: Հնարավորությունները, ինչպիսին է Ապահով ինտերնետի օրը՝ օգտակար կլինի երեխաների առցանց պաշտպանության վերաբերյալ ազգային երկխոսությունը խթանելու և խրախուսելու համար: Շատ երկրներ Անվտանգ ինտերնետի օրվա կապակցությամբ հաջողությամբ իրականացրել են ազգային իրազեկման արշավներ՝ ներգրավելով ոլորտի տարբեր դերակատարների և շահագրգիռ կողմերի, ինչպես նաև օգտագործել են լրատվամիջոցների և սոցիալական մեդիայի ողջ ներուժը:</p>
<p>Գործիքներ, ծառայություններ և կարգավորումներ</p>	<p>12</p>	<p>Հաշվի առնել սարքի կարգավորումների, տեխնիկական գործիքների (օրինակ՝ զտիչ ծրագրերի) և երեխաների պաշտպանության հավելվածների ու կարգավորումների դերը, որոնք կարող են օգնել:</p> <p>Խրախուսել օգտատերերին պատասխանատվություն կրել իրենց սարքերի համար, խրախուսել օպերացիոն</p>	<p>Կան մի քանի ծառայություններ, որոնք կարող են օգնել հեռացնել անցանկալի նյութերը կամ արգելափակել անցանկալի կոնտակտները: Երեխաների անվտանգության և զտման այս ծրագրերից որոշները կարող են հիմնականում անվճար լինել, քանի որ դրանք համակարգչային օպերացիոն համակարգի մաս են կազմում կամ տրամադրվում են որպես փաթեթի մաս, որը հասանելի է ինտերնետ ծառայություն տրամադրողի կողից: Որոշ խաղային կոնսոլների արտադրողներ նույնպես տրամադրում են</p>

	<p>համակարգի թարմացումները, ինչպես նաև համապատասխան անվտանգության ծրագրերը և հավելվածներն օգտագործելը:</p>	<p>Նմանատիպ գործիքներ, եթե սարքը միացված է համացանցին: Այս ծրագրերը կարող են ապահովել աջակցության ողջունելի մակարդակ, հատկապես փոքր երեխաներ ունեցող ընտանիքներում:</p> <p>Սարքերի մեծամասնությունն ապահովված է այնպիսի կարգավորումներով, որոնք օգնում են պաշտպանել երեխաներին, ինչպես նաև խթանել դրանց առողջ և հավասարակշռված օգտագործմանը: Սա վերաբերվում է այն մեխանիզմներին, որոնք թույլ են տալիս ծնողներին կառավարել իրենց երեխաների սարքերը՝ ժամանակ սահմանել հավելվածների ու ծառայությունների օգտագործման համար, ինչպես նաև կառավարել երեխաների կողմից կատարվող գնումները: Վերջերս մշակվել են զեկուցման ձևեր և կարգավորումներ, որոնք հնարավորություն կտան օգտատերերին և ծնողներին ավելի լավ հասկանալ և կառավարել էկրանի ժամանակն ու հասանելիությունը:</p> <p>Այս տեխնիկական գործիքները պետք է օգտագործվեն որպես ավելի ընդարձակ մոտեցման մի մաս: Ծնողների և/կամ խնամակալի ներգրավվածությունը կարևոր է: Երեխաները տարիքի հետ ցանկանանում են ավելի շատ գաղտնիություն և ինքնուրույնություն ունենալ: Բացի այդ, երբ վաճառողի և հաճախորդի միջև կա վճարային հարաբերություններ, տարիքի ստուգման գործընթացները կարող են շատ արժեքավոր դեր խաղալ՝ օգնելու տարիքային սահմանափակում ունեցող ապրանքների և ծառայությունների մատակարարներին կամ նյութի հրատարակիչներին, որոնք նախատեսված են միայն որոշակի</p>
--	--	--

		<p>տարիքի կամ ավելի բարձր լսարանի համար: Այնտեղ, որտեղ հաշվարկային հարաբերություններ չկան, տարիքի ստուգման տեխնոլոգիայի օգտագործումը կարող է խնդրահարույց լինել կամ շատ երկրներում դա կարող է անհնար լինել տվյալների հուսալի աղբյուրների բացակայության պատճառով:</p>
--	--	--

5.2 Հարցերի օրինակներ

Բացահայտելով ազգային շահագրգիռ կողմերին և դերակատարներին, հետևյալ հարցերը կարող են ուղղվել և խնդրել նրանց, որ լրացնեն պատասխանները: Նրանց պատասխանները կօգնեն որոշել քաղաքականության ծածկույթի չափը, ուժեղ կողմերն, ինչպես նաև այն ոլորտները, որոնց վրա պետք է կենտրոնանալ ազգային ստուգաթերթում:

- Արդյո՞ք պատասխանատու եք երեխաների իրավունքներին վերաբերող հարցերի և առցանց անվտանգության ապահովման համար:
- Ինչպե՞ս են առցանց անվտանգությունը և երեխաների իրավունքները ինտեգրված Ձեր կողմից գործող քաղաքականության և գործընթացների մեջ:
- Որքանո՞վ է առցանց անվտանգությունն ապահովված գործող օրենսդրությամբ:
- Որո՞նք են Ձեր առցանց անվտանգության առաջնահերթությունները:
- Ի՞նչ գործողություններ եք կատարում առցանց անվտանգությանն աջակցելու համար:
- Ինչպե՞ս եք աշխատում այլ գործակալությունների և կազմակերպությունների հետ՝ առցանց անվտանգությունը բարելավելու համար:
- Կարո՞ղ են երեխաները/ծնողները զեկուցել Ձեզ առցանց անվտանգության մտահոգությունների կամ խնդիրների մասին:
- Որո՞նք են Ձեր երեք հիմնական մարտահրավերներն առցանց աշխարհում:

Օգտակար կլինի նաև հետազոտություններ կատարել և հասկանալ երեխաների, ինչպես նաև նրանց ծնողների ընկալումն ու փորձն երեխաների առցանց պաշտպանության վերաբերյալ:

6. Տեղեկատվական նյութ

Երեխաների առցանց անվտանգություն. Հիմնական փաստաթղթեր և հրապարակումներ

2020

- ECPAT միջազգային, [Երեխաների սեռական շահագործումը Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում, 2020թ.](#)
- DQ ինստիտուտ, 2020 Երեխաների առցանց անվտանգության զեկույց, 2020թ.
- ԵՄ [Երեխաներն առցանց, 2020թ., Հարցման արդյունքներ 19 երկրներից, 2020թ.](#)

2019

- Ինտերնետի Դիտման Հիմնադրամ (IWF), [Տարեկան հաշվետվություն, 2019թ.](#)
- Մենք ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ գլոբալ դաշինք (WeProtect Global Alliance), [Գլոբալ սպառնալիքների գնահատում, 2019թ.](#)
- Լայնաշերտ կապի հանձնաժողով ՀՄՄ, Երեխաների առցանց անվտանգություն: [Համընդհանուր հոչակագիր, 2019թ.](#)
- Լայնաշերտ կապի հանձնաժողով ՀՄՄ, Երեխաների առցանց անվտանգություն. [Բռնության, չարաշահման և շահագործման ռիսկի նվազեցումն առցանց, 2019](#)
- Գլոբալ երեխաներն առցանց, [Մեծանալով համացանցին միացված աշխարհում, 2019թ.](#)
- [Համացանցում երեխաների սեռական բռնության նկարների հայտնաբերման վերաիմաստավորում, 2019](#) թվականի Համաշխարհային ցանցի համաժողովի նյութերում, մայիսի 13-17, 2019, ՍանՖրանցիսկո, ԱՄՆ, 2019 թ.
- Միացյալ Թագավորության ներքին գործերի նախարարություն, [առցանց վնասների սպիտակ թուղթ\(միայն Միացյալ Թագավորություն\), 2019թ](#)
- PA Consulting, [Խճված համացանց. Վերաիմաստավորելով առցանց ԵՍՇԲ մոտեցումը, 2019 թ.](#)
- Միացյալ Թագավորության տեղեկատվության հանձնակատարի գրասենյակ, Խորհրդատվություն պրակտիկայի կանոնագրքի վերաբերյալ՝ օգնելու երեխաներին պաշտպանել առցանց (միայն Միացյալ Թագավորություն), 2019թ.
- Երեխաների նկատմամբ բռնությանը վերջ տալու համար գլոբալ հիմնադրամ, [Ապացույցներ՝ հասկանալու առցանց երեխաների սեռական շահագործումը և բռնությունը, 2019թ,](#)
- Երեխաների նկատմամբ բռնությանը վերջ դնելու համաշխարհային գործընկերություն, [Գործողության կոչ անվտանգ սովորելու համար, Երիտասարդական մանիֆեստ, 2019թ.](#)

- [ՅՈՒՆԵՍԿՕ, Թվերի հետևում. Վերջ դնել դպրոցական բռնությանը և ահաբեկմանը, 2019թ.](#) (ներառում է տվյալներ առցանց վնասակար վարքագծի և կիրքերիարձակման մասին)
- [ՄԱԿ-իՄարդու իրավունքներ, Երեխաների իրավունքները թվային միջավայրի հետ կապված, 2019 թ](#)
- [Ավստրալիայի էլեկտրոնային անվտանգության հանձնակատար \(eSafety Commissioner\), ակնարկ անվտանգությունը ըստ դիզայնի, 2019թ.](#)
- [ՅՈՒՆԵՍԿՕ, Ինչու բիզնեսները պետք է ներդրումներ կատարեն երեխաների թվային անվտանգության մեջ, 2019 թ.](#)
- [ԱՄՆ Մարդկանց թրաֆիքինգի մասին պետդեպարտամենտի գեկույց, 2019 թ.](#)

2018

- [Մենք ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ\(WePROTECT\) գլոբալ դաշինք, Գլոբալ սպառնալիքների գնահատում, 2018 թ.](#)
- [Երեխաների արժանապատվությունը թվային աշխարհում, Տեխնիկական աշխատանքային խմբի գեկույց, 2018թ. Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտեի CM/Rec\(2018\)7 հանձնարարական անդամ պետություններին՝ թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրականացնելու ուղեցույցների վերաբերյալ, 2018 թ.](#)
- [Երեխաների նկատմամբ բռնությանը վերջ դնելու գլոբալ հիմնադրամ, Երկու տարվա աջակցության լուծումներ. Հիմնադրամի ներդրումների արդյունքներ, 2018թ.](#)
- [Մենք ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ գլոբալ դաշինք, Ազգային արձագանքման կարողությունների և իրականացման մոդելի երկրների օրինակներ, 2018թ.](#)
- [ԻՆՏԵՐՊՈԼ-ը և ECPAT Միջազգային-ը, Երեխաների սեռական շահագործման նյութում չբացահայտված զոհերի վերաբերյալ գլոբալ ցուցանիշի նկատմամբ, 2018թ.](#)
- [ԵՎՐՈՊՈԼ, Ինտերնետային կազմակերպված հանցավորության սպառնալիքների գնահատում \(ԻԿՀՍԳ\), 2018թ.](#)
- [NetClean, Երեխաների սեռական բռնության կիրքերիանցագործության մասին գեկույց, 2018թ.](#)
- [Անհայտ կորած և շահագործվող երեխաների միջազգային կենտրոն \(ICMEC\), Երեխաների սեռական բռնության նյութ. Մոդելային օրենսդրություն և գլոբալ վերանայում, 9-րդ հրատարակություն, 2018թ.](#)
- [Անհայտ կորած և շահագործվող երեխաների միջազգային կենտրոն \(ICMEC\), Երեխաների պաշտպանության ուսումնասիրություններ. Սեռական շորթում և անհամաձայնության պոռնոգրաֆիա, 2018թ.](#)
- [Ինտերնետային թեժ գծերի միջազգային ասոցիացիա, INHOPE գեկույց, 2018թ.](#)
- [Ինտերնետի Դիտման Հիմնադրամ \(IWF\), տարեկան](#)

հաշվետվություն, 2018թ.

- Thorn, Երեխաների սեռական շահագործման պատկերների արտադրություն և ակտիվ առևտուր, 2018 թ.
- ՀՄՄ, Համաշխարհային կիրքեր անվտանգության ինդեքս, 2018թ.
- CSA Փորձագիտական Կենտրոն, Միջամտություններ երեխաների առցանց սեռական շահագործման հեղինակների համար. շրջանակի վերանայում և բացերի վերլուծություն, 2018
- NatCen, առցանց-օժանդակված ԵՍՇԲԿ-ի կատարողների վարքագիծը և բնութագրերը-արագ ապացույցների գնահատում, 2018թ.
- ՅՈՒՆԻՍԵՖ, Երեխաների և թվային կապի քաղաքականության ուղեցույց, 2018թ

2017

- Անհայտ կորած և շահագործվող երեխաների ազգային կենտրոն (NCMEC), Երեխաների առցանց գայթակղությունը. Կիրքերուշագիր գեկույցների խորը վերլուծություն, 2017թ.
- 5 Իրավունքների հիմնադրամ (5Rights Foundation), Թվային մանկություն, թվային միջավայրում զարգացման կարևորագույն փուլեր, 2017թ
- Երեխաների ցանց (Childnet), DeShame հաշվետվություն, 2017
- Երեխաների պաշտպանության կանադական կենտրոն, վերապրածների/փրկվածների հարցում, 2017թ
- Ինտերնետի Դիտման Հիմնադրամ (IWF), տարեկան հաշվետվություն, 2017թ.
- Անհայտ կորած և շահագործման ենթարկված երեխաների միջազգային կենտրոն (ICMEC), տարեկան հաշվետվություն, 2017թ
- Անհայտ կորած և շահագործվող երեխաների միջազգային կենտրոն (ICMEC), Երեխաների առցանց սիրահետում՝ սեռական նպատակներով. Մոդելային օրենսդրություն և գլոբալ վերանայում, 2017թ.
- Thorn, Սեռական բռնության առցանց հարցում 13-25 տարեկան սեռական բռնության ենթարկված 2097 զոհերի մասնակցությամբ, 2017թ.
- ՅՈՒՆԻՍԵՖ, Երեխաները թվային աշխարհում, 2017թ.
- Արևմտյան Սիդնեյի համալսարան, Երիտասարդ և առցանց. Երեխաների տեսակետները թվային դարաշրջանում կյանքի վերաբերյալ, 2017թ.
- ECPAT Միջազգային, Երեխաների սեռական շահագործումը Հարավարևելյան Ասիայում, 2017թ.

2016

- ՅՈՒՆԻՍԵՖ, Վտանգներ և հնարավորություններ. մեծանալով առցանց, 2016թ

- [ՅՈՒՆԻՍԵՖ, Երեխաների պաշտպանությունը թվային դարաշրջանում. Ազգային արձագանքներ առցանց ԵՍՇԲԿ-ին Հարավարևելյան Ասիայի պետություններում, 2016թ.](#)
- Արդարադատության և հանցավորության կանխարգելման կենտրոն, [Երեխաների առցանց պաշտպանություն Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանում, 2016թ.](#)
- ECPAT միջազգային, [Երեխաների սեռական շահագործման հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբ, Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության տերմինաբանական ուղեցույցներ \(Լյուքսեմբուրգի ուղեցույցներ\), 2016թ.](#)

2015

- Մենք ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ (WePROTECT) գլոբալ դաշինք, [Երեխաների սեռական շահագործման և բռնության կանխարգելում և հաղթահարում \(ԵՍՇԲԿ\). Ազգային արձագանքման մոդել, 2015 թ.](#)
- Անհայտ կորած և շահագործվող երեխաների ազգային կենտրոն (NCMEC), [ԵՍՇԲԿ-ի դեմ պայքարող թեժ գծերի համաշխարհային լանդշաֆտ, 2015թ](#)
- ՀՄՄ և ՅՈՒՆԻՍԵՖ, [Երեխաների առցանց պաշտպանության արդյունաբերության համար ուղեցույցներ, 2015թ.](#)

Մարդու իրավունքները թվային աշխարհում

- Եվրոպայի խորհուրդ, [թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրականացնելու ուղեցույց, 2018թ.](#)
- ՅՈՒՆԵՍԿՕ, [Համացանցի համընդհանուրության ցուցանիշներ, 2019թ.](#)
- Թվային իրավունքների վարկանիշ (RDR), 2019 [Թվային իրավունքների վարկանիշի կորպորատիվ հաշվետվողականության ինդեքս, 2019թ.](#)
- Լայնաշերտ կապի կայուն զարգացման հանձնաժողով, [Լայնաշերտ կապի վիճակը, 2019թ.](#)
- ՀՄՄ, [Թվային զարգացման չափում, 2019թ.](#)
- ՀՄՄ, [Տեղեկատվական հասարակության չափման հաշվետվություն, 2018թ.](#)
- ՅՈՒՆԻՍԵՖ, [Երեխաների և թվային շուկայավարման արդյունաբերության գործիքակազմ, 2018թ.](#)
- Լայնաշերտ կապի կայուն զարգացման հանձնաժողով, [Թվային առողջություն, 2017թ.](#)
- Լայնաշերտ կապի կայուն զարգացման հանձնաժողով, [Թվային հմտություններ կյանքի և աշխատանքի համար, 2017թ.](#)
- Լայնաշերտ կապի կայուն զարգացման հանձնաժողով, [Թվային գենդերային բաժանում, 2017թ.](#)

- ՅՈՒՆԻՍԵՖ, Գաղտնիություն, անձնական տեղեկատվության և հեղինակության պաշտպանություն, 2017թ.
- ՅՈՒՆԻՍԵՖ, Խոսքի ազատություն, միավորումներ, տեղեկատվության հասանելիություն և մասնակցություն, 2017թ.
- ՅՈՒՆԻՍԵՖ, Համացանցին հասանելիություն և թվային գրականություն, 2017թ.
- ՄԱԿ-իԾԿԿ, Սեռական շահագործումից երեխաների արդյունավետ պաշտպանության ուղեցույց, 2019 թ.

Լրացուցիչ տեղեկության համար խնդրում ենք այցելել լրացուցիչ ռեսուրսների ցանկը՝ www.itu-cop-guidelines.com

Հավելված 1. Տերմինաբանություն

Ստորև բերված սահմանումները հիմնականում հիմնված են գոյություն ունեցող տերմինաբանությունների վրա, ինչպես ներկայացված են Երեխայի իրավունքների կոնվենցիայում, 1989թ., երեխաների սեռական շահագործման միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից՝ Սեռական շահագործումից և բռնությունից երեխաների պաշտպանության տերմինաբանական ուղեցույցներում, 2016թ.⁷⁰ (Լյուքսեմբուրգի ուղեցույցներ), Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում, Սեռական շահագործումից և բռնությունից երեխաների պաշտպանություն, 2012թ.⁷¹, ինչպես նաև Գլոբալ երեխաներն առցանց զեկույցում, 2019թ.⁷²:

Դեռահասներ

Դեռահաս են համարվում 10-19 տարեկան անձինք: Կարևոր է նշել, որ միջազգային իրավունքով *դեռահաս* տերմինը պարտադիր չէ և 18 տարեկանից ցածրը համարվում է երեխա, մինչդեռ 19 տարեկանները համարվում են չափահաս, բացառությամբ այն դեպքերի, երբ ազգային օրենսդրությամբ այլ բան է նախատեսված⁷³:

Արհեստական բանականություն (ԱԲ)

Ամենալայն իմաստով տերմինն անորոշ կերպով վերաբերում է համակարգերին, որոնք մաքուր գիտական ֆանտաստիկա են (այսպես կոչված «ուժեղ» ԱԲ-ներ՝ ինքնագիտակցված ձևով) և համակարգեր, որոնք արդեն գործում են և ունակ են կատարել շատ բարդ առաջադրանքներ՝ (դեմքի կամ ձայնի ճանաչում, տրանսպորտային միջոցներ վարելը. այս համակարգերը բնութագրվում են որպես «թույլ» կամ «չափավոր» ԱԲ-ներ):⁷⁴

⁷⁰ «Լյուքսեմբուրգյան տերմինաբանական ուղեցույցներ երեխաներին սեռական շահագործումից և սեռական չարաշահումից պաշտպանելու համար», 2016, 114, <http://luxembourgguidelines.org/wp-content/uploads/2017/06/Terminology-guidelines-396922-EN.pdf>

⁷¹ Եվրոպայի խորհուրդ, Երեխաների պաշտպանություն սեռական շահագործումից և սեռական բռնությունից: Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Ստրասբուրգ: Եվրոպայի խորհրդի հրատարակություն, 2012), https://www.coe.int/t/dg3/children/1in5/Source/Lanzarote%20Convention_EN.pdf:

⁷² Globalkidsonline.net, «Ճիշտ է արված, համացանցի օգտագործումը կարող է մեծացնել ուսումնառությունը և հմտությունները», նոյեմբեր 2019, <http://globalkidsonline.net/synthesis-report-2019/>:

⁷³ ՅՈՒՆԻՍԵՖ և ՀՄՄ, Երեխաների առցանց պաշտպանության վերաբերյալ արդյունաբերության համար ուղեցույց (itu.int/cop, 2015), https://www.itu.int/en/cop/Documents/bD_Broch_INDUSTRY_0909.pdf:

⁷⁴ Եվրոպայի խորհուրդ, «Ինչ է ԱԲ-ն?», coe.int, Արհեստական բանականություն, հասանելի է 2020 թվականի հունվարի 16, <https://www.coe.int/en/web/artificial-intelligence/what-is-ai>

Արհեստական Բանականության (ԱԲ) համակարգեր

ԱԲ համակարգը մեքենայական համակարգ է, որը կարող է մարդու կողմից սահմանված նպատակների որոշակի փաթեթի համար կատարել կանխատեսումներ, առաջարկություններ կամ որոշումներ, որոնք ազդում են իրական կամ վիրտուալ միջավայրերի վրա և նախատեսված են տարբեր մակարդակների ինքնավարությամբ գործելու համար⁷⁵:

Երեխայի լավագույն շահը

Նկարագրում է բոլոր այն տարրերը, որոնք անհրաժեշտ են կոնկրետ իրավիճակում երեխայի կամ երեխաների համար որոշում կայացնելու համար⁷⁶:

Երեխա

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ երեխա է համարվում մինչև 18 տարեկան յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ ազգային օրենսդրությամբ այլ բան է նախատեսված⁷⁷:

Երեխաների սեռական շահագործում և բռնություն (ԵՍՇԲ)

Նկարագրում է սեռական շահագործման և սեռական բռնության բոլոր ձևերը (CRC, 1989, հոդված 34), օրինակ.

- ա) երեխային դրդելը կամ հարկադրելը՝ ներքաշվել որևէ անօրինական սեռական գործունեության մեջ,
- բ) երեխաների շահագործումը մարմնավաճառության կամ այլ ապօրինի սեռական գործողությունների մեջ,
- գ) երեխաների շահագործական օգտագործումը պոռնոգրաֆիկ ներկայացումներում և նյութերում», ինչպես նաև «սեռական շփումը, որը սովորաբար ենթադրում է առանց համաձայնության անձի բռնություն»: Երեխաների նկատմամբ սեռական շահագործումը և բռնությունը գնալով ավելի հաճախ են տեղի ունենում համացանցի միջոցով կամ առցանց միջավայրի հետ որոշակի կապով⁷⁸:

75 ՏՀԶԿ, «Արհեստական բանականության վերաբերյալ խորհրդի հանձնարարական» (ՏՀԶԿ, 2019 թ.), <https://webcache.googleusercontent.com/search?q=cache:hTtMv9k1ak8J:https://legalinstruments.oecd.org/api/print%3Fids%3D648%26lang%3Den+%&cd=3&hl=en&ct=clnk&gl=ch&client=safari>

76 ՄԻԳՀԳ, «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա», մուտքագրվել է 2020 թվականի հունվարի 16-ին, <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/crc.aspx>

77 ՄԻԳՀԳ; ՅՈՒՆԻՍԵՖ և ՀՄՄ, Ուղեցույցներ արդյունաբերության համար երեխաների առցանց պաշտպանության վերաբերյալ:

78 «Լյուքսեմբուրգյան տերմինաբանական ուղեցույցներ երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու համար»:

Երեխայի սեռական շահագործման և բռնության նյութ (ԵՍՇԲՆ)

ՏՀՏ-ների արագ զարգացումը ստեղծել է առցանց երեխաների սեռական շահագործման և բռնության նոր ձևեր, որոնք կարող են տեղի ունենալ վիրտուալ կերպով և պարտադիր չէ, որ ներառի երեխայի հետ ֆիզիկական դեմ առ դեմ հանդիպում⁷⁹: Թեև շատ իրավասություններ դեռևս մանկական սեռական բռնության վերաբերյալ լուսանկարներ ու տեսանյութեր պիտակավորում են «մանկական պոռնոգրաֆիա» կամ «երեխաների անպարկեշտ նկարներ», սակայն այս ուղեցույցները կդիտարկեն այդ ամենը հավաքականորեն՝ որպես երեխաների սեռական բռնության նյութ (այսուհետ՝ ԵՍՇԲՆ)):

Սա համահուն չէ Լայնաշերտ կապի հանձնաժողովի ուղեցույցներին և Մենք ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ (WeProtect) գլոբալ դաշինքի ազգային արձագանքման մոդելին⁸⁰: Այս տերմինն ավելի ճշգրիտ է նկարագրում բովանդակությունը: Պոռնոգրաֆիան վերաբերում է օրինական, առևտրային արդյունաբերությանը, և ինչպես Լյուքսեմբուրգի ուղեցույցներում է նշվում տերմինի օգտագործումը. «կարող է (կամա թե ակամա) նպաստել երեխաների իրականում սեռական բռնության և/կամ սեռական շահագործման նվազեցմանը, պարզեցմանը կամ նույնիսկ օրինականացմանը, [...] «Մանկական պոռնոգրաֆիա» տերմինը կարող է ենթադրել, որ գործողությունները կատարվում են երեխայի համաձայնությամբ և ներկայացնում են օրինական սեռական նյութ»⁸¹:

ԵՍԲՆ տերմինը վերաբերում է նյութին, որը ներկայացնում է գործողություններ, որոնք սեռական բռնության և/կամ շահագործման են ենթարկում երեխային:

Սա ներառում է, բայց չի սահմանափակվում միայն.

- Մեծահասակների կողմից երեխաների նկատմամբ սեռական բռնության մասին ֆիքստոլ նյութ,
- Սեռական բացահայտ վարքագծի մեջ ընդգրկված երեխաների նկարներ,
- Երեխաների սեռական օրգաններ, երբ նկարները ստեղծվում կամ օգտագործվում են հիմնականում սեռական նպատակներով:

⁷⁹ «Լյուքսեմբուրգյան տերմինաբանական ուղեցույցներ երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու համար»; ՅՈՒՆԻՍԵՖ, «Գլոբալ երեխաների առցանց համեմատական զեկույց (2019 թ.)»:

⁸⁰ Մենք ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ գլոբալ դաշինք, «Երեխաների սեռական շահագործման և չարաշահման կանխարգելում և հարթահարում(CSEA). Ազգային արձագանքման մոդել», 2016թ. <https://static1.squarespace.com/static/5630f48de4b00a75476ecf0a/t/582ba50bc534a51764e8a4ec/1479255310190/WePROTECT+Global+Alliance+Model+National+Response+Guidance.pdf>; Լայնաշերտ կապի հանձնաժողով, «Երեխաների առցանց անվտանգություն. Նվազագույնի հասցնելով բռնության, չարաշահման և շահագործման առցանց ռիսկը (2019):

⁸¹ «Լյուքսեմբուրգյան տերմինաբանական ուղեցույցներ երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու համար»:

Երեխաները և երիտասարդները

Նկարագրում է 18 տարեկանից փոքր բոլոր երեխաներին, որոնք ուղեցույցներում նշվում են նաև որպես կրտսեր երեխաներ՝ ընդգրկելով 15 տարեկանից ցածր բոլոր անձանց, իսկ երիտասարդները՝ 15-18 տարեկան տարիքային խումբը:

Կապակցված խաղալիքներ

Կապակցված խաղալիքները միանում են համացանցին՝ օգտագործելով WiFi և Bluetooth տեխնոլոգիաներ, և սովորաբար գործում են ուղեկից հավելվածների հետ՝ երեխաների համար ինտերակտիվ խաղ խաղալու հնարավորություն տալու համար: Համաձայն Ջունիպերի հետազոտության՝ 2015 թվականին կապակցված խաղալիքների շուկան հասել է 2,8 միլիարդ ԱՄՆ դոլարի և կանխատեսվում է, որ մինչև 2020 թվականը կավելանա մինչև 11 միլիարդ ԱՄՆ դոլար: Այս խաղալիքները հավաքում և պահում են երեխաների անձնական տվյալները՝ ներառյալ անունները, աշխարհագրական դիրքը, հասցեները, լուսանկարները, աուդիո և վիդեո ձայնագրությունները:⁸²

Կիբերբուլինգ, որը նաև կոչվում է առցանց ահաբեկում

Միջազգային իրավունքը չի սահմանում կիբերբուլինգը: Այս փաստաթղթում կիբերբուլինգը նկարագրվում է որպես դիտավորյալ ագրեսիվ գործողություն, որը բազմիցս իրականացվել է խմբի կամ անհատի կողմից՝ օգտագործելով թվային տեխնոլոգիաներ և ուղղված է զոհին, որը չի կարող հեշտությամբ պաշտպանվել⁸³: Այն սովորաբար ներառում է «թվային տեխնոլոգիաների և համացանցի օգտագործումն ինչ-որ մեկի մասին վիրավորական տեղեկատվություն հրապարակելու համար, դիտավորյալ անձնական տեղեկություններ, լուսանկարներ կամ տեսանյութեր վիրավորական ձևով տարածելը, սպառնալից կամ վիրավորական հաղորդագրություններ ուղարկելը (էլեկտրոնային փոստի, ակնթարթային հաղորդագրությունների, տեքստերի միջոցով), զոհի մասին բամբասանքներ և կեղծ լուրեր տարածելը կամ նրանց առցանց հաղորդակցությունից դիտավորյալ հեռացնելը»⁸⁴: Այն կարող է ներառել ուղիղ (օրինակ՝ զրույցի կամ տեքստային հաղորդագրությունների փոխանակում), կիսահրապարակային (ինչպես օրինակ՝

82 Ջերեմի Գրինբերգ, «Վտանգավոր խաղեր. Կապակցված խաղալիքներ, Երեխաների առցանց գաղտնիության պաշտպանության ակտ (COPPA) և վատ անվտանգություն», Ջորջթաունի իրավունքի տեխնոլոգիայի տեսություն, 4 դեկտեմբերի, 2017թ., <https://georgetownlawtechreview.org/dangerous-games-connected-toys-coppa-and-bad-security/GLTR-12-2017/>

83 Աննա Կոստանցա Բալդրի, Աննա Սորենտինո և Դեյվիդ Պ. Ֆարինգթոն, «Կիբերհարձակումը և կիբեր վիկտիմիզացիան ի հակադրություն ծնողների վերահսկողության, դեռահասների առցանց գործունեության մոնիթորինգի և վերահսկման», Երեխաների և երիտասարդության ծառայությունների տեսություն 96 (հունվար 2019թ.). 302-7, <https://doi.org/10.1016/j.childyouth.2018.11.058>.

84 ՅՈՒՆԻՍԵՖ, «Գլոբալ երեխաների առցանց համեմատական զեկույց (2019թ.)»; «Լյուքսեմբուրգյան տերմինաբանական ուղեցույցներ երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու համար»:

անհանգստացնող հաղորդագրություն ուղարկելն էլեկտրոնային փոստի միջոցով) կամ հանրային հաղորդակցություն (օրինակ՝ տուժողին նվիրված ծաղրական կայք ստեղծելը):

Կիրբերատելություն, խտրականություն և բռնի ծայրահեղականություն

«Կիրբերատելությունը, խտրականությունը և բռնի ծայրահեղականությունը կիրբերբռնության հստակ ձևեր են, քանի որ ուղղված են կոլեկտիվ ինքնությանը, և ոչ անհատներին: Դրանք հաճախ վերաբերում են ռասային, սեռական կողմնորոշմանը, կրոնին, ազգությանը կամ ներգաղթի կարգավիճակին, սեռին/գենդերին և քաղաքական հայացքներին»⁸⁵:

Թվային քաղաքացիություն

Թվային քաղաքացիությունը վերաբերում է թվային միջավայրում դրական, քննադատաբար և գրագետ ներգրավվելու կարողությանը՝ հենվելով արդյունավետ հաղորդակցման, ստեղծագործելու հմտությունների վրա և կիրառելով սոցիալական մասնակցության ձևեր, որոնք հարգում են մարդու իրավունքներն ու արժանապատվությունը՝ տեխնոլոգիաների պատասխանատու օգտագործման միջոցով⁸⁶:

Թվային գրագիտություն

Թվային գրագիտություն նշանակում է ունենալ այնպիսի հմտություններ, որոնք անհրաժեշտ են ապրելու, սովորելու և աշխատելու համար մի հասարակությունում, որտեղ հաղորդակցությունն ու տեղեկատվության հասանելիությունն ավելի ու ավելի են դառնում թվային տեխնոլոգիաների միջոցով, ինչպիսիք են՝ ինտերնետ հարթակները, սոցիալական մեդիան և շարժական սարքերը:⁸⁷ Այն ներառում է հստակ հաղորդակցություն, տեխնիկական հմտություններ և քննադատական մտածողություն:

Թվային ճկունություն

Այս տերմինը նկարագրում է երեխայի կարողությունը՝ էմոցիոնալ կերպով դիմակայելու առցանց հանդիպած վնասներին: Թվային ճկունությունը ներառում է զգացմունքային ռեսուրսների առկայությունը, որոնք անհրաժեշտ են հասկանալու համար, թե երբ է վտանգ սպառնում, իմանալ, թե ինչպես գտնել օգնություն, սովորել փորձից և վերականգնվել, երբ ամեն ինչ սխալ է ընթանում:⁸⁸

85 ՅՈՒՆԻՍԵՖ, «Գլոբալ երեխաների առցանց համեմատական զեկույց (2019 թ.)»:

86 Եվրոպայի խորհուրդ, «Թվային քաղաքացիություն և Թվային քաղաքացիության կրթություն», Թվային քաղաքացիության կրթություն, հասանելի է հունվարի 16, 2020, <https://www.coe.int/en/web/digital-citizenship-education/home>:

87 Արևմտյան Սիդնեյի համալսարան-Քլեր Ուրբախ, «Ինչ է թվային գրագիտությունը», հասանելի է 2020 թվականի հունվարի 16-ին, https://www.westernsydney.edu.au/studysmart/home/digital_literacy/what_is_digital_literacy

88 Դոկտր Էնդրյու Կ. Պրոֆիթսկին և այլք, «Համարժեք պատասխանատվություն. երեխաների առցանց ճկունության զեկույցի ձևավորում» (Ծնողական գոյի, Օքսֆորդի համալսարան և Վիրջին Մեդիա, 2014 թ.)

Մանկավարժներ

Մանկավարժն այն մարդն է, ով համակարգված աշխատում է տվյալ առարկայի վերաբերյալ մեկ այլ անձի ըմբռնումը բարելավելու ուղղությամբ: Մանկավարժների դերն ընդգրկում է և՛ նրանց, ովքեր դասավանդում են դասարաններում, և՛ ավելի ոչ ֆորմալ մանկավարժներին, ովքեր օգտագործում են սոցիալական հարթակներն ու ծառայություններն՝ առցանց անվտանգության մասին տեղեկատվություն տրամադրելու համար կամ վարում համայնքային, դպրոցական դասընթացներ՝ երեխաներին և երիտասարդներին առցանց անվտանգ մնալու հնարավորություն տալու համար:

Մանկավարժների աշխատանքը տարբերվելու է՝ կախված այն համատեքստից, որում նրանք աշխատում են կամ երեխաների ու երիտասարդների (մեծահասակների) տարիքային խմբից, ում նրանք ձգտում են կրթել:

Գրումինգ/Առցանց գրումինգ

Գրումինգը/առցանց գրումինգը ինչպես սահմանված է Լյուքսեմբուրգի ուղեցույցներում վերաբերում է երեխայի հետ անձամբ, համացանցի կամ այլ թվային տեխնոլոգիաների կիրառմամբ հարաբերություններ հաստատելու/կառուցելու գործընթացին՝ համոզելու համար երեխային ունենալ սեռական հարաբերություն⁸⁹:

Դա մի գործընթաց է, որը նախատեսված է երեխաներին սեռական վարքագծի կամ խոսակցությունների մեջ գայթակղել իրենց իմացությամբ կամ առանց դրա, ինչպես նաև ներառում է հանցագործի և երեխայի միջև շփում և սոցիալականացում՝ նրան սեռական բռնության նկատմամբ ավելի խոցելի դարձնելու նպատակով: Գրումինգ տերմինը չի սահմանվել միջազգային իրավունքում, իսկ որոշ իրավասություններ, ներառյալ Կանադան, օգտագործում են «գայթակղել» տերմինը:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ (S<S)

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները նկարագրում են բոլոր տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք շեշտում են հաղորդակցության ասպեկտը: Սա ներառում է համացանցին միացող բոլոր ծառայություններն ու սարքերն, ինչպիսիք են՝ համակարգիչները, նոթբուքերը, պլանշետները, սմարթֆոնները, խաղային վահանակները, հեռուստացույցները և ժամացույցները:⁹⁰ Այն նաև ներառում է նաև ռադիոն, լայնաշերտ, ցանցային սարքավորումներ և արբանյակային համակարգեր:

⁸⁹ «Լյուքսեմբուրգյան տերմինաբանական ուղեցույցներ երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու համար»:

⁹⁰ ՅՈՒՆԻՍԵՖ և ՀՄՄ, Ուղեցույցներ արդյունաբերության համար երեխաների առցանց պաշտպանության վերաբերյալ:

Համացանց և հարակից տեխնոլոգիաներ

Այժմ հնարավոր է միանալ համացանցին՝ օգտագործելով տարբեր սարքեր, օրինակ՝ սմարթֆոններ, պլանշետներ, խաղային վահանակներ, հեռուստացույցներ և դյուրակիր համակարգիչներ, ինչպես նաև ավելի ավանդական համակարգիչներ: Համացանցի հարուստ և բարդ պատկերը ներկայացնելու համար «Համացանց և հարակից տեխնոլոգիաներ», «SՀS և առցանց արդյունաբերություններ» և «Ինտերնետային ծառայություններ» տերմիններն օգտագործվում են փոխադարձաբար:

Ծանուցում և հեռացում

Օպերատորները և ծառայություններ մատուցողներն երբեմն առցանց ծանուցվում են կասկածելի բովանդակության մասին հաճախորդների, հասարակության անդամների, իրավապահ մարմինների կամ թեժ գծի կազմակերպությունների կողմից: Ծանուցման և հեռացման ընթացակարգերը վերաբերում են անօրինական բովանդակության արագ հեռացման («հեռացման») գործընթացներին (անօրինական բովանդակությունը սահմանվում է ըստ իրավասության), հենց որ նրանք տեղեկացված լինեն («ծանուցում») իրենց ծառայություններում դրա առկայության մասին:

Առցանց խաղեր

«Առցանց խաղը» սահմանվում է որպես ցանկացած տեսակի մեկ կամ բազմախաղացող կոմերցիոն, թվային խաղ, որը խաղում են ինտերնետին միացված որևէ սարքի միջոցով, ներառյալ՝ հատուկ կոնսուլներ, աշխատասեղանի համակարգիչներ, դյուրակիր համակարգիչներ, պլանշետներ և բջջային հեռախոսներ: «Առցանց խաղերի էկոհամակարգը» սահմանվում է այնպես, որ ներառում է ուրիշների տեսախաղեր խաղալու պրոցեսի դիտումն էլեկտրոնային սպորտի կամ տեսանյութերի փոխանակման հարթակների միջոցով, որոնք սովորաբար հնարավորություն են տալիս դիտողներին մեկնաբանել կամ շփվել խաղացողների և դիտող այլ անդամների հետ⁹¹:

Ծնողական վերահսկողության գործիքներ

Ծրագրային ապահովում, որը թույլ է տալիս օգտվողներին, ծնողներին կառավարել համակարգչի կամ այլ սարքի որոշ կամ բոլոր գործառույթները, որոնք կարող են միանալ համացանցին: Սովորաբար, նման ծրագրերը կարող են սահմանափակել մուտքը դեպի որոշակի տեսակի, դասի կայքեր կամ առցանց ծառայություններ: Ոմանք տրամադրում են նաև ժամանակի կառավարման հնարավորություն, այսինքն՝ սարքը կարող է կարգավորվել այնպես, որ համացանցը հասանելի լինի միայն որոշակի ժամերի:

⁹¹ ՅՈՒՆԻՍԵՖ, «Երեխայի իրավունքները և առցանց խաղերը. Հնարավորություններ և մարտահրավերներ երեխաների և արդյունաբերության համար», ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹՂԹԵՐԻ ՇԱՐՔ. Երեխաների իրավունքները և բիզնեսը թվային աշխարհում, 2019, https://www.unicef-irc.org/files/upload/documents/UNICEF_CRBDigitalWorldSeriesOnline_Gaming.pdf.

Ավելի առաջադեմ տարբերակները կարող են ձայնագրել սարքից ուղարկված կամ ստացված բոլոր տեքստերը: Ծրագրերը սովորաբար պաշտպանված են լինում գաղտնաբառով⁹²:

Ծնողներ, խնամակալներ

Ինտերնետային մի քանի կայքեր ծնողներին վերաբերում են ընդհանուր ձևով (ինչպես օրինակ՝ «ծնողների էջում» նկատի ունենալով «ծնողական վերահսկողությունը»): Հետևաբար, ծնողական վերահսկողությունը պիտի սահմանվի այնպես, որ երեխաներին հնարավորություն տրվի առավելագույնս օգտագործելու առցանց հասանելի հնարավորությունները, երեխաներն ու երիտասարդներն անվտանգ և պատասխանատու կերպով օգտագործեն ինտերնետային կայքերը և նրանց տրվի հատուկ ինտերնետային կայքեր մուտք գործելու հնարավորություն: Այս փաստաթղթում «ծնողներ» տերմինը վերաբերում է ցանկացածին (բացառությամբ մանկավարժների), ով իրավական պատասխանատվություն ունի երեխայի համար: Ծնողական պատասխանատվությունը տարբեր կլինի ըստ երկրների, ինչպեսին է անօրինական ծնողների իրավունքները:

Անձնական տվյալներ

Տերմինը նկարագրում է անձի մասին անհատական նույնականացնող տեղեկատվություն, որը հավաքագրվում է առցանց: Սա ներառում է անձի լրիվ անունը, կոնտակտային տվյալները, ինչպիսիք են՝ տան և էլ. հասցեները, հեռախոսահամարները, մատնահետքերը կամ դեմքի ճանաչումը, ապահովագրական համարները կամ որևէ այլ գործոն, որը թույլ է տալիս մարդու հետ ֆիզիկական, առցանց շփումը կամ տեղայնացումը: Այս համատեքստում այն նաև վերաբերում է երեխայի և նրա շրջապատի մասին ցանկացած տեղեկատվության, որը հավաքագրվում է ծառայություններ մատուցողների կողմից առցանց, ներառյալ կապակցված խաղալիքները, իրերի ինտերնետը և ցանկացած այլ համացանցին միացված տեխնոլոգիա:

Գաղտնիություն

Գաղտնիությունը հաճախ չափվում է անձնական տեղեկատվությամբ առցանց կիսվելու, սոցիալական մեդիայի հանրային պրոֆիլ ունենալու, տեղեկատվության փոխանակմամբ այն մարդկանց հետ, ում հետ նրանք ծանոթացել են առցանց, գաղտնիության կարգավորումների օգտագործումը, ընկերների հետ գաղտնաբառերը կիսելու, գաղտնիության մասին մտահոգվելու տեսանկյունից⁹³:

92 ՅՈՒՆԻՍԵՖ և ՀՄՄ, *Ուղեցույցներ արդյունաբերության համար երեխաների առցանց պաշտպանության վերաբերյալ*:

93 «Երեխաների առցանց գաղտնիության պաշտպանության ակտ», հրատարակություն: L. No.15 U.S.C.6501-6505 (1998), <https://uscode.house.gov/view.xhtml?req=granuleid%3AUSC-prelim-title15-section6501&edition=prelim>

Սեքստինգ

Սեքստինգը սովորաբար սահմանվում է որպես բջջային հեռախոսների և/կամ համացանցի միջոցով ինքնաստեղծվող սեռական բովանդակության, այդ թվում՝ նկարների, հաղորդագրությունների կամ տեսանյութերի ուղարկում, ստացում կամ փոխանակում⁹⁴:

Երեխաների սեքսուալ լուսանկարների ստեղծումը, տարածումը և պահպանումն անօրինական է շատ երկրներում: Եթե բացահայտվում են երեխաների սեռական նկարները, ապա մեծահասակները չպետք է դիտեն դրանք: Մեծահասակի կողմից երեխայի հետ սեռական լուսանկարների փոխանակումը հանցավոր արարք է, որը երեխաներին կարող է վնասել և հնարավոր է, որ անհրաժեշտ լինի զեկուցել և հեռացնել նկարները:

Սեռավարություն (sextortion) կամ երեխաների սեռական հարկադրանք (Sexual extortion of children)

Սեռավարությունը կամ երեխաների սեռական շորթումն («առցանց սեռական հարկադրանք և շորթում»⁹⁵) անձի հանդեպ շանտաժն է, որը նպատակ է հետապնդում այդ անձի սեփական ձեռքերով ստեղծված նկարների օգնությամբ կորզել նրանից սեռական բարեհաճություններ, փող կամ այլ օգուտներ՝ տվյալ անձի համաձայնությունից դուրս նյութը տարածելու սպառնալիքի ներքո (օրինակ՝ լուսանկարները տեղադրել սոցիալական ցանցերում)⁹⁶:

Իրերի ինտերնետ (ԻԻ)

Իրերի ինտերնետը ներկայացնում է հաջորդ քայլը դեպի հասարակության և տնտեսության թվայնացում, որտեղ առարկաներն ու մարդիկ փոխկապակցված են կապի ցանցերի միջոցով և հաղորդում են իրենց կարգավիճակի և/կամ շրջակա միջավայրի մասին⁹⁷:

ՄՈՌ (URL)

Հապավումը նշանակում է «միատեսակ ռեսուրսների որոնիչ»՝ ինտերնետային էջի հասցե⁹⁸:

94 «Լյուքսեմբուրգյան տրեմինաբանական ուղեցույցներ երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու համար»:

95 Եվրոպոլ, «Օնլայն սեռական հարկադրանքը և շորթումը որպես հանցագործության ձև, որն ազդում է երեխաների վրա. Օրենքի կիրարկման տեսակետը» (Կիբերհանցագործությունների դեմ պայքարի եվրոպական կենտրոն, մայիս 2017թ.), https://www.europol.europa.eu/sites/default/files/documents/online_cibercrime_formation_and_ext_.pdf

96 «Լյուքսեմբուրգյան տրեմինաբանական ուղեցույցներ երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու համար»:

97 Նյուսթրալ, Իրերի ինտերնետ, 1 հոկտեմբերի 2013թ., Թվային միասնական շուկա – Եվրոպական հանձնաժողով, <https://ec.europa.eu/digital-single-market/en/internet-of-things>:

98 ՅՈՒՆԵՍԿՈ և ՀՄՄ, Ուղեցույցներ արդյունաբերության համար երեխաների առցանց պաշտպանության վերաբերյալ:

Վիրտուալ իրականություն

Վիրտուալ իրականությունը համակարգչային տեխնոլոգիաների օգտագործումն է՝ ինտերակտիվ եռաչափ աշխարհի էֆեկտ ստեղծելու համար, որտեղ առարկաները տարածական ներկայության զգացում ունեն⁹⁹:

Վայֆայ (WiFi)

WiFi-ը (Անլար ճշտություն) տեխնիկական ստանդարտների խումբ է, որը հնարավորություն է տալիս տվյալների փոխանցումն անլար ցանցերի միջոցով:¹⁰⁰

99 ՆԱՍԱ «Վիրտուալ իրականություն», [nas.nasa.gov](https://www.nas.nasa.gov), մուտքագրվել է 2020 թվականի հունվարի 16, <https://www.nas.nasa.gov/Software/VWT/vr.html>:

100 Երեխաների առցանց գաղտնիության պաշտպանության ակտ

Հավելված 2. Երեխաների և երիտասարդների նկատմամբ շփման իրավախախտումներ

Երեխաները և երիտասարդները կարող են ենթարկվել համացանցում մի շարք անցանկալի կամ անպատշաճ շփումների, որոնք կարող են սարսափելի հետևանքներ ունենալ նրանց համար: Այս շփումների մի մասը կարող է ունենալ սեռական բնույթ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ երեխաների 22 տոկոսն ենթարկվել է բռնության¹⁰¹, ոտնձգությունների կամ առցանց հետապնդման: 24 տոկոսը ստացել է անցանկալի սեռական մեկնաբանություններ¹⁰²: 8 տոկոսն իրական կյանքում հանդիպել է մարդկանց, ում նախկինում ճանաչում էր միայն առցանց¹⁰³: Թեև այս տոկոսները տարբերվում են ըստ երկրների և տարածաշրջանների, սակայն այս թվերը ցույց են տալիս, որ դիսկերն իրական են¹⁰⁴: Ամերիկայի Միացյալ Նահանգներում¹⁰⁵ իրականացված համացանցային հետազոտություններից մեկը ցույց է տվել, որ առցանց դեռահասների 32 տոկոսի հետ կապվել է բոլորովին անձանոթ մարդ: Մասնակցիներից 23 տոկոսն ասել է, որ շփման ընթացքում անհարմար են զգացել և վախ, իսկ 4 տոկոսը ստացել է ագրեսիվ սեռական հարկադրանք:

Սեռական «գիշատիչները» օգտագործում են համացանցը՝ երեխաների և երիտասարդների հետ սեռական նպատակներով կապ հաստատելու համար և հաճախ օգտագործում այնպիսի տեխնիկա, որը հայտնի է սիրահետում (գրումինգ)անվամբ: Հանցագործները ձեռք են բերում երեխայի վստահությունը՝ ուսումնասիրելով նրա հետաքրքրությունները: Հաճախ շփման ընթացքում բարձրացնում են սեռական թեմաներ, կիսվում լուսանկարներով, սեռական իրազեկությունը բարձրացնելու և իրենց երիտասարդ զոհերի կամքը թուլացնելու համար: Նվերները, փողը և նույնիսկ տրանսպորտի տոմսերն են օգտագործվում՝ երեխային կամ երիտասարդին համոզելու և գայթակղելու համար, որպեսզի նրանք գնան մի վայր, որտեղ «գիշատիչը» կարող է սեռական շահագործման ենթարկել:

101 U-report (2019), <http://www.ureport.in/v2/>

102 Նախագիծ deSHAME (2017), https://www.childnet.com/ufiles/Project_deSHAME_Dec_2017_Report.pdf

103 Լենհարդ, Ա., Անդերսոն, Մ., Սմիթը, Ա (2015), Դեռահասներ, տեխնոլոգիա և ռոմանտիկ հարաբերություններ, <https://www.pewresearch.org/internet/2015/10/01/teens-technology-and-romantic-relationships/>

104 Լիվինգստոն Ա., Հադդոն Լ., Գորգիզ, Ա., և Օլաֆսսոն,Կ. (2011): Ռիսկերը և անվտանգությունը համացանցում. Եվրոպացի երեխաների հեռանկարը. Ամբողջական բացահայտումներ, Լոնդոն. EU Kids Online, <http://eprints.lse.ac.uk/33731/>:

105 Ամանդա Լենհարթ և այլք, «Սոցիալական մեդիայի օգտագործումն ավելի մեծ տեղ է գրավում դեռահասների կյանքում, քանի որ նրանք ընդունում են ինտերակտիվ առցանց լրավավամիջոցների խոսակցական բնույթը», PewInternet և Ամերիկյան կյանքի նախագիծ,2007, 44,https://www.pewinternet.org/wp-content/uploads/sites/9/media/Files/Reports/2007/PIP_Teens_Social_Media_Final.pdf.

Այս հանդիպումները կարող են նույնիսկ լուսանկարվել կամ տեսագրվել: Երեխաները և երիտասարդները հաճախ զուրկ են հուզական հասունությունից և ինքնագնահատականից, ինչը նրանց դարձնում է մանկավարժի և ահաբեկման զոհ: Նրանք նաև տատանվում են մեծահասակներին պատմել իրենց հանդիպումների մասին՝ վախենալով խայտառակվելուց կամ համացանցից օգտվելու հնարավորությունից զրկվելուց: Որոշ դեպքերում նրանց սպառնում են «գիշատիչները» և ասում, որ հարաբերությունները գաղտնի պահեն: Սեռական հանցագործները միմյանցից սովորում են նաև համացանցային ֆորումների և զրուցարանների միջոցով:

Հավելված 3. Մենք ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ (WeProtect) գլոբալ դաշինք

Մենք ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ ազգային արձագանքման մոդելը

Մենք ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ գլոբալ դաշինքի (ՄՊԳԴ) ռազմավարությունն աջակցում է երկրներին մշակել համակարգված բազմաշահառու արձագանքներ՝ երեխաների առցանց սեռական շահագործման դեմ պայքարելու համար՝ առաջնորդվելով իր ազգային արձագանքման մոդելով (ԱԱՄ): ՄՊԳԴ-ի ազգային արձագանքման մոդելը գործում է որպես ազգային գործողությունների նախագիծ: Այն երկրներին տրամադրում է շրջանակ, որը պետք է կիրառվի առցանց երեխաների սեռական շահագործման (ԱԵՍՇ) դեմ պայքարելու համար:

Մոդելը նպատակ ունի օգնել երկրին՝

- Գնահատել նրա ներկայիս արձագանքն ԱԵՍՇ-ին և բացահայտել բացերը,
- Առաջնահերթություն տալ ազգային ջանքերին՝ բացթողումների վերացման ուղղությամբ,
- Բարձրացնել միջազգային փոխըմբռնումն ու համագործակցությունը:

Մոդելը չի ձգտում սահմանել գործողություններ կամ մեկ մոտեցում: Դրա նպատակն է նկարագրել երեխաների արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ կարողություններն և աջակցել երկրներին զարգացնելու կամ ընդլայնելու իրենց առկա կարողությունները: Այն նաև թվարկում է մի շարք հնարավորություններ, որոնք, եթե արդյունավետ լինեն, ապա կարագացնեն և կբարելավեն արդյունքները: ԱԱՄ-ը ներառում է քսանմեկ կարողություն՝ բաժանված վեց բաժինների՝ քաղաքականություն և կառավարում, քրեական արդարադատություն, զոհ, հասարակություն, արդյունաբերություն, լրատվամիջոցներ և հաղորդակցություն:

ՄՊԳԴ-ը կարծում է, որ բոլոր վեց ոլորտներում գործողությունները կտրամադրեն ամբողջական ազգային պատասխան այս հանցագործությանը:

Մոդելը հնարավորություն կտա երկրին, անկախ իր ելակետից, բացահայտել կարողությունների բացերը և սկսել այդ բացերը լրացնելու պլանավորումը: Թեև երկրները կմշակեն իրենց անհատական մոտեցումները՝ դա անելով ընդհանուր համաձայնեցված շրջանակի և կարողությունների ըմբռնման համատեքստում, սակայն հույս կա, որ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում շահագրգիռ կողմերի միջև հաղորդակցությունն ու համագործակցությունը կարող է ավելի ընդլայնվել:

Մենք ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ գլոբալ ռազմավարական պատասխան

Մենք ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ գլոբալ ռազմավարական պատասխանը (ԳՌՊ) համակարգված մոտեցում է երեխաների առցանց սեռական

շահագործման դեմ պայքարի համար՝ ներառելու ավելի մեծ գլոբալ պատկերացում, ազգային մոտեցումների միջազգային ներդաշնակեցում և գլոբալ լուծումներ, որոնք վեր են ազգային արձագանքից: ԳՌՊ-ն, ըստ էության, հանդիսանում է Ազգային արձագանքման մոդելի (ԱԱՄ) ուղեկիցը: Մինչ ԱԱՄ-ը կենտրոնացած է ազգային մակարդակով ԱԵՄԸ-ին դիմակայելու համար անհրաժեշտ կարողությունների վրա, ապա ԳՌՊ-ն կենտրոնացած է միջազգային համագործակցության և կարողությունների զարգացման առաջնահերթ ոլորտների վրա: ԳՌՊ-ն ներառում է վեց թեմատիկ ոլորտներ՝ յուրաքանչյուրի համար պահանջվող համապատասխան կարողություններով և ակնկալվող արդյունքներով, ինչպես նաև գործընկերներ, որոնք պետք է միասին աշխատեն սահմաններից դուրս այն իրականացնելու համար:

Քաղաքականություն և օրենսդրություն

Քաղաքական կամքի ձևավորման և քրեական հանցագործությունների նկատմամբ մոտեցումներն արդյունավետորեն ներդաշնակեցնելը և օրենսդրության զարգացումը կհանգեցնի ազգային և միջազգային բարձր մակարդակի պարտավորությունների նորացմանը, ինչն ուղղված է առցանց երեխաների սեռական շահագործման դեմ պայքարին:

Քրեական արդարադատություն

Տեղեկատվության փոխանակումն, այդ թվում՝ տվյալների փոխանակման պաշտոնական շրջանակներով միջազգային տվյալների բազաների ընդհանուր հասանելիությունն երեխաների առցանց սեռական շահագործման ոլորտում փորձ ունեցող, նվիրված, պատրաստված սպաների և դատախազների հետ համատեղ լավագույն միջոցն է՝ բացահայտելու, հետապնդելու և ձերբակալելու հանցագործներին, ներառյալ հաջող, համատեղ հետաքննությունների և դատապարտումների միջոցով:

Տուժածների աջակցությունը և ծառայությունները

Արդյունավետ և ժամանակին աջակցությունը տուժածներին, ներառյալ նրանց ինքնության պաշտպանությունը և խնդիրները բարձրաձայնելու հնարավորության ապահովումը, որն օգնում է տուժածներին օգտվել իրենց անհրաժեշտ աջակցությունից, երբ դրա կարիքն ունեն:

Հետազոտություն և պատկերացում

Վերջապես, սպառնալիքների գնահատումները (օրինակ՝ 2019 թվականի համաշխարհային սպառնալիքների գնահատումը), հանցագործների հետազոտությունը, և տուժածների երկարաժամկետ տրավման հասկանալու ուղղությամբ տարված աշխատանքը՝ կառավարությանը, իրավապահ մարմիններին, քաղաքացիական հասարակությանը, ակադեմիային և ոլորտին հստակ պատկերացում կտան վերջին սպառնալիքների մասին:

Հավելված 4. Առցանց վնասների պատասխանների օրինակներ

Այստեղ ներառված օրինակները կազմվել են ՀՄՄ քաղաքականություն մշակողների ուղեցույցների հեղինակների և ներդրողների կողմից:

Երեխաներին կրթել առցանց վնասների դեմ

Բի-բի-սի-ի Own IT App-ը հավելված է, որը նախատեսված է առաջին անգամ խելացի հեռախոսներից (Smartphone) օգտվել սկսող 8-13 տարեկան երեխաների համար: Համատեղելով մեքենայական ուսուցման գերժամանակակից տեխնոլոգիան՝ այն հետևում է երեխաների գործունեությանը իրենց հեռախոսներում, իրենց հուզական վիճակի մասին ինքնազեկուցելու հնարավորությամբ և օգտագործում այս տեղեկատվությունը՝ հարմարեցված բովանդակություն և միջամտություններ տրամադրելու համար, որպեսզի օգնի երեխաներին երջանիկ և առողջ մնալ առցանց:

Բի-բի-սի-ի կողմից հատուկ պատվիրված բովանդակության օգնությամբ՝ հավելվածը տրամադրում է օգտակար նյութեր և ռեսուրսներ՝ օգնելով երիտասարդներին առավելագույնս օգտագործել իրենց ժամանակն առցանց և ձևավորել առողջ առցանց վարքագիծ, սովորություններ, իսկ երիտասարդներին և ծնողներին ավելի կառուցողական գրույցներ վարել իրենց առցանց փորձառությունների մասին: Հավելվածը չի հավաքագրում օգտատիրոջ որևէ անձնական տվյալ կամ նրա կողմից ստեղծված բովանդակություն, քանի որ ամբողջ մեքենայական ուսուցումն աշխատում է հավելվածում/օգտագործողի սարքի ներսում:

Նախագծի զարգացում – Ամբողջական ռեսուրսներով ապահովված թվային իրավասությունների կրթական շրջանակ, որը բացահայտում է թվային հմտությունները յուրաքանչյուր տարիքի երեխայի համար՝ օգնելով ծնողներին և ուսուցիչներին հասկանալու կարողությունները, որոնք պետք է ունենան իրենց երեխաները, ինչպես նաև ռեսուրսներն ու գործողությունները, որոնք նրանց կտրամադրեն որոշակի հմտություններ:

360 աստիճան անվտանգ – առցանց ինքնագնահատման գործիք դպրոցների համար՝ դիտարկելու և գնահատելու իրենց առցանց անվտանգության ամբողջ դրույթը, որը տրամադրում է ուղեցույց և աջակցություն սահմանված չափորոշիչներ ձեռք բերելու համար:

DQ ինստիտուտ – 2017-2019 թվականներին 30 երկրների 145426 երեխաների և դեռահասների տվյալներ հավաքագրվել են որպես #DQEveryChild ծրագրի մաս, որը DQ ինստիտուտի կողմից իրականացվող համաշխարհային թվային քաղաքացիության շարժում էր:

Այն մեկնարկել է Սինգապուրի աջակցությամբ Սինգապուրում և արագ ընդլայնվել է Համաշխարհային տնտեսական ֆորումի հետ համագործակցությամբ՝ ներառելով ավելի քան 100 գործընկեր կազմակերպություն:

Այս շարժումը նպատակ ունի հզորացնել երեխաներին թվային քաղաքացիության համապարփակ իրավասություններով՝ թվային կյանքի սկզբից օգտագործելով առցանց կրթության և գնահատման DQ World ծրագիրը: Այս շարժման տվյալներն օգտագործվել են 2020 թվականին՝ [երեխաների առցանց անվտանգության ինդեքսը \(ԵԱԱԻ\)](#) ստեղծելու համար: ԵԱԱԻ-ի շրջանակը գնահատում և դասակարգում է երեխաների առցանց անվտանգությունն 30 երկրներում՝ հիմնվելով 24 ոլորտների վրա՝ խմբավորված վեց սյուների մեջ, որոնք ազդում են երեխաների առցանց անվտանգության վրա:

DQ Pro ընտանեկան պատրաստության փաթեթը և DQ աշխարհը հնարավորություն են տալիս ծնողներին գնահատել իրենց երեխայի թվային պատրաստվածությունը և կրթական նյութերի միջոցով բարելավել թվային կարողությունները, ինչպիսիք են՝ թվային քաղաքացիությունը, էկրանի ժամանակի կառավարումը, կիբերհարձակման կառավարումը, կիբերանվտանգության կառավարումը, թվային հետքի կառավարումը, քննադատական մտածողությունը և գաղտնիության կառավարումը:

Ավստրալիայի [էլեկտրոնային անվտանգության գործիքակազմը](#) դպրոցների համար ռեսուրսների հավաքածու է, որը նախատեսված է դպրոցներին աջակցելու՝ ստեղծել ավելի անվտանգ առցանց միջավայրեր: Գործիքակազմն արտացոլում է առցանց անվտանգության կրթության բազմակողմ մոտեցումը և ըստ ռեսուրսների դասակարգվել է չորս տարրերի, որոնք.

- Նախապատրաստել դպրոցներին գնահատելու իրենց պատրաստակամությունն առցանց անվտանգության հարցերով զբաղվելու, առաջարկներ ներկայացնելու համար և բարելավել ընթացիկ գործելակերպը,
- Ներգրավել ողջ դպրոցական համայնքին՝ անվտանգ առցանց միջավայր ստեղծելու գործում,
- կրթել՝ ընդգծելով առցանց անվտանգության կրթության լավագույն փորձը և աջակցել դպրոցներին՝ զարգացնելու դպրոցական համայնքի առցանց անվտանգության կարողությունները,
- միջադեպերին արդյունավետ արձագանքել՝ միաժամանակ աջակցելով անվտանգությանն ու բարեկեցությանը:

Լեհաստանի էլեկտրոնային հաղորդակցության գրասենյակ-UKE | [Click Sensible](#) կրթական արշավը երեխաներին և ծնողներին սովորեցնում է, թե ինչպես լինել ավելի անվտանգ առցանց, ինչպես ճանաչել և կառավարել ռիսկերը:

Վիետնամի Մանկական հիմնադրամը հիմնել է [Անվտանգ սահեցրեք](#) նախաձեռնությունը: Այս ծրագիրը երեխաներին կրթում է առցանց պոտենցիալ ռիսկերի մասին, ինչպիսիք են՝ կիբերխարդախությունները, բուլինգը կամ սեռական բռնությունը և ներկայացնում անվտանգ մնալու մեթոդների վերաբերյալ խորհուրդներ:

Լայնաշերտ կապի հանձնաժողովի զեկույց [«Տեխնոլոգիաներ, լայնաշերտ կապ և կրթություն. Կրթության զարգացում բոլոր օրակարգերի համար»](#), 2013թ.

[«Երեխաների առցանց փորձը, գլոբալ փոխըմբռնման և գործողությունների ձևավորում»](#), ՅՈՒՆԻՍԵՖ, 2019թ.

[Գլոբալ երեխաներն առցանց-ի](#) հետազոտությունը ներառում է բազմաթիվ տեղեկություններ առցանց վստասների և լավագույն փորձի պատասխանների մասին:

Ներգրավող արդյունաբերության օրինակներ

Ավստրալիայի էլեկտրոնային Անվտանգության հանձնակատարը (eSafety Commissioner) կառուցում է ամուր գործընկերություններ և աշխատում է արդյունաբերության հետ՝ բոլոր ավստրալացիներին ավելի անվտանգ, ավելի դրական առցանց փորձառություններ ապահովելու համար: Որպես նախաձեռնության մաս՝ էլեկտրոնային Անվտանգությունը (eSafety) մանրամասն խորհրդակցությունների գործընթաց անցկացրեց արդյունաբերության, առևտրային մարմինների և կազմակերպությունների հետ, որոնք պատասխանատու են օգտատերերի պաշտպանության, ինչպես նաև ծնողների, խնամակալների և երիտասարդների համար: «Անվտանգություն դիզայնի միջոցով» նախաձեռնությունը կոչված է խրախուսելու և աջակցելու ոլորտին՝ ապահովելու օգտվողների անվտանգությունն առցանց ծառայությունների և հարթակների նախագծման, մշակման և տեղակայման մեջ: Էլեկտրոնային Անվտանգությունը նաև կառավարում է հաշվետվությունների և բողոքների երեք սխեմաներ՝ կիբերհարձակման, նկարի վրա հիմնված բռնության և առցանց բովանդակության սխեման: Էլեկտրոնային Անվտանգությունը կարող է պաշտոնապես ուղղորդել առցանց ծառայություններ մատուցողներին բովանդակությունն իրենց ծառայություններից հեռացնել: Թեև սխեմաները հիմնականում գործում են որպես համագործակցության մոդել կառավարության և արդյունաբերության միջև, սակայն էլեկտրոնային Անվտանգությանը հասանելի լիազորությունները՝ նյութի հեռացումը ստիպելու համար, ապահովում է անվտանգության կարևոր ցանց և արդյունաբերությանը մղում է նախաձեռնողական լինել առցանց վստասների դեմ պայքարում:

Թեյիա ընկերությունը պատասխանատվություն է ստանձնում հասկանալու և կառավարելու կապի բացասական ազդեցությունները, ինչպես նաև լիակատար թափանցիկ և հաշվետու լինելու խորհրդի մակարդակով: Նրանք նաև հոգ են տանում երեխաների և երիտասարդների մասին, քանի որ ընդունում են, որ իրենց ծառայությունների ակտիվ օգտվողներն են:

Լեհաստանի Էլեկտրոնային հաղորդակցության գրասենյակը ներգրավում է քաղաքացիական հասարակությանը և երեխաներին իրենց շահերի պաշտպանության արշավներում, որպեսզի նրանք գիտակցեն, թե ինչ են ստորագրում առցանց:

Ինտերնետի Դիտման Հիմնադրամը (IWF) գործընկերային կազմակերպություն է, որը միավորում է արդյունաբերությունը, կառավարությունը, իրավապահ մարմինները և ՀԿ-ները՝ երեխաների սեռական բռնությունը վերացնելու համար: 2020 թվականին ԻԴՀ-ն ուներ 152 անդամ տարբեր հարթակներում, ենթակառուցվածքային ծառայություններում և առաջարկում է անդամներին մի շարք ծառայություններ՝ կանխելու հանցավոր լուսանկարների տարածումն իրենց հարթակներում:

Օրենսդրական ծածկույթ

Արտահայտել քաղաքական կամք և առաջնահերթություն տալ երեխաներ առցանց անվտանգությանը՝ ստորագրելով Երեխաների առցանց անվտանգության համընդհանուր հռչակագիրը (Լայնաշերտ կապի Հանձնաժողով):

Կանոնակարգ

Ստվերից դուրս. լույս սփռելով երեխաների սեռական բռնության և շահագործման ինդեքսի վրա, (2019) «The Economist Intelligence Unit»-ը միակ հենանիշային գործիքն է, որը վերլուծում է երկրների արձագանքը երեխաների սեռական բռնությանն ու շահագործմանը, ներառյալ թվային տարածքը և SCS ոլորտի արձագանքը դրան:

Երեխաների նկատմամբ բռնության բացահայտումն առցանց

Ստորև բերված են երեխաների նկատմամբ առցանց բռնության բացահայտման լավագույն փորձի օրինակներ:

ԻՆՀՈՓ (INHOPE). ԻՆՀՈՓ ցանցը ձևավորվել է 1999 թվականին և նախատեսված է առցանց ԵՄԲՆ-ի դեմ պայքարելու համար: Վերջին 20 տարիների ընթացքում ԻՆՀՈՓ-ն հաջողությամբ պայքարել է առցանց ԵՄԲՆ-ի աճի և աշխարհագրական տարածման դեմ: Այսօր ԻՆՀՈՓ թե՛ զձեռը տեղում աշխատում են բոլոր մայրցամաքներում՝ ստանալով բողոքներ և արագորեն հեռացնելով ԵՄԲՆ-ն համացանցից, ինչպես նաև տվյալների փոխանակում իրավապահ մարմինների հետ:

Microsoft PhotoDNA-ն ստեղծում է նկարների հեշեր(կողավորված արժեք) և դրանք համեմատում է արդեն իսկ հայտնաբերված և հաստատված ԵՍԲՆ հեշերի տվյալների բազայի հետ: Եթե այն համընկնում է, ապա պատկերն արգելափակվում է: Այնուամենայնիվ, այս գործիքը չի օգտագործում դեմքի ճանաչման տեխնոլոգիայում և չի կարող նույնականացնել նկարում պատկերված անձին կամ առարկային: Բայց *PhotoDNA for Video*-ն ստեղծման արդյունքում, ամեն ինչ նոր շրջադարձ ստացավ:

PhotoDNA for Video-ն բաժանում է տեսանյութն առանցքային շրջանակների և ստեղծում է հեշեր այդ սքրինշոթների համար: Նույնկերպ, ինչպես *PhotoDNA*-ն կարող է համընկնել փոփոխված պատկերի հետ, *PhotoDNA for Video*-ն ևս կարող է գտնել երեխաների սեռական շահագործման բովանդակություն՝ խմբագրված կամ միացված տեսանյութին, որն այլ կերպ կարող էր անվսաս թվալ:

Մայքրոսոֆթը նոր գործիք է թողարկել՝ հայտնաբերելու համար հանցագործներին, ովքեր բռնության նպատակով սիրահետում են երեխաներին առցանց չաթերում:

Արտեմիս նախագիծ-ը (Project Artemis) մշակվել է The Meet Group-ի, Roblox-ի, Kik-ի and Thorn –ի հետ համատեղ և հիմնված է Մայքրոսոֆթի արտոնագրված տեխնոլոգիայի վրա և Thorn –ի միջոցով անվճար հասանելի կլինի առցանց ծառայություններ մատուցող ընկերություններին, որոնք առաջարկում են չաթի ֆունկցիա:

Project Artemis-ը տեխնոլոգիական գործիք է, որն օգնում է ադմինիստրատորներին կարմիր դրոշներ բարձրացնել, երբ զրուցարաններում որևէ կերպ չափն անցնում են և ոչ պատշաճ վարքագիծ են ցուցաբերում: Սիրահետման հայտնաբերման այս տեխնիկան կկարողանա հայտնաբերել և հաղորդել հանցագործների մասին, ովքեր փորձում են գայթակղել երեխաներին սեռական նպատակներով:

Thorn-ը մշակել է կանխարգելիչ գովազդներ՝ ուղղված երեխաների սեռական բռնության նյութեր փնտրողներին, որոնք երեք տարվա ընթացքում միլիոնավոր անգամներ ցուցադրվել են որոնման չորս համակարգերում: Բացի այդ, գովազդները դիտվել են 3 տոկոս սեղմումներով այն մարդկանց կողմից, ովքեր օգնություն են փնտրել երեխաների առցանց շահագործման նյութեր որոնելուց հետո:

Thorn's Safer, գործիք, որը կարող է ուղղակիորեն տեղադրվել մասնավոր ընկերության հարթակում՝ ԵՍԲՆ-ը հայտնաբերելու, հեռացնելու և զեկուցելու համար:

Thorn Spotlight-ը ծրագիր է, որն ԱՄՆ-ի և Կանադայի բոլոր 50 նահանգների իրավապահներին հնարավորություն է տալիս արագացնել տուժածների նույնականացումը և ավելի քան 60 տոկոսով կրճատել հետաքննության ժամանակը:

Geebo-ն՝ գաղտնագրված կայք է, որը պարտավորված է հեռու պահել

սեռական շահագործումն իր հարթակից, երբեք չի ունեցել երեխաների սեռական շահագործման հետ կապված դեպք:

Google AI classifier-ը կարող է օգտագործվել ցանցերում, ծառայություններում և հարթակներում՝ երեխաների նկատմամբ սեռական բռնության նյութեր հայտնաբերելու համար: Այս գործիքը հասանելի է անվճար Գուգլ Content Safety API-ի գործիքակազմի միջոցով, որը մեծացնում է բովանդակությունը վերանայելու հնարավորությունը: Այս գործիքը կօգնի փորձագետներին ավելի մեծ մասշտաբով վերանայել նյութը և հետևել հանցագործներին՝ թիրախավորելով նկարները, որոնք նախկինում չեն նշվել որպես անօրինական նյութ: Այս տեխնոլոգիայի համագործումը կարագացնի նկարների նույնականացումը:

2015-ին Google-ն ընդլայնեց իր աշխատանքը հեշերի վրա՝ ներմուծելով իր տեսակի մեջ առաջին մատնահետքերի և տեսանյութերի համապատասխանեցման տեխնոլոգիան **YouTube**-ում, որը սկանավորում և նույնացնում է վերբեռնված տեսանյութերը, որոնք պարունակում են երեխաների սեռական բռնության մասին հայտնի նյութեր:

2019թ.-ի Երեխաների անվտանգության հեքաթոնի (Child Safety Hackathon) ժամանակ **Facebook**-ը հայտարարեց երկու տեխնոլոգիաների բաց աղբյուրի մասին, որոնք հայտնաբերում են նույնական կամ գրեթե նույնական լուսանկարներ և տեսանյութեր: Այս երկու ալգորիթմները հասանելի են GitHub-ում, որոնք թույլ են տալիս հեշփոխանակման համակարգերին «խոսել» միմյանց հետ՝ դարձնելով համակարգերը շատ ավելի հզոր:

ԻԴՀ-ի թեժ գիծը (IWF Hotline) մշտապես զգոն է ոչ միայն հասարակության անդամների հազարավոր բողոքներին հետևելով, որոնք կարող էին պատահաբար հանդիպել երեխաների սեռական բռնության առցանց նկարների, այլև կատարում է եզակի ակտիվ դեր՝ համացանցում այս անօրինական բովանդակությունն որոնելու գործում: Եթե թեժ գծերին հնարավորություն տրվի օգտագործել իրենց տեղեկատվությունը և կենտրոնացնել ռեսուրսները, ապա կարող է հայտնաբերվել և հեռացվել ավելի շատ բովանդակություն: Ավելին, ԻԴՀ-ը շարունակաբար աշխատում է Գուգլի, Մայքրոսոֆթի, Ֆեյսբուքի և իր անդամության մեջ գտնվող այլ ընկերությունների հետ՝ անընդհատ առաջ մղելով տեխնիկական սահմանները:

ԻԴՀ-ն առաջարկում է Հաշվետվությունների պորտալի լուծումը, որը թույլ է տալիս համացանցի օգտատերերին և այն երկրներին, որտեղ բացակայում են թեժ գծերը, երեխաների նկատմամբ կասկածվող սեռական բռնության մասին նկարների և տեսանյութերի մասին զեկուցել անմիջապես ԻԴՀ-ին՝ առցանց պորտալի միջոցով:

ԻԴՀ-ը և տուժածների աջակցության բարեգործական Մարի Քոլինս հիմնադրամը նպատակ ունեն համատեղ ստեղծել նոր արշավ, որը կոչ է անում երիտասարդներին հաղորդել 18 տարեկանից ցածր երեխաների կողմից ցանկացած ինքնուրույն ստեղծած սեռական նկարների կամ

տեսանյութերի մասին, որոնք նրանք կարող են հանդիպել առցանց զննման ժամանակ:

Ինտերպոլը ստեղծել է երեխաների սեռական շահագործման նկարների (ICSE) և տեսանյութերի տվյալների բազա, որը հետախուզական և հետաքննող գործիք է և թույլ է տալիս ավելի քան 50 երկրների մասնագիտացված քննիչներին փոխանակել երեխաների սեռական բռնության դեպքերի վերաբերյալ տվյալները: Փորձագետները կարող են հետքեր գտնել՝ վերլուծելով լուսանկարների և տեսանյութերի թվային, վիզուալ և աուդիո բովանդակությունը, տուժածներին նույնականացնել, բացահայտել դեպքերի համընկնումը, ինչպես նաև համատեղել իրենց ջանքերը՝ երեխաների սեռական բռնությունից տուժածներին հայտնաբերելու համար: Ներկայումս Ինտերպոլի երեխաների սեռական շահագործման տվյալների բազան պահում է ավելի քան 1,5 միլիոն նկար, տեսանյութ և օգնել է բացահայտել 19 400 տուժածների ամբողջ աշխարհում:

NetClean ProActive-ը ստորագրությունների համապատասխանության, հայտնաբերման և այլ ավգորիթմների վրա հիմնված ծրագրաշար է, որն ավտոմատ կերպով հայտնաբերում է երեխաների սեռական բռնության նկարներն ու տեսանյութերը ձեռնարկատիրական միջավայրերում:

Griffeye Brain-ն օգտագործում է արհեստական բանականությունը նախկինում չդասակարգված բովանդակությունը սկանավորելու, ԵՄԲՆ բովանդակության ատրիբուտների հետ համեմատելու և նշելու կասկածելիները՝ գործակալի կողմից ստուգման համար:

RAINN-ը գործարկել է սեռական ոտնձգությունների դեմ պայքարի ազգային թեժ գիծը՝ համագործակցելով 1000-ից ավելի տեղական սեռական ոտնձգությունների մասին հաշվետվություն տրամադրողների հետ ամբողջ երկրում և գործարկում է Պաշտպանության նախարարության *անվտանգ օգնության գիծը*: RAINN-ը նաև ծրագրեր է իրականացնում՝ կանխելու սեռական բռնությունը, օգնելու փրկվածներին և ապահովելու, որ հանցագործները պատասխանատվության ենթարկվեն:

Safehorizon նախագիծ-ը նորարարական գործիք է, որը շահագործվում է Կանադական կենտրոնի կողմից: Safehorizon-ը տուժածներին աջակցող շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը Նյու Յորքում բռնության զոհերի կողքին է 1978 թվականից:

Project Arachnid-ը նույնպես նորարարական գործիք է, որը գործարկվում է Կանադական կենտրոնի կողմից՝ պայքարելու համացանցում երեխաների սեռական բռնության նյութերի (ԵՄԲՆ) տարածման դեմ:

^[1]<http://www.oecd.org/internet/bridging-the-digital-gender-divide.pdf>

